

11379

891.99-192

U-22

1814
455

№ 455

98

Д. Бедикян
Панагорице

2011-05

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Խ. ՏԷՐ-ՅՈՎ ՀԱՆՆԻՑԵԱՆՑԻ

891.99-192

ժ-22

ԾԱՂԿԵՓՈՒՆՁ

A. Bedikian
44

Ամենասարածուած ընտիր երգերի
ժողովածու

Ծ Ո Յ Ի Հ Ա Մ Ա Ր



11379

Թ Ի Յ Լ Ի Ս

Էլեկտրոնային տպագրութեան «ՀԱՅԳՐԱԿ» ընկերութեան

1907

(246)

14 MAY 2013

20-1108

72.915

Ազատութեան համար զոհուող հայ հերոս
անմահ յիշատակին

Իզրիւ մի թարմ ԾԱՂԿԵՓՈՒՆԶ

Նւիրում է

Հրատարակիչը



2246-2002

ԷԸ

Այժմս երբ հասարակութեան գրգռած տրամադրութիւն իր բնական նորմալ սահմանին է հասել, դժւար թէ զուտ պատերազմական ինստիկաններ գրգռող բառերը կարողանան գոհացում տալ հայ ժողովրդի երգասիրութեան պահանջին: Եւ իսկապէս վերջին ժամանակներս «ժողովրդի մէջ տարածուած երգերի մեծ մասը, այն, մեծ մասը լուկ պակազով ասուած բառեր են, առանց մի ամփոփ և որոշ մտքի, առանց զեղարւեստական իւմօրի, անկապ և անհամ... այդ բառերի երգիչները զուրկ գազափարական որոշ իդէալից, զուրկ ճշմարիտ բանասեղծութեան մասին մի տարրական հասկացողութիւնից, իրանց «կուել, ջարդել, փշրել» խօսքերով, փշացնում են անգիտակից հասարակութեան միտքը, խեղաթիւրում նրա ճաշակը և շատ անգամ «ուժը շինելու փոխարէն աչքն էլ են հանում», այդ անմիտ երգերի ազդեցութեան տակ բազմաթիւ տգէտ բայց առոյգ և երիտասարդ կեանքերը վազածամ մահուան գիրկն են զլորում...

Անցեալ տարի գէպի Անի կատարած իմ մի ճանապարհորդութեան միջոցին առիթ ունենալով ծանօթանալու այդ վերոգրեալ բնորոշ տիպի մի անգրագէտ բանաստեղծի հետ, որն իր ջարդուած ջութակով շրջելով գիւղեր, հնչին վաճատրութեամբ երգեր էր թխում զանազան յայտնի և անյայտ հերոս-

ների յիշատակին, անձամբ համոզուեցի թէ ինչ կորստաբեր և վնասակար ազդեցութիւն են գործում այդ օրինակ երգերը, ժողովրդի անգիտակից մասսաների տրամադրութեան վրայ, ուստի այդ իսկ օրից որոշեցի հրատարակութեան տալ իմ այն տետրակին, որի մէջ՝ իբր մի մոլի երգասէր, ժամանակի ընթացքում իմ անձնականիս համար՝ հաւաքագրել եմ ամենայայտնի և տարածւած ազգային և գաղափարական երգերն ու մտիւններ, խաղերն ու տաղերը, լէ լէներն ու ջանգիւլումներ որ զրանով մի ծառայութիւն մատուցած լինեմ հայ երգասէր հասարակութեան, բայց նիւթականիս սղութիւնը ստիպեց ինձ չափաւորել իմ այդ ցանկութիւն և այժմս ես լոյս եմ ընծայում ոչ իմ ամբողջ ժողովածուն, այլ քաղածօրէն և խառն դասաւորութեամբ իբրև մի Մաղկեփունջ ծոցի երգարան, նւիրւած ազատութիւն համար զոհող հայ հերոսների անմահ յիշատակին:

Ինչպէս վերև յիշեցի, ժամանակի ընթացքում անձնականիս համար հաւաքագրած լինելով սոյն երգերը, ես անփոյթ եմ գտնել զէպի նրանց հեղինակներ, ուստի այժմ ես դժւարանում եմ որոշել սրանց շատերի սրը որոց լինելը, մանաւանդ որ մեծ մասամբ արտագրել իմ ժողովրդի բերանից, որոնք շատ քիչ հասկացողութիւն ունին հեղինակների մասին, միայն ինձ պարզ է այն, որ իմ երգարանի մէջ մտել են մեր բոլոր յայտնի և ժողովրդին սիրելի բանաստեղծների երգեր և ժողովրդական ամենանուրբ և գողտրիկ խաղերն ու տաղեր հարբբաններ և ջանգիւլումներ...

Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ,
Որ կուի դաշտում ընկաք անվեհեր,
Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք,
Որ ձեր արիւնով փրկէք հայրենիք.
Դուք սուր առնելով՝ սրով կամեցաք
Փշրել բռնութեան շղթան ու կապանք.
Բայց աւանդ ձեզ հետ մեռան ձեր իղձեր...
Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ:
Խաղաղութիւն ձեզ ազգի քաջ որդիք,
Սև հողն է այժմ ձեզ առել իւր գիրկ.
Ձեր արեամբ ցողած սար ու դաշտերում
Ահա խնդալից նոր կեանք է եռում.
Փթթել է դարձեալ գարուն ծաղկաւէտ,
Բայց աւանդ, դուք էլ չէք փթթիլ յաւէտ...
Յուրա գերեզմանն է ձեզ առել իւր գիրկ,
Խաղաղութիւն ձեզ, սուրբ քաջ որդիք:
Խաղաղութիւն ձեզ, հերոս եղբայրներ,
Թող չը վրդովին ձեր սուրբ ոսկորներ,
Ձեր վերջին կամքը՝ «անէծքը թշնամուն» —
Մենք միշտ կը պաշտենք որպէս սրբութիւն,
Անէծք ու վրէժ — դուք մեր միակ
Կը լինեն կեանքի հզօր նպատակ...
Քնեցէք խաղաղ, հերոս եղբայրներ,
Թող չը վրդովեն ձեր սուրբ ոսկորներ:

Ծ Ո Վ Ա Կ

Չայն տներ, սլ ծովակ ինչու լուսմ ես,
Ողբակից լինել չը կամիս դժբաղդիս,
Շարժեցէք զեփիւոք, ալիքը վէս-վէս,
Խաննեցէք արտասուք այս ջրերիս հետ:

Հայաստանի մէջ անձքերին վկայ
Սկզբից մինչև ցարդ խնդրեմ ինձ ասան,
Միթէ միշտ այսպէս կըմնայ Հայաստան,
Փշալից անապատ, երբեմն բուրաստան:

Միթէ միշտ այսպէս ազգս խղճալի
Կը լինի ծառայ օտար իշխանի,
Միթէ Աստուծոյ աթոռի մօտին,
Անարժան է հայ և հայի որդին:

Արդեօք գալու է մի օր ժամանակ
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ,
Եւ ամեն կողմից պանդուխտ հայ ազգը,
Դիմէ ղէպ իւր լուսնց սիրուն հայրենիք:

Դժար այդ, միայն Տեսուչդ վերին,
Կենդանացրու հայութեան հողին
Ծագիր նոցա դու քո լոյս զխառնութիւն,
Որով իբր էակ նոքա բանական,
Կը լինին գործքովք Տիրոջ փառարան:

Գ Ա Ր Ո Ի Ն

Ո՛հ, ինչ անուշ և ինչպէս զով,
Առաւօտուց փչես հովիկ,

Ծաղկանց վրայ գուրգուրալով,
Եւ մազերուն կուտին փափկիկ,
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գնան, անցիր սըրտէս ի բաց:

Ո՛հ, ինչ աղու և սրտազին
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Չմայլեցան ի քո ձայնիկ,
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնան, երգէ սըրտէս ի բաց:

Ո՛հ, ինչ մըմունջ հանես վտակ,
Ականակիտ և հանդարտիկ,
Քո հայելուդ մէջ անապակ
Նային զիրենք վարզն ու աղջիկ,
Բայց չես վտակ իմ հայրենեաց
Գնան, հոսէ սըրտէս ի բաց:

Թէպէտ թռչնիկ ու հոգի Հայոց
Աւերակաց թռչին վերայ,
Թէպէտ պղտոր վտակն Հայոց:
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են հայրենեաց,
Նոքա չերթան սըրտէս ի բաց:

ԻՏԱԼԱՅԻ ԱՂԶԿԱՅ ԵՐԳ

(1859 թ.)

«Մեր հայրենիք թշուտ, անտէր,
Մեր թշնամուց ստնակոխ,
Իւր որդիքը արդ կանչում է,
Հանել իւր վրէժ, քէն ու սխ:

X «Մեր հայրենիք շղթաներով
 Այսքան տարի կապկապած,
 Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
 Պիտի լինի ազատւած:

X «Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,
 Որ իմ ձեռքով գործեցի,
 Գիշերները ես քուն չեղայ
 Արտասունքով լուացի:

«Նայիր նորան, երեք գունով,
 Նուիրական մեր նշան,
 Թո՛ղ փողփողի թշնամու դէմ
 Թո՛ղ կործանւի Աւստրիան:

«Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
 Պատերազմի գործերում
 Կարէ օգնել իւր եղբօրը
 Չանց չարեցի քո սիրուն:

«Ահա իմ գործ, ահա դրօշ,
 Շուտ ձի հեծիր քաջի պէս,
 Գնա՛ս փրկել մեր հայրենիք—
 Պատերազմի վառ հանդէս:

X «Ամենայն տեղ մահը մի է,
 Մարդ մի անգամ պիտ մեռնի.
 Բայց երանի՛, որ իւր ազգի
 Ազատութեան կը գոհւի:

«Գնա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,
 Ազգի սէրը քաջալիւր.
 Գնա՛ս թէև չեմ կարող գալ,
 Բայց իմ հոգին քեզ ընկեր:

«Գնա՛, մեռի՛ր դու քաջի պէս,
 Թող չտեսնէ թշնամին

Քո թիկունքը, թո՛ն նա չասէղ
 Թէ՛ վատ է իտալացին»:

Ասաց տուեց, օրիորդը
 Իւր եղբօրը մի դրօշ,
 Մետաքսից էր, աղնիւ գործած,
 Ուր երեք գոյն կան որոշ:

Եղբայրն առաւ և ողջունեց
 Իւր սիրական քնքուշ քոյր,
 Առաւ զէնքը, սուր, հրացան,
 Հեծաւ իւր ձին սևաթոյր:

—Քոյրիկ,—կանչեց քաջ պատանին—

Մնաս բարեալ սիրական,
 Այս դրօշակին պիտի նայի
 Ամբողջ բանակ իտալեան:

Նա սուրբ, է ինձ, երբ մկրտւած
 Արտասունքով ու կնքած,
 Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
 Հայրենիքի նւիրված:

Թէ՛ մեռնիմ, դու մի սգար,
 Իմացիր որ տարեցի
 Դէպի մահու արբայութիւն
 Իմ հետ քանի թշնամի:

Ասաց, վազեց դէպի հանդէս
 Աւստրիացւոց յանդիման,
 Իւր արիւնով գնել յաւէժ,
 Ազատութիւն իտալեան:

Ո՛հ, իմ սիրտը կտրատուում է
 Տեսանելով այսպէս սէր
 Դէպի թշուառ մի հայրենիք
 Որ ոտնակոխ եղած էր:

Ո՛հ... արտասուք ինձ խեղդում են,
Այլ չեմ կարող բան խօսել,
Զէ... թշւառ չէ Իտալիան
Եթէ կանայք այսպէս են:

5.

Կ Ռ Ո Ի Ն Կ

Կոռնկ ուստի՞ կուգաս ծառայ եմ ձայնիդ,
Կոռնկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս,
Միօվագիր երամիդ շուտով կը հասնիս,
Կոռնկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս:

Թողեր եմ ու եկել մըքերս ու այգիս,
Քանի որ միս կանեմ կու քաղւի հողիս,
Կոռնկ պահ մի կացիր ձայնիկդ ի հողիս,
Կոռնկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս:

Քեզ խաբար հարցնողին չես տարիր տալապ,
Ձայնիկդ անուշ կուգայ քանզ ջրի տօլապ,
Կոռնկ Պաղդադ իջնուս կամ թէ ի Հալապ,
Կոռնկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս:

Ոչ զլուր գիտեմ և ոչ կիրակին,
Չարկած է զիս շամփուր բռնած կրակին,
Այրիլս չեմ հոգար ձեզնէ կարօտ եմ,
Կոռնկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս:

Պաղդադու կուգաս կերթուս ի Մահրաթ.
Թղթիկ մը գրեմ տամ քեզ ամանաթ,
Աստուած թող վկայ լինի քս վրադ,
Տարեալ հասոյցես դայն իմ սիրելեաց:

Գրե՛լ եմ մէջ թղթիս թէ հոս մնացի,
Օրիկն ի օրեր աչերս չը բացի:

Սիրելիքս ձեզանից կարօտ մնացի,
Կոռնկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս:

Մրտներս կամեցաւ կրանք գնացինք,
Այս սուտ աստուորիս դարդերն իմացանք,
Աղու հացակեր մարդկանց կարօտ մնացինք
Կոռնկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս:

Աստուորիս բաներ կամաց կամաց է,
Եթէ Աստուած լսէ դռնակ մը բացէ,
Ղարիպին սիրտն է սուզ աչքերն ի լաց է,
Կոռնկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս:

Աստուած, քեզանէ խնդրեմ մուրվէթ ու քէրէմ,
Ղարիպին սիրտն է խոց ջիկարն է վէրէմ,
Կերած հացն է լեղի ու ջուրն է հէրէմ,
Կոռնկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս:

Աշուն է մօտեցել գնալու ես թէտրիբ,
Երամ ես ժողովիր հազարներ ու ըլուր,
Ինձ պատասխան չուիր կար ու գնացիր,
Կոռնկ մեր աշխարհէն գնա՛ հեռացիր:

6

Ա Ր Ա Չ

Արագն եկաւ լափին տալով,
Ժեռ քարերին ափին տալով,
Ո՛րտեղ թաղեմ ես իմ դարդը,
Չոր զլուխս, տափին տալով:
Ա՛յ իմ Արագ, ջուրդ վարար,
Սիրուն եարիս եարար տեսմը,
Ես չհասայ իմ մուրազին,
Արագ, եարար կարօտս առմը:

Ամպերն ընկան Մասիս սարին,
 Կարօտ մնացի ես իմ ետրին,
 Աստուած սիրես, էրուած սրտիս
 Զուղայ բերես եկող տարին:

Գիշերն անքուն գիր կգրեմ,
 Արտասուքս գետ կը շինեմ,
 Արնդ, ծէգը ջրիդ չառած,
 Իմ սև դարձը քեզ կբերեմ:

Կասես շողքը քարին ընկաւ,
 Կրակն իմ սրտիս մէջն ընկաւ,
 Կամար ունքից, թուխ աչքերից,
 Յաւն իմ ջիւան ջանիս ընկաւ:

7

Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Երբոր բացւին դռներն յուսոյ,
 Եւ մեր յերկրէն փախ տայ ձմեռ,
 Չքնաղ երկինս մերս Արմենիոյ,
 Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր:
 Երբոր ծիծառն ի բոյն դառնայ,
 Երբոր ծառերն հազնին տերև,
 Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
 Աշխարհ որ ինձ ետուր արև:

Տեսի դաշտերն Ոնուրիոյ,
 Լեռն Լիբանան և իւր մայրեր,
 Տեսի գերկինս Իտալիոյ,
 Վենետիկը իւր կոնտոլներ:
 Կզգի նման չիք մեր Կիպրեայ,
 Եւ ոչ մէկ վայր է արդարև.

Յանկամ տեսնել զիմ Կիլիկա,
 Աշխարհ որ ինձ ետուր արև:
 Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
 Ուր ամենայն իղձ կ'աւարտի,
 Հասակ մը ուր հէգին ի տեսչ,
 Յիշատակաց իւր կարօտի.
 Յորժամ քնարս իմ ցրտանայ,
 Սիրոյն տալով վերջին բարևս.
 Երթամ ննջեմ յիմ Կիլիկիա
 Աշխարհ որ ինձ ետուր արև:

8

ԴԱՐԴԱ ԼԱՅԷՔ

Դարդս լացէք, սարի սմբուլ,
 Ալւան ալւան ծաղիկներ.
 Դարդս լացէք, բաղի բլբուլ,
 Ամպշող երկնուց զով հովեր...

Երկինք-գետինք զլիսուս մթնան,
 Անտուն անտէր կուլամ ես.
 Եարիս տարան ջանիս տարան,
 Հոնգուր-հոնգուր կուլամ ես...

Ա՛խ. եարս ինձի հանեց սրտէն,
 Անձար թողեց ու գնաց.
 Սրտիս սաւղէն—խորունկ ետրէն
 Անդեղ թողեց ու գնաց...

Դարդս լացէք, սարի սմբուլ,
 Ալւան ալւան ծաղիկներ.
 Դարդս լացէք, բաղի բլբուլ,
 Անպշող երկնուց զով հովեր...

ԱՐՄՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՆՔԸ

Մայր-Արաքսի ափերով
 Քայլամուրը գընում եմ,
 Հին հին դարուց յիշատակ
 Արեաց մէջը պըտորում եմ:
 Բայց նոքա միշտ յեղյեղուկ
 Պըզտոր ջրով եզերքին
 Դարիւ դարիւ խփելով
 Փախչում էին լալազին:
 —Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ
 Պար չես բռնում մանկական,
 Դու դեռ ծովը չի հասած
 Սըզաւոր ես ինձ նըման:
 Ինչո՞ւ արցունք ցայտում են
 Քու սէգ, հըպարտ աչերից,
 Ինչո՞ւ արագ փախչում ես
 Այդ հարազատ ափերից:
 Մի պըզտորիլ յատակըդ,
 Հանդարտ հոսէ խայտալով,—
 Մանկութիւնը քու կարճ է,
 Շուտ կը հասնիս դէպի ծով:
 Վարդի թըփեր թո՞ղ բըմնին
 Քու հիւրընակալ ափի մօտ,
 Սոխակները նոցա մէջ
 Երգեն մինչև առաւօտ:
 Մշտազալար ուռիներ
 Սառ ցոցի մէջ քու ջըրին

ձկուն սստն ու տերև
 Թո՞ղ թաց անեն տապ օրին:
 Ափերիդ մօտ երգելու
 Հովիւք թող դան համարձակ,
 Դառն ու ուլը քու վըճիտ
 Զուրը մըտնին միշտ արձակ:—
 Մէջըը ուսցուց Արաքսը,
 Փըփուր հանեց իր տակից,
 Ամպի նըման գոռալով
 Էսպէս խօսեց յատակից:
 «Սիրգնիս, անմիտ պատանի,
 Նիրճըս ինչո՞ւ դարևոր
 Վըզովում ես նորոգում»
 Ի՞մ ցաւերը բիւրաւոր:
 «Սիրելիի մահից յետ
 Ե՞րբ ես տեսել, որ այրին,
 Ոտքից գըլուէս պըճնուի
 Իր զարդերով թանկագին:
 «Որի՞ համար զարդարուեմ,
 Որի՞ աչքը հըպաւորեմ,—
 Շատերն ինձ են ատելի,
 Շատերին ես օտար եմ...
 «Ի՞մ ազգակից գիժ Կուրը
 Թէև այրի ինձ նման,
 Ստրկօրէն տանում է,
 Դայթակղիչի կուռ շղթան:
 «Բայց նա ինձ հարկաւոր
 Ես հայ հայիս կըմանչում,
 Օտար փեսայ չուզեցի
 Ես միշտ այրի կըմանիս»

2246 - 4002



«Կար ժամանակ, որ ես էլ՝
Շըքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պըշրանքով,
Փախչում էի փեռէս:

«Յատակս պարզ ու վըճիտ,
Կոհակներըս ոլորուն,
Լուսաբերը մինչև այգ
Ջըրիս միջին էր լողում:

«Ի՞նչըս սընաց էս օրից,
Ո՞ր ջըրամօտ գեղերըս,
Ո՞րը իմ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերըս:

«Տուրքը ջըրի ամեն օր
Իր սուրբ ծոցէն Աբարատ
Մայրախընամ ինձ սնունդ
Պարգևում է լիառատ:

«Բայց ես այն սուրբ ջըրերով
Սուրբ Ակոբի աղբիւրին
Պիտի ցօղեմ արտորանքն
Իմ ատելի օտարին:

«Կամ՝ կենսատու իմ ջըրով,
Ափերիս մօտ կըկըզած,
Իւր նամազը կատարէ
Թուրքը կամ Պարսիկ հոտած:

«Մինչ իմ որդիք,— ո՞վ գիտէ—
Ծարաւ, նօթի, անտէրունչ
Օտար աշխարհ՝ յածում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ...»

«Հեռու հեռու քըշեցին
Բընիկ ազգն իմ Հայկեան,

Նորա տեղը ինձ տուին
Ազգ անկըրօն, մոլեկան:

«Դոցան համար զարդարեմ
Իմ հիւրընկալ փեռը,
Եւ կամ դոցան հրապուրեմ
Ճըպոտտ, պըլշած աչերը:

«Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մընան պանդուխտ,—
Ինձ միշտ սըզուր կը տեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...»

էլ չի խօսեց Աբաքսը,
Յորձանք տուեց ահագին.
Օղակ օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին:

Ես լսեցի մի անոյշ ձայն,—
Իմ ծերացած մօր մօտ էր.

Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց փոռոս, որ երազ էր:

Կարկաշահոս աղբիւր այն տեղ,
Թաւալում էր մարգարիտ.—
Նա յստակ էր որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղէգին տխուր, մայրենի
Յիշեց մանկութեան օրեր.—
Մօրս համբոյրն ես զգացի,—
Ա՛խ, փոսոս որ երազ էր:

Կուրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերս սրբեց—շատ թաց էր,—
Բայց արտասուք զնում էին,
Ա՛խ, այդ ինչո՞ւ երազ էր:

11

Ա.ԼԱԳԵԱԶԻՆ

Սև-մութ ամպեր ճակատիդ պիզան,
Գուման հագար, Ալագենիդ,
Սրտումս արև հէջ չի ծաղկում,
Միբոս էլ դուման, Ալագենիդ...

Չառ փէշերդ անցայ տեսայ՝
Առանց դարդի սիրտ չը կայ,
Ա՛խ, իմ դարդը, Չան Ալագենիդ,
Իմ դարդիս պէս հէջ չը կայ...

—Է՛յ, Մանտաշի նշխուն հաւքեր,
Իմ դարդս որ ձերն եղնէր,
Չեր էդ զնու-վնու խաս փետուրներ,
Կը սենային, քանց պիշեր.

—Է՛յ, Մանտաշի մարմանդ հովեր,
Իմ դարդս որ ձերն եղնէր,
Չեր նուշ-անուշ ծաղկանց հոտը
Թոյն ու տօթի կը փոխէր...

Է՛յ վնիս, կոտորան իմ թևերս,
Ընկայ գիրկդ, Ալագենիդ,
Ա՛խ, սեծ սրտիդ սըղմեմ սիրտս,—
Լամ, արուն-լամ, Ալագենիդ...

12

ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

«Հայրիկ, ասաց դուստրը հօրը,
Կապոյտ երկնքի վերայ
Ո՞րքան աստղեր փայլում են վառ,
Ասես համար, թիւ չկայ:
Ասում են որ՝ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքում,
Ճշմարիտ է, ասա, հայրիկ,
Իմը սրտեղ է փայլում».

—Այն, դստրիկ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար,
Եւ մեզանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իւր համար:

«Հայրիկ տես տես, ասաղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անդամ այլ չերևեց»:

—Ո՛հ, իմ դստրիկ, հանգիստ կացիր,
Դա սեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում, իւր կեանքումը
Խիղճ ասածը չըզիտէր:

Աղքատները նորա դռնից
Գիշեր ցերեկ հալածված.
Մի մարդ չկար նորան ծանօթ,
Որ չը լինէր վշտացած:

«Հայրիկ, դարձեալ թռաւ մի աստղ,
Վայր ընկաւ նա երկնքից.

Հայրիկ ովք՝ աստղն էր արդեօք,
Որ զրկւեցաւ իւր տեղից»:

—Ո՛հ, դատրիկս, հանգիստ կացիր,
Կեղծաւորի դա աստղ էր,
Որ իւր օրում ուղիղ մի խօսք
Մարդու երբէք ասած չէր:

Փարիսական իւր ձևերով
Աշխարհ խաբեց, զարմացուց.
Այդ պատճառով Աստուած նորա
Աստղի լոյսը խաւարցուց:

«Հայրիկ, տես, տես, միւս աստղ թռաւ
Եւ գիծ անգամ չը թողեց.
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց:

—Ո՛հ, սիրական, խաղաղ մնա,
Բռնակալի դա աստղ էր.
Որ աշխարհը իւրեան գերի
Ծնած օրից կարծել էր:

Շատ հալածանք, շատ նեղութիւն
Պատճառեց նա իւր կեանքում:
Շատ տուն քանդեց, շատ մարդ զրկեց,
Գութ չունեցաւ իւր սրտում:

«Ապա այն ինչ աստղ է, հայրիկ,
Որ այնպէս պարզ վառվում է.
Նորա մաքուր պայծառ լոյսը
Չորս կողմը բազ բռնել է»:

—Ո՛հ, իմ դատրիկ, աղօթք արա,
Դա ծերունու մի աստղ է,
Որ իւր կեանքում ոչ մի մարդու
Ոչինչ վնաս տուած չէ:

Այն լուսաւոր բակն է նորա
Առաքինի գործերը.

Աղօթք արա, որ երկարին
Նորա կեանքի թելերը:

Շատ օր չանցաւ, երկնքիցը
Մի այլ վառ աստղ պակասեց.
Ովք՝ աստղիկն էր, որ ընկաւ,
Բան հարցանող չերևեց:

Մինչդեռ լուսինն արծաթափայլ
Լոյս էր տալիս գիշերին,
Խորհրդաւոր մինչ տիրել էր
Անվրդով, խոր լուռութիւն,

Մի սրտաթափ, մազերն արձակ
Վազեց աղջիկ սգաւոր
Դէպի դեղի գերեզմանքը.
Ծունկ չոքեց մի շիրմի մօտ:

«Հայրիկ, աստղիկդ չէ փայլում,
Դու յաւիտեան քնեցիր.
Աւ ինձ քո մօտ, քո ծոց, քո գիրկ,
Ինչո՞ւ անտէր թողեցիր:

Իմ աստղիկն ասա նոյնպէս,
Որ չը փայլի՝ հերիք է.
Այս աշխարհը ինձ առանց բեզ,
Մութն ու խաւար մի բանտ է»:

Մի մարդ չկար, որ նկատէր
Որ հետեւալ գիշերին
Պակասեցաւ երկնքիցը
Մի պայծառ աստղ խնդագին:

Երբորդ օրը շատ սգաւորք
Փորեցին մի գերեզման,

Ուր թաղւեցաւ իւր հօր մօտին

Մարմինը խեղճ աղջկան:

«Հայրիկ, տես, տես, աստղը թռաւ,

Յետքից պայծառ գիծ թողեց,

Աստղիկն ընկաւ երկնքիցը,

Միւս անգամ այլ չեբեեց»...

13

ՊԱՐԶԻՐ ԱՂԲԻՒՐ

Պարզիր աղբււր, պարզիր քեզնից ջուր տանեմ,

Պարզիր, պարզիր բէկի տղին ջուր տանեմ:

Աղբււր, գիտե՞ս բիւրզը մեզի Բնչ կանէ,

Կը կողոպտէ, կը չարչարէ, կսպանէ:

Կար ժամանակ, որ մենք էլ ազատ էինք,

Մեր սեփական թագաւորներ ունէինք:

Գահ ու փառքից, ազատ կեանքից զրկւեցինք,

Արիւնարբու թշնամու ձեռք մատնւեցինք:

Դէ՛հ, շուտ պարզիր բէկի տղին ջուր տանիմ,

Պարզիր. պարզիր. խան-Մուրազին ջուր տանիմ:

14

ՏՈՒՐ ՉԵՌՔԻ ԵՂԲԱՅԻՐ

Տուր ձեռքդ, եղբայր, ժամ է շարժելու,

Ժամ է՝ ժամ առաջ ոտքի ելնելու.

Հասել է արդէն, հայերնու օրհաս,

Լինել-չլինել՝ մեզնից է կախւած...

Տուր ձեռքդ, եղբայր, հերիք համբերենք,

Հերիք, ուրիշից օգնութիւն հայցենք,

Մենք ենք տանջւողը, մենք չարչարւողը,

Մենք պիտի լինենք մեզի փրկողը...

Մեր վեհ հայրինիք դարերով ճնշւած.

Դարեր շատ ու շատ մեր արեամբ ներկուած.

Պահանջէ մեզի արիւնով մաքրել,

Թշնամու արեամբ մեր դաշտ ու լեռներ...

Ըշտապիր, եղբայր, ան, ահա քեզ զէնք,

Սորանով միայն փրկւելու ենք մենք,

Այս է գործածում մեր դէմ թշնամին,

Այս պիտի լինի պաշտպան մեր անձին:

Այնտեղ է քո կեանք. այնտեղ է քո մահ,

Ելիր ընդ առաջ, ելիր դու անահ,

Արդարութիւնն է գործին նշանակ,

Այնտեղ՝ կրկանգնէ նա իւր յաղթանակ:

Ըշտապիր, քանի դեռ չէ անագան...

Քեզ կը հետևի ամբողջ Հայաստան

Ազատութիւնն է գործի զբաւական.

Այնտեղ կստանաս պսակ պատւական:

15

ԱԶՆԻՒ ԸՆԿԵՐ

Ազնիւ՝ ընկեր, մեռանում եմ,

Բայց հանգիստ եմ ես հոգով,

Իմ թշնամիք ես օրհնում եմ,

Օրհնում եմ քեզ Աստուծով:

Հեղանում եմ, անդին ընկեր,

Չգնահատւած ոչ ոքից:

Բայց հաւաստեալ անձնանրէր,

Ազգիս մշակ կ'հաշտիմ:

Ազնիւ ընկեր, չը մոռանամ,
 Անդաւաճան, ջերմ սիրով
 Ես սիրել եմ իմ հայրենիք,—
 Գնա և դու նոյն շաւղով:
 Խեղճութիւնը հայոց ազգի
 Կարեկցարար մասծիր.
 Ոսկէ գրքոյկն Եղիշէի
 Քաջ առաջնորդ քեզ ընտրիր:
 Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան
 Ազատ կամքով ու խղճով.
 Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,
 Իւր խնկելի քաջերով:
 Հայրենիք,—սեղան սրբութեան—
 Ես Աստուծոյ առաջև
 Շատ կ'աղաչեմ, շատ կ'արտասուեմ,
 Որ ծագէ քեզ նոր արև:
 Իմ մտերիմ, մահըս մօտ է,
 Բայց հանգիստ եմ ես հոգևով.
 Որովհետև խիղճս արդար է,
 Ճշմարտութեան ջատագով:

Բիւլբուլն զարթնել է վարդին ծոցումն,
 Դէ, ննջիր սիրելիս, ասում եմ լայ լայ,
 Դու զանհիշան նախշած օրօրոցումն
 Դէ, ննջիր, մարալս, ասում եմ լայ, լայ:
 Եօրդանջէդ ալխարայ, բաւթով զարդարած,
 Իօշակդ զանաւուզ բանդուում կարած

Բարձդ դեղին աթլադ, դոյից լքցըրած.
 Դէ, ննջիր, սիրելիս, ասում եմ լայ լայ:
 Իստակ գիւլաբաթուն կապանքիդ քողն,
 Տասն ու չորս տարեկան է նորս գործողն,
 Մանր արմաստներով ականջիդ օղն,
 Դէ ննջիր, սիրելիս ասում եմ լայ լայ:
 Հարիւր մատաղ մորթամ, մինչի քեզ ճարեցիմ,
 Թառակիդ զանազան ոսկիք կարեցիմ,
 Ինչքան ինձի նեղացրար՝ անէ՛ծք չարեցիմ,
 Դէ ննջիր մարալս, ասում եմ լայ լայ:
 Տէրն քեզ պարգևի հարիւր տարի կեանք
 Անուանդ զարդարեն այլքն գովասանք,
 Խելօք որդի իլնես ծնողացդ պարծանք.
 Դէ ննջիր, հոգեակս ասում եմ լայ լայ:
 Մայիֆի Սերովբէն քեզի կնքաւոր,
 Պսակդ անսնալին էլած ուխտաւոր,
 Աստուած քեզ նորա հետ պահի բաղդաւոր,
 Դէ ննջիր, մարալս ասում եմ լայ լայ:
 Չեռքիդ խաղալիքն է կենացս թե՛ն,
 Մին օր առանց քեզի տանի ինձ սե՛ն,
 Չարկեարի միայնակ Ռափայէ՛ն,
 Դէ, ննջիր սիրելիս ասում եմ լայ լայ:

Մէկ չէղաւ որ իմանար դարդերս
 Քնքոյճ ձեռքով դարման անէր վէրքերիս,
 Մէկ չէղաւ որ գուրգուրէր վարդերս,
 Անուշ բոյր տար, վարդի գոյն տար երգերիս:

Կեանքս կտամ սրտից բղխած համբոյրին,
Ա՛խ թէ մէկը ինձ հասկանար ու սիրէր,
Ինչ կայ երկրում և սրբազան և անգին,
Քան թէ գոհել քան թէ լինել անձնէր...

Բայց ես կեանքում որբ մնացի ու անտէր,
Մէկը չեղաւ որ իմանար դարդերս,
Սիրող հոգիս ծարաւ մնաց ու անտէր.

Մէկը չեղաւ որ գուրգուրէր վարդերս:
Համբոյրներիս վառ գարունը թօշնեցաւ,
Խոր վէրքերս բացւած անբուժ մնացին
Դալար սրտիս սուրբ արցունք քարացաւ,
...Ու ծանրացաւ սրտիս վրայ դառնագին:

Մեռիք գնան... առանց քեզ էլ կեանքը կայ,
Ուրիշ վարդեր կը շողշողան գարունքին,
Ուրիշ շրթունք գուցէ վաղը կամ հիմա,
Կը համբուրէ քո սիրածին կաթոգին:

Մէկը չեղաւ որ իմանար դարդերս,
Քնքոյշ ձեռքով դարման անէր վէրքերիս,
Մէկը չեղաւ, որ գուրգուրէր վարդերս,
Անուշ բոյր տար, վարդի գոյն տար երգերիս:

ԻՆՁ ՀԱՄԱՐ ՁԷ

Ինձ համար չէ գարնան գալը,
Ինձ համար չէ ծառի ծաղկիլը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ոչ մի բերկրանք չեն ինձ համար:

Ինձ համար չէ կենաց բաղբը,
Ինձ համար չէ երջանկութիւնը,

Եւ մրայօն կուսի աչքերը,
Նոցա արցունք չեն ինձ համար:
Ինձ համար չէ փայլուն լուսնի,
Անտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար:
Ինձ համար չէ բարեկամաց,
Մէկ տեղ սիրով տօն կատարելը,
Զատիկ օրւայ ուրախ ասելը,
«Քրիստոս յարեաւ» չէ ինձ համար:
Ինձ համար չէ ծնողաց լայր,
Ինձ համար չէ աղջկայ տըխրիլը,
Գերեզմանիս վրայ արտասուիլը,
Բարեկամաց՝ չէ ինձ համար:
Բայց ինձ համար կուգայ ժամը,
Կերթամ թշնամեաց պատերազմը,
Եւ մահաոխիթ սպանիչ գընդակը,
Անդ պատրաստուած է ինձ համար:

ՍԻՐԱԿԱՆԻ ԳՅՆԳԱՏԸ

Ես քեզ սիրի, որ դու ընծի չը թարկես,
Եթէ թարկես՝ հոգով մարմնովդ խարկես,
Անիծիմ, տաս տարի տեղումդ պարկես,
Եօրդանի մէջ տքայ կողերդ, աղջիկ:

Ում հետ էլ որ երթամ՝ հետդ չվարւի,
Պսակուելուդ օրը՝ քօղքդ սե կարւի,
Հօրդ տուն ու դուռը սե քարով շարուի,
Ա՛խ ու վախով մնայ ախպէրդ, աղջիկ:

Մօրդ լեզուն ուռի, բերանը փակելի,
Քառասուն օր տանջելի՝ հողին չը քակելի,
Ընծնէն դայրի հետդ ով որ պսակելի,
Իրեք օր չը վելէ սէրդ, այ աղջիկ:

Զգտնիս խամ կտաւ էնես արխալուդ,
Լէն բօլ աշխարհքի մէջ օրըդ անցնի սուդ,
Հացդ կորեկ էղնի, գարին հետը կուդ,
Օձի պէս սակաւի քո կերդ, աղջիկ:

Ես մի խեղճ տղայ եմ, էրի քեզ գիւման,
Աստուածածինն էնէ բու մօրդ դիւան,
Իր կենաց մէջը նա՛ չունենայ սաղ ջան,
Որ ինձ էրաւ տնից դարբէզար աղջիկ:

Պտտճանն ի՛նչ էր, որ չհաւնաք դուք ընձի,
Կարօտ էք դովլաթի, փափանգ էք գանձի,
Առաջ խօսք տուողի լեզուն պսպանձի,
Տանողդ չը տեսնի քու խէրդ, աղջիկ:

Ալագեօզ աչքերդ, կամար ունքերդ,
Ուզում եմ հեռանամ՝ չի թողնում սէրդ,
Քեզի ընձնէն էրաւ քու քեաֆիր մէրդ,
Խնդրում եմ շատանայ վէրքերդ, աղջիկ:

Ես Զուլալ-օղլին եմ, դարգովդ եմ կեցի,
Գիշերն եմ մտածի, ցերեկն եմ լացի,
Տասը տարի խաթրիդ ազապ մնացի,
Ծակծկի ծոցիդ մէջ ծծերդ աղջիկ:

Հայոց աղջիկներ՝ ձեր հոգուն մատաղ.
Երբ միտս էք գալիս՝ ասում եմ ես անխ,

Հալվում եմ, հալվում օտարութեան մէջ,
Ա՛խ, սիրտս խորովում, ցաւիս չիկայ վերջ:

Երբ կարմիր գինին բաժակումս ածած
Մեղանիս վերայ առաջս է դըրած,
Աչքըս ակամայ վըրան եմ ձգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում:

Տեսնում եմ և, անխ, միտքս է մոլորվում,
Դառն արտասունքով աչքըս պըղտորում,
Կարծում եմ բոլոր աշխարհը մթնեց,
Արևն էլ խաւրեց, էնդուր որ տխրեց:

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,
Ձեր սիրուն աչերն էլ երբ կը տեսնեմ,
էն սև սև աչքերն՝ սև ունքով պատած՝
Կարծես՝ երկնային դալամով քաշած:

էն սև սև աչերն, որ շատին սպանեց,
Բայց էլի շատին դժոխքից հանեց,
Ես էլ կենդանի տեղովս եմ մեռած,
Առանց կրակի էրած, խսրոված:

էլ երբ կը տեսնեմ ես ձեզ ման գալիս,
Բաղ ու բաղչայում սէյրան անելիս,
Ինչտեղ ամօթից վարդն էլ է դեղնում,
Երբ որ ձեր զարմիր թըշերը տեսնում:

Բըլբուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
Թռչում է, թռչում, ամպերում կորչում,
Եւ իր Արարչին տեսածն ասելիս
Փանք քեզ, Տէր Աստուած փանք քեզ է կանչում:

Հայոց աղջիկներ՝ ի՛նչ անուն տամ ձեզ,
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,
Թէ մարդ անւանեմ՝ բէզամաղ կ'անեմ,
Ուրեմն ի՛նչ անեմ, մոլորուած եմ ես:

Մոլորուած եմ ես օտար աշխարում,
 Հաւասն էլ օտար, օտար և լեզուն,
 Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նման,
 Հայոց աղջիկներ՝ դուք էք աննման:

Ձեր սէրն է միայն սրբտու մս պահած,
 Ձեր սիրով միայն եմ ես կենդանի,
 Ձեր սէրը միայն էս կեանքս մաշած
 Օտարութեան մէջ դեռ կը պահպանի:

21

Շ Ա Ր Ք Ի

Այսքան տարի դու ննջեցիր, բնւ է, բնւ,
 Տխրութիւնդ ողջ հայերիս ցաւ է ցաւ,
 Արե եկաւ քո գլխիցդ անցկացաւ,

Ձարթիբ, դարթիբ, իմ աննման անձկալի,
 Տեսութիւնդ է ամենիս ցանկալի:

Գարունն էկաւ, ձմրան դուռը գոցեցաւ,
 Սպառելով մեր սրտերը խոցեցաւ.
 Գիշերն անցաւ, առաւօտը բացեցաւ.

Ձարթիբ, դարթիբ, իմ աննման անձկալի,
 Տեսութիւնդ է ամենիս ցանկալի:

Աղաչում եմ խնդրում մայրիկ, արթնացիր,
 Քո արարքէդ դու ամաշիր, դու երկիր,
 Քոյրերիցդ ողջիցը ես մընացիր,

Ձարթիբ, դարթիբ, իմ աննման անձկալի,
 Տեսութիւնդ է ամենիս ցանկալի:

22

ՊԼՊՈՒԼՆ ԱԻԱՐԱՅՐԻ

Ո՛վ դու բարեկամ այրած սրտերու,
 Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
 Երգէ պլլպուլիկդ, երգէ ի սարէդ,
 Չանմահ քաջն Հայոց երգէ հոգոյս հեռ.

Թագէի վսնուց ձէնիկդ ինձ դիպաւ,
 Սրտիկս՝ որ ի խաչն էր կիպ՝ թունտ առաւ.
 Ի խաչին թեէն թոայ ու հասայ,
 Գոայ դքեզ ի դաշտ քաջին Վարդանայ:

Պլպուլ, քեզ համար մեր հարքն ասացին,
 Թէ չէ հաւ՝ պլլպուլ մեր Աւարայրին
 Եղիշեայ հոգեակն է քաղցրագրուցիկ,
 Որ զՎարդան ի վարդը տեսնու կարմրիկ:
 Չմեռն յանապատ կու գնայ կայ ի լաց,
 Յարտազ գայ դարունն ի թուփ վարդենեաց,
 Երգել ու կարչել յնղիշէի ձայն.
 Թէ պատասխանիկ մ՝ արդեօք տայ Վարդան:

23

ԽԱՆԱՍՈՐԻ ՄԱՐՏԸ

Կարկուտ տեղաց Խանասորի դաշտումը,
 Ճիղային էր դաշնակցական՝ վրէժ լուծում հովտումը:
 Սոսկաց քիւրդը՝ քնաթաթախ մարդիկցին,
 Ձէր երազում ջնջուել իսպառ Փիղայիցը լուսաբացին:
 — Եամսն, Աստուած, Փիղան եկաւ ուր փախչենք.
 Առաց որդուն կրծքին սեղմած լուսապատառ քրդուհին:
 — Մի վախենար, հանգիստ կեցիր, բաշի ջան,
 Կանանց երբէք ձեռք տալու չէ վրէժ խնդիր քաջ Փիղան:

Մի ժամայ մէջ Մարդիկ ցեղը ջնջւեցաւ,
 Խանասորայ կանաչ դաշտը կարմիր գոյնով ներկւեցաւ
 Փշիր զեփիւռ, դէպ Առաւուր մենք թռչենք,
 Դիրքեր բռնենք, գաթայ, հալւայ ձիւնի ջրով ճաշակենք
 Մերթ կռում է, մերթ բարձրանում քաջ Ֆիդան,
 Եզակի է պատմութեան մէջ արշաւանքի տեսարան:
 Չկար Կարօն. տխուր պատեց ամենքին,
 Երանի է նրա հոգոյն, որ զոհ դարձաւ այդ կռիւն:
 Քեզ ենք յանձնում ով պաշտելի Առաւուր,
 Կրծքիդ մէջը ամուր պահիր անմահ զոհերն հայերուն:
 Հայեր. յիշէք նւիրական այն օրը,
 Յուլիս ամսի քսանհինգին կատարեցէք մեր տօնը:

24

ԵՐԳ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՛ղջոյն ընդ բեզ Հայաստան,
 Մեր դիւցազանց գերեզման,
 Ողջոյն հայոց թագուհի,
 Պսակեալ փառօք հայրենի:
 Երկինք խրկէ բեղ հրեշտակ.
 Բիւր վարդը ծըլլին ոտքին տակ,
 Իւր մէկ նայւածքն երկնազեղ,
 Քու արտասուացդ ըլլան դեղ:
 Ո՛հ, ինչ անուշ նըւազներ,
 Պիտի հնչեն սոխակներ,
 Երբ բու ճակատդ պսակէ
 Ծաղկէճոնեան դափնիէ,
 Մանուկն յօրոց կը խայտայ,
 Եւ ձերունւոյն սիրտ ցնծայ.

Երբոր նշոյլը կը ժպտին,
 Հայ աստեղաց նորածին:
 Ո՛հ, շիրմանցդ քով ալ հանգչի,
 Անմահութեան վեհ ոգի,
 Մինչ զուարթունք ի բարձանց,
 Պսակս սփռեն հայկազեանց:
 Փափուկ մատունքդ թոյլ դրօշմեն,
 Այն տառերով ոսկեղէն.
 Մեր սրտին մէջ «սէր և լոյս».
 Մեր հոգւոյն մէջ կեանք և յոյս:
 Քու վշտերուդ փոխանակ
 Երկինք կանգնեց յաղթանակ. ॥
 Քու վէրքերուդ ալ դարման՝
 Քեզի Օրէնք շնորհեցան:

25

ՈՐՄԿԱՆ ԱԽՊԷՐ

—Որսկան ախպէր, սարէն կուգաս,
 Սարի մարալ կը փնտոես,
 Ասն եարաբ, դու չտեսմը,
 Իմ մարալիս, իմ բալիս:
 Դարդի ձեռքից սարերն ընկաւ,
 Իմ մարալս, իմ բալէս,
 Գլուխն առաւ քարերն ընկաւ,
 Իմ ջիւանս, իմ բալէս:
 —Տեղայ քոյրիկ, նախշուն բալիդ,
 Կարմիր պսակ էր կապել,
 Միրած եարի համբոյրի տեղ,
 Սրտին վարդեր էր բուսել:

—Որսկան ակապէր, ասո՛ւ եարար,
Ո՞վ է հարսն իմ բալիս,
Ո՞վ է գրկում չոր գլուխը,
Իմ մարալիս, իմ բալիս:

—Տեսայ քոյրիկ, սիրուն բալիդ,
Քա՛րն էր դրել բարձի տեղ.

Անուշ քնով տաք գնդակն էր՝
Կրծքին սեղմել եարի տեղ:

Մարի մարմանդ հոփն էր շփում,
Վառ ճակատին մարալիդ.
Ծաղիկներն են վրան սզում,
Քո մարալիդ, քո բալիդ...

26

Շ Ա Ր Ք Ի

Դեռ գիշեր է, առաւօտ չէ,
Հանգիստ քնիր, իմ զաւակ,
Ահա ծիծս առ բերանդ,
Թթէ ունիս դուն փափագ:
Թէև դրսից քո ականջին
Դիպչում է սուր աղաղակ,
Քնիր, քնիր, սիրուն մանկիկ,
Ժամանակ չէ զարթելու,
Մի հաւատար որ խաբում են,
Ոչինչ չունին քեզ տալու:
Դու քոյրերիդ մի մտիկ տար,
Նրանք մե՛ծ են, գառնուկս,
Օրօր ասեմ, դեռ դու քնիր,
Որ մեծանաս, գառնուկս,

Ահա դրի գլխիդ տակը,
Բարձի տեղակ բազուկս.
Հանգիստ քնիր սիրուն մանկիկ,
Ժամանակ չէ զարթելու,
Մի հաւատար որ խաբում են,
Ոչինչ չունին քեզ տալու:
Օրօցքիդ մէջ քեզ պինդ կապեմ,
Զլինի թէ գլորիս,
Կամ թէ ընկնիս գետնի վերայ,
Քեզ փասես, մոլորիս.
Մտիր Մորփէտսի գիրկը,
Մինչև լեզու սովորիս.
Այժմ շուտ է սիրուն մանկիկ,
Ժամանակ չէ զարթելու:
Մի հաւատար, որ խաբում են,
Ոչինչ չունին քեզ տալու:

27

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Իբրև արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ
Թնդացնում ես երկինք-գետինք տենչավառ.
Սուրբ անունդ պիտի յիշելի դարէդար,
Հսկայ լեբինք քեզ ապաստան Անդրանիկ:
Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,
Օձերի պէս պիտի սողան իրանց բունը,
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը
Զը ցամաքի մինչ յախտեան, Անդրանիկ:
Հայոց կուսանք, դափնեայ պսակ թող հլուսեն,
Քնքոյ՛ ձեռամբ քո ճակատը պսակեն.

Գոհարճներով անվախ կուրծքդ զարգարեն.
 Կեցցես յաւէտ դու անստասն Անդրանիկ:
 Հայաստանի սոխակները քեզ համար,
 Թող դայլայլեն գիշեր ցերեկ անդադար.
 Անյաղթ մնաս, դու քաջ կուր սիրահար,
 Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ:

ՍԵՒ ԱՉԵՐ

Սև աչերէն շատ վախեցիր,
 էն մնւթ, անծէր գիշեր է.
 Մութն սն է, չարքեր շատ կան,—
 Սև-աչերը մի սիրէ...
 Տես իմ սիրտս,—արուն-ծով է,
 էս չարքերը զարկեցին.
 էն օրուանէն դադար չունիմ.—
 Սև-աչերը մի սիրէ...

ՇՈՒՇԱՆ ԶԱՆ

Շուշան ջան, քի համա՛ կինքս կէս էլաւ,
 Քու սրտի շահիլը վուչինչով չէլաւ,
 Ի՞նչ գէթ իմ արի քի, ասն, իմ հոքիս,
 Վուանիրդ կու նընգնիմ՝ միդայ գուքամ քիդ:
 Էսէնց էլ քարեսիրտ՝ չիս պիտի ըլի,
 Անմիդ տիղը մարթուս՝ հալ ու մաշ անի,
 Ի՞նչ իս ասում իմում բու խըճպըտանքիդ,
 Թէ վուր մատաղ անիս գլուխս՝ պատկըրքիդ:

Ի՞նչ կուրի մէ ձէն տաս՝ ո՞վ իմ հորէհան,
 Մէ սիրտս խիթարիս՝ չը դադիս էթքան,
 Քու անուշ բերնեմէն մէ համով խօսկն,
 Չարչարանքիս դիդն է՝ իմ բաղտիս հիմքն:
 Աստուծ սիրունութիւն՝ քի էնդուր էրիտ,
 Վուր օգորմած ըլիս՝ պարուն սիրեկնիդ
 Վարցկ կօնիս, աչկի լուս, մէ տիսութիւն գաս,
 է՛ս ջուրը տարածիս, մէ համբուրիլ տաս,

ՊԷՏՕՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գարահիտար լերան կրծքին՝ նա էլ ընկաւ վիրաւոր,
 Կուրծքը պատուած, սիրտը խոցւած՝ չար թշնամու
 գնդակով:
 Ժայռոտ լեռան լերկ կատարից վնր սլացիր սև
 արծիւ,
 Թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւանուն հով արն...
 Խոցւած սրտից մուգ արիւնը կաթիլ կաթիլ կծորայ-
 Ա՛խ, ջիւանու կեանքն է հոսում ցաւոտ կրծքի լայն
 վէրքից...
 Ժայռոտ լեռան լերկ կատարից վնր սլացիր, սև
 արծիւ,
 Թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւանուն հով արն...

ԱՂԶԿԱՅ ԵՐԳ

Հանգիտտ իմ անոյշ անցար գնացիր,
 Միայն վէրքն անբոյժ սրտումս թողեցիր:

Մոխակ գեղեցիկ կանաչ պարտիզում,
Երգելով քաղցրիկ ինձ չէ գրաւում:

Քեզանով միայն երջանիկ էի,
Տիկին ինքնիշխան ինձ կարծում էի:
Ցերեկը մենակ փակած սենեակում
Ողբում եմ անյազ ոչ ոք չէ լսում:

Դիշեր է գալիս մահիճ եմ մտնում,
Տրտում է հոգիս քունս չէ տանում.
Մազերը թուխ երկայն, աչերը դրաւիչ,
Ի՞նչ հասակ ինչ ձայն, ինչ հոգի կարիճ:

Ո՛հ, սիրտս այրած ողջ քեզ է կանչում.
Ողջ քո անմոռաց անունդ եմ յիշում,
Անգութ ինձ խաբեց, ուրիշին սիրեց,
Ա՛խ, նա ինձ դեռ վնդ, պատրաստեց դագաղ:

ԵՐԳԵԼ ԿՈՒՉԷԻ

Սուրբ հայրենիքս երգել կուզէի.
Իմ երգերի մէջ հոգեբուխ հնչիւն,
Երկնքի հետ խօսող լեռներ վիթխարի,
Եւ թռիչքն արծւի այն վեհ բարձունքում...

Մայր ժողովուրդս երգել կուզէի,
Յորձնուտ Արաքսը չքնազ ափերով,
Հրեղէն նժոյգն երգել կուզէի
Մասսայ լանջերում սրարշաւ տալով:

Հայ կարիճներին երգել կուզէի,
Եւ կուրի կոչը հպարտ վայրերի,
Սուրբ ազատութեան տօնը յաղթական,
Եւ վառ ապագան իմ հայրենիքի...

Բայց կուպիտ ձեռներ փշրեցին քնարս բէկ-բէկ,
Բայց կուպիտ ձեռներ նրա լարերը կտրեցին մէկ-մէկ:

ՏԱԼՈՒՈՐԻԿՅԻ ԿՏՐԻՃ

Տալուորիկցի կարիճ եմ խորթ,
Քաղքցու պէս չեմ թուլամորթ
Սարի զաւակ, բարի որդի,
Հին քաջ Հայոց եմ ֆնացորդ:

Տալուորիկցի զաւակ եմ քաջ,
Չեմ խոնարհիր թուրքի առաջ,
Քարոտ լերանց ես ազատ լաճ,
Չեմ տեսեր՝ ո՛չ արօթ, ո՛չ մաճ,
Երբոր բացի աչքս այս աշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար.
Մինչ չփակեմ աչքս ի խաւար,
Պիտ չ'կոխէ հոս սաք օտար:

Իմ պապ ծնաւ դիս պալու ծոց,
Ինձ ընկոյզ կոճմ եղաւ օրոց,
Տկլոզ ծնայ, մեծցայ տրկլոզ,
Իէմ արևու, սաստիկ հողմոց:
Ոտքս բոբիկ, սիրտս միշտ բաց,
Ի՞նչ փոյթ՝ թէ քոյրս ալ մերի ֆնաց,
Ինձ մօտ մէկ է արև, բուք, ցուրտ,
Բաւ՝ չէ իշխեր վրաս թուրք, քուրդ:

Յարենի տեղ կուտեմ կօրեկ,
Երկաթ ձեծեմ զիշեր ցորեկ,
Շինեմ փէտատ, խոփ, խաչերկաթ,
Ծանր է դատումս, բայց եմ ազատ:

Հարստութիւն, ուսում, հանճար,
 Պատիւ և փառք չեն ինձ համար,
 Բաւ է՝ ունիմ աէգ, թուր, խանջար,
 Բաւ՝ չէ իշխեր վըրաս օտար:
 Զէնքս է միակ իմ խաղալիկ,
 Կ'ատեմ հանդարտ կեանք խաղալիկ,
 Կը սիրեմ որս, կռիւ աւար,
 Կսպասեմ երբ ընկնի հաւար:
 Գիշեր գէնքս վրաս քնեմ,
 Երազիս մէջ կռիւ կընեմ,
 Կոռելը ինձ ժօտ խաղալ է,
 Կոռով մեռնելն ինձ հալալ է,
 Կոռի մէջը մեռաւ իմ պապ,
 Այդ կերպ մահն է անուշ մրափ,
 Ես ալ կոռեմ մահ մէջ կոռի,
 Որ իմ անուն անմահ գրուի:
 Այս սարերը անմատչելի,
 Իմ քաջ նախնիք երբ ընարեցին,
 Ըսին, — ազատ որդոց որդի,
 Քաջաց սերունդ թող հոս ապրի:
 Եւ իմ խելօք ջոջ պապ Յարէ,
 Աստուած հողին լուսաւորէ,
 Ինձ կսէր միշտ, — ազատ ապրիր.
 Մի ծոեր վիզ, հարկ մի վճարիր: —
 Տալուորիկն է սև-սև սարեր,
 Խոր, մութ ծործորք սեպ սեպ քարեր,
 Վերև ջուխտակ ձեր Մարաթուն.
 Հողիս մատաղ մեր Մարաթան:
 Մեզմով պարծի այսօր Սասուն,
 Մենք ենք խրախոյս Հայոց նկուն,

Տալուորիկ սար, ժայռոտ Զէլթուն,
 Տան իրարու ազատ ողջոյն:

ԵՂԻՍՅՐ ԵՄՔ ՄԵՆՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ,
 Թէ երգ թռչին սիրողարար,
 Մատունը կոսին ամենագեղ,
 Թէ որ զարնեն փափուկ քընար:
 Զունին ձայն այնքան մի սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:
 Տնւր ինձ քու ձեռքդ, եղբայր՝ եմք մենք,
 Որ մըրըրկաւ էինք զատուած.
 Բաղդին ամեն ոխ չարանենդ,
 Ի մի համբոյր ցրուին 'ի բաց:
 Ընդ աստեղօք թ'նչ կայ սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:
 Երբ ալևոր Մայր Հայաստան,
 Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
 Սրաին խորունկ վէրքըն դաժան,
 Քաղցր արտասուած բուժին ցօղով:
 Ընդ աստեղօք թ'նչ կայ սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:
 Մէկ տեղ լացինք մենք 'ի հընուս,
 Եկէք դարձեալ յար անբաժան,
 Խառնենք զարտօսը և ըզխնդում,
 Որ բաղմածունդ ըլլայ մեր ջան:
 Ընդ աստեղօք թ'նչ կայ սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:

Մէկ տեղ յողնինք, մէկ տեղ ցաննք,
 Մէկ տեղ թափին մեր քրտինքներ,
 Ըզնունց բարեաց յերկինս հանենք,
 Որ կեանք անունն Հայոց գաշտեր:
 Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:

35

ԱԽ ՄԵՐ ՍԻՐՏԸ

Ախ մեր սիրտը լիքը զարդ, ցաւ,
 Օր ու արև չըտեսանք.

Վախ մեր կեանքը սևով անցաւ,
 Աշխարհից բան չ'իմացանք:

Հարուստ մարդիկ կուտեն-խմեն
 Աշխարհի ճոխ սեղանից.

Մենք աշխարհի խորթ տղերքն ենք,
 Մեզ փայ չկայ աշխարհից:

Խեղճ աղքատի հոգին դուրս գայ
 Քարից-հողից հացը բամէ,—

Բեռով հացը հարուստին տայ,
 Հարուստն ուտէ, վայելէ...

Խեղճ աղքատը դառը դատի—
 Դադարկ նստի... է՛յ, աշխարհ,

Էլ ինչու ես քարը թողնում
 Քարի վրայ, քար աշխարհ...:

Ախ, մեր սիրտը լիքը զարդ, ցաւ,
 Օր ու արև չը տեսանք.

Վախ, մեր կեանքը սևով անցաւ,
 Աշխարհից բան չ'իմացանք:

36

ԵՐԳ ՊԱՆԴԽՏԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու զարնան սիրուն թռչնակ,
 Դէպի ուր, ինձ ասս, թռչում ես այդպէս արագ:

Ախ, թռիւ, ծիծեռնակ, ծնած տեղս Աշտարակ,
 Անդ շինիր քո բոյնը հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու ալևոր հայր տունեմ սգաւոր,
 Որ միակ իւր որդուն սպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նորան, ինձնից շատ բարև արն,
 Ասն թող նըստի լայ իւր անբաղդ որդու վերայ:

Դու պատմէ՛ թէ ինչպէս աստ անտէր ու խեղճ եմ ես,
 Միշտ լալով, ողբալով՝ կեանքս մաշուել, եղել կէս:

Ինձ համար ցերեկը՝ մութ է շրջում արեգը,
 Դիշերը թաց աչքիս քունը մօտ չի գալիս:

Ասիր, որ չի բացուած՝ թառամեցայ միացած,
 Ես ծաղիկ գեղեցիկ՝ հայրենի հողից զրկած:

Դէհ, սիրուն ծիծեռնակ, հեռացիր, թռիւր արագ
 Դէպի Հայոց երկիրը, ծնած տեղս-աշտարակ:

37

ԿԵՆԱՅ ԲԱԺԱԿ

Եղբարք՝ մի շուրջ ժողովեցէք,
 Քաջ հայոց կերպի կոնձեցէք,

Բաժակներդ դադարկեցէք
 Մեր հայ ազգի կինացր:

Հայ երիտասարդներուն,
 Հայրենիք պաշտպանողներուն,

Որոնց անկուսն էլ սուրբ է մեզ—

Այս բաժակը նւիրենք:

Հայ աղջիկներու կենացը,

Որք միայն Հայ մարդ կու սիրեն,

Միշտ իրանց մաքուր կու պահեն,

Այս բաժակը դարդը կենք:

Արանց, որ մեր սիրուն գրաւում են,

Մեզ զգօն ճամբով վարում են,

Որոնց կեանքը մեզ օրինակ,

Մի երբեակ «կեցցէ» ասենք:

Եղբարց, որք այժմ աւարտել են,

Մեր ուխտի անդամ եղել են,

Որոնց ուխտը միշտ սիրում է,—

Այս բաժակը նւիրենք:

Եղբարց, որք դարդից ազատ են,

Մահեան հանգիստ վայելում են,

«Ողորմի հոգուն» ասելով՝

Այս բաժակը նւիրենք:

Բայց որ դեռ գինին փայլում է,

Ու մեզ իրան մօտ քաշում է,

Բաժակներդ դարդակեցէք

Ազատութեան կենացը:

16, 16, 16,—Սիփանա սէզ սարի վրայ,
Կտրիճները շտապով գալիս են միանում,
Այնտեղ անվախ որդիք հսկայ լեռան վերայ,
Զէնք ու զրահի են ընտանում:

Ահա վառում են՝ զինում,

Սանձակոժ ձի հեծնում անհամբեր,

Արիւնը նրանց բորբոք սրտի մէջ եռում,

Թռչում, անցնում անհամբեր,

Զերթ Սիփանայ պինդ քամին,

Սլանում են դեպի ցած,

Դաշտի միջին թշնամուն պատահում են

Եւ մեծ վրէժ անմոռաց—

Ահեղ կռում նրանից առնում,

Հատու սուսերը հանում,

Ցեղապետին են սպանում,

Եւ զերթ կիզող հուր վառում:

Այժմ բոլոր ցեղն ոտի կանգնած՝

Թշնամու դէմ մահառիթ մարտի է կանչում—

Արեան մեծ վրէժը թշնամուց պահանջում,

Եւ թշնամին պարտուած՝

Թողնում փախչում սարէ սար՝

Յետ ձգելով մեծ աւար

Արիւն թափեցին, արիւնի փոխանակ

Արիւն քամեց ծարաւի սուսեր,

Նրան յագեցած՝ դրեցին պատեան,

Ելնում են ի լեռ—սէզ Սիփանն ի վեր,

Սէզ Սիփանայ կանանչ գլխին յաղթող

Ցեղն անում է սհ, մեծ խնդում,

Ամպերի թանձրութեան միջից

Սիփանն ամբողջ է թնդում.

Էլ չեն գալ մեզ մօտ թշնամիք,

Սուր տեսան մեր պողվատիք:

39

ՄԻՐԱՀԱՐԻ ԵՐԳ

Ա՛խ, իմ սիրեկան, ինձմէ հեռացար,
 Քեզ ի՞նչ գէթ արի, որ ինձ մոռացար,
 Վերջդ թէ էդ էր, էլ ճւր մօտ կացար,
 Քու սրտի սէրը ինձ ճւր խոստացար:
 Սուր էշխիդ նետը սրտիս խփեցիր,
 Քո սիրոյ կրակը ջանս գցեցիր:
 Սրտիս հարերին մըհլամ չը քսեցիր,
 էրուած ու խորուած, մտէդ քցեցիր:
 Արի՛, սիրեկան, ինձ մէ ոահմ արն,
 Երեսդ մի շուռ տուր, ինձ մտիկ արն,
 Խղճն քո զուլին, մի ականջ արն:
 Քո քաղցր ձէնին ինձ արժան արն:

40

ԱՂՂՈՒԽՍ ԿՈՐԱԻ

Աղլուխս կորաւ ձեր դուռը,
 Սրտէս դուրս չի գայ մըմուռը,
 Բաղըն ինձի քցեց էդ կուռը,
 Անուշ տղայ, տնւր աղլուխս:
 —Քու աղլուխդ ինձ մօտ չկայ,
 Ես կը երգուիմ, «Աստուած վկայ»,
 Ով գտել է թող բերէ տայ—
 Սիրուն աղջիկ, քու աղլուխդ:
 —Աղլուխս հարի բաշխած էր,
 Ալ արբեշումով նաշխած էր,
 Պատկերս վրէն քաշած էր,
 Անուշ տղայ, տնւր աղլուխս:

—Քու վարմունքիդ ի՞նչ անուն տամ,
 Քիչ է մնում որ անվերջ լամ,
 Մօտս լինի՛ բերեմ կուտամ—
 Սիրուն աղջիկ, քու աղլուխդ:
 —Մուժտէդ կուտամ աղլուխս բեր,
 Դու ամեն օր կեր կաթի սեր,
 Ինձի քարերուն մի խփեր,
 Անուշ տղայ, տնւր աղլուխս:
 —Սէրդ ընձնէն վազուց է ստեր,
 Տուած խօսքէդ ես ես դառեր,
 Հաւատն, որ ես չեմ առեր,
 Սիրուն աղջիկ, քու աղլուխդ:
 —Ի՞նչ ջուղար պիտի տամ մօրս,
 Սիրտս կտրաւ ընկաւ փորս,
 Խարար տարէք մեծ ախօրս,
 Անուշ տղայ, տուր աղլուխս:
 —Աղլուխիդ տեղը չեմ գիտեր,
 Ինձի մի անուշ եար պիտեր,
 Աջար տեսնես ճով է գտեր,
 Սիրուն աղջիկ, քու աղլուխդ:

41

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Արի իմ ստիանկ թնդ պարտէզ, մէրին,
 Տաղերով քուն բեր տըղիս աչերին:
 Բայց նա լալիս է դու ստիանկ մի գալ,
 Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:
 Եկ, արեղածնդ, թնդ արտ ու արօտ,
 Օրօրէ տըղիս, քընի է կարօտ.

Բայց նա լալիս է, դու, ձագհուկ մի գալ.
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ:

Թող դու, տատրակիկ, քու ձագն ու բունը,
Վույվույով տըղիս բեր անուշ քունը,
Բայց նա լալիս է, տատրակիկ, մի գալ,
Իմ որդին չուզէ սըգաւոր դառնալ:

Կաչաղակ՝ ճարպիկ, գող արծաթասէր,
Շահի զրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ մի գալ,
Իմ որդին չուզէ սովդաքար դառնալ:

Թող որսըդ, արի, քաջասիրտ բազէ,
Քնու երգը գուցէ իմ որդին կ'ուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լըռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ:

ՉԱՆՈՐԴ ՕՐԵՐ

Չախորդ օրերը ձմաւոյ նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան կուգան ու կերթան,
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար,
Որպէս յաճախորդ՝ շարուէ շարան կուգան ու կերթան:

Փորձանք հալածանք և նեղութիւն ազգերի գլխից,
Ինչպէս ճանապարհի կարաւան կուգան ու կերթան,
Աշխարհը բուրաստան է յատուկ մարդիկը, ծաղիկ,
Որքան մանիշակ, վարդ պալասան կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ տկարը տխրի,
Փոփոխակի անցքեր գանազան կուգան ու կերթան:
Արևը առանց վախենալու ցայտում է լոյսը,
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կերթան:

Երկիրը ուսեալ զաւելին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական՝ կուգան ու կերթան.
Աշխարհը հիւրանոց է, Արևան ազգերը հիւր են.
Այսպէս է կանոնը բնական — կուգան ու կերթան:

ԱՆԻ ՔԱՂԱՔ

Անի քաղաք նստեր՝ կուլայ,
Չը կայ ըսող՝ մի լա, մի լա:
Կըսես քիչ է թող մնայ՝ լայ.
Ա՛խ, երբ լսեմ՝ մի լա, մի լա:
Շատ ցաւերով կ'այրիմ՝ տապիմ.
Չունեմ՝ մէկ մարդ հաւատարիմ,
Որ խղճալոյս գայ՝ մօտենայ,
Հէչ չէ ըսէ մի լա, մի լա:
Ա՛խ, Հայ տղայ, խղճն ինձի,
Տես թէ քո Անին ի՞նչպէս է,
Հերիք ես լամ, դու չ'գիտաս.
Չէ՞ քո Անին շատ ափսոս է:

Ախ ու վախով օրերս անցաւ,
Լալէն աչքերս կուրացաւ,
Որբ մնալն ինձ վիճակեցաւ,
Բախտս բնաւ զիս մոռացաւ:

Կորուսեր եմ թագաւորներ,
Ժողովեր եմ զլիսուս բոռ բուր,
Որբ միշտ կ'երգեն՝ «Անին անցաւ՝
Անին անտէր աւերեցաւ»:

Եկար, տեսար. դարձար՝ կերթաւ.
Լալով կասես՝ «բարեաւ մնաս»,

Աստուած սիրես՝ զիս չ՛մոռանաս,
 Մասիս սարին երբ մօտենաս,
 Ասես իմ քաջ Արարաւին.
 «Նստեր կուլայ քո խեղճ Անին»:
 Կասէ երբ աւետիք կ'տաս,
 Թէ «իմ Անի՛ն հերիք է լաս»:

ՂԱՐՄԵՑՈՅ ԵՐԳ

Ես վերէն կուգայի՛ դուն դուռը բացիր,
 Ձեռքդ ծոցդ տարար՝ սխ երիւր լացիր,
 Ես էլ քեզի չառայ՝ տունը մնացիր,
 Գընը՝ դապլի խային, եար չեղար ընծի:
 Ես սարէն կուգայի, շալակս բուրդ էր,
 Լեզուդ ընծի համար վստած քուքուրթ էր,
 Բօյդ դարդու դամիշ, յերիսդ թուխթ էր,
 Գընը՝ դապլի խային, եար չեղար ընծի:
 Երկի՛քը ամպեր էր, ինչ անուշ թոն էր,
 Էկայ դունէն անցայ, ջանանս հոն էր,
 Էրեցայ-վառեցայ, էս ինչդ տուն էր.
 Գընը՝ դապլի խային, եար չեղար ընծի:
 Էսօր շարաթ էղնիր, էգուց կերակի,
 Եարըս դունէն անցնիր էրթար կրակի,
 Լիզուն բանլիք էղնիր, ծուցը Փռանկի.
 Գընը՝ դապլի խային, եար չեղար ընծի:
 Լիզուովդ աշնայ իս՝ մտօքդ խային.
 Գլօխս առնիմ էրթամ վըր յելման չային,
 Մատնթ, հասէք Անդրէասի հաւարին,
 Եար, մարամդ էն է օր՝ սըպանիս ընծի:

ԱՐԱՅՕԻ ԵՐԳ

Հնարագէտ լինենք հայերը,
 Բանդենք մի տան հիմքը հայերը,
 Հոգով զինւած ելնենք ոտքի,
 Յաղթութիւնը մերն է հայեր:
 Թէ նրանց կայ գահ պետութիւն,
 Մենք էլ ունենք շատ շատ գիտուն,
 Ունինք ազգի սէր միութիւն,
 Յաղթութիւնը մերն է հայեր:
 Սուլթանը շան նման սատկի,
 Մենք ծառայենք խելք ու մտքի,
 Հոգով զինւած ելնենք ոտքի,
 Յաղթութիւնը մերն է հայեր:
 Արարօն եմ ես անվհեր,
 Ընկերներս են անձնանէր,
 Թէ կուզ գան հարիւր հազարներ,
 Յաղթութիւնը մերն է հայեր:

ՍԻՐՈՒՄ ԷԻ...

Սիրում էի երբմն քեզ,
 Այժմ ես տակաւին,
 Իմ սրտումը դու ապրում ես,
 Բայց ոչ ուժով քո նախկին:
 Առաջ հնչում էիր մաքուր,
 Որպէս բիւրեղ իմ հոգուն,
 Որպէս սիրոյ նախանձ ու հուր,
 Տաք արիւնս բորբոքում:

Այժմ որպէս վաղուց մեռած
 Բարեկամի յիշատակ,
 Կամ մանկութեան օրով սիրած,
 Մի հին երգի եղանակ:
 Քո անունդ այժմ յիշելիս,
 Էլ չեմ ասում հոգեանկս,
 Չեմ աշխատում քուն մտնելիս,
 Որ քեզ տեսնեմ երազում:
 Բայց զարմանքով երբեմնապէս,
 Մտածում եմ ակամայ,
 Ի՞նչու էլ դու սիրելի չես,
 Ի՞նչու ես քեզ մոռացայ:
 Ա՛խ, տուէք ինձ քաղցր մի քուն,
 Կեանքից հեռու սլանամ,
 Այն աշխարհն ուր խնդութիւն,
 Ուր սէրն է միշտ անթառամ:

ԴՈՒ ՉԵՄ ՀԱՒԱՏՈՒՄ

Դու չես հաւատում թէ քեզ եմ սիրում
 Թէ գիշեր ցորեկ անքուն անհանգիստ,
 Միայն քեզ համար մտածում եմ միշտ,
 Դու չես հաւատում որ քեզ սիրում եմ:
 Թէ քու վառ սիրով ես հիւանդ պառկած,
 Ու ժս սպառւած լիզուս չորացած,
 Ասեմ քո սիրոյն հոգիս կաւանդեմ,
 Դու չես հաւատում որ քեզ սիրում եմ,
 Բայց եթէ յանկարծ ես խելագարւիմ,
 Չեաներս ծոցիս փողոցներ շրջիմ,

Եւ սիրոյ երգը երգեմ սգալով,
 Դու չես հաւատում, որ քեզ սիրում եմ:
 Վերջապէս թէ քո սէրը յաղթելով,
 Սպանէ յանկարծ վերջին շունչս տալով,
 Քեզ համար միայն արիւնս թափեմ,
 Դու չես հաւատում, որ քեզ սիրում եմ:
 Թէ սառ դիակս ամփոփուած լինի,
 Մի քանի չոր-չոր տախտակների մէջ,
 Ընկերներս տանին դազաղս գրկած,
 Դու չես հաւատում, որ քեզ սիրում եմ:
 Ամենք դառն արցունք թափելով պիտի՝
 Ինձի համբուրեն հրաժեշտ տալով,
 Դու չես մօտենալ գէթ վերջին անգամ,
 Բարեզ տալու մինչև յաւիտեան:
 Ծնողք բարեկամք երկինք և երկիր,
 Իմ սիրոյս համար վկայ եմ կանչում,
 Որ սիրեմ անկեղծ դու էլ ինձ սիրես,
 Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում:
 Երբ արև լուսին խաւարին յանկարծ,
 Երբ ինձ իջնեն խաւար գերեզման,
 Գերեզմանիցս էլ մի ճիչ կարճակեմ,
 Որ քեզ եմ սիրում, էլ չես հաւատում...

ԱՌ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Հայրիկ, հայրիկ քո հայրենիք
 Վասպուրական մեր աշխարհ,
 Վարդի փոխան քեզ փուշ բերաւ,
 Յաւերդ դառան բիւր հազար:

Մայիսն եկաւ սոխակներով,
 Վարդի մի թուփ որոնեց,
 Փոխան թփի մացառ գտաւ,
 Լալահառաչ ձայն հանեց:
 Հայրիկն ասաց իմ հայրենեաց,
 Փուշն անուշ է քան զվարդ,
 Ես այն փշոց մէջը դարձեալ,
 Կը որոնեմ սիրուն վարդ:
 Այն սայրասուր փշերն ամեն,
 Փունջ կապեցէք շարի շար,
 Թողէք գլխիս պսակ կապեն,
 Որուն ճակատս է յօժար:
 Հայրիկ, հայրիկ, քո սուրբ ճակատ,
 Արիւն արցունք են սոս միշտ,
 Փթթեալ վարդից կարմիր թերթերը,
 Կը պսակեն փառօք զարդ:

ԵՐԳ ՎԱՀԱՆԱՅ

Բամ, փորոտան բարձուստ բոմբիւնք
 յԱյրարատեան գաշան ի վայր,
 Արի արանց արիւնք յեռանդն առատանան ի հրազայր,
 Հրաւէք հայրենեաց հըռչակի նոհանուր,
 Հողիք Հայկազանց բորբոքին ի հուր,
 Որք երկնաւորի պսակին էք կարօտ
 Ու որ երկրաւորիս փառաց երկնայորդ:
 Հապ'օն արի արանց մանկունք,
 Հայրենավրէժքը Հայկազունք,
 Հապ'օն ի զէն գունդագունդ

Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝
 Ի զէն ի վրէժ, ճն անդր յառնջ,
 Ի զէն ի վրէժ, մի ձախ մի յաջ,
 Օ՛ն անդր յառնջ մի ձախ մի յաջ,
 Օ՛ն անդր յառնջ, յառաջ յառաջ,
 Հապ'օն յառնջ:

ՔՈՅՐԵՐԻՍ ՄԷՋ...

Քոյրերիս մէջ ես սգազդեաց
 Ինձ նման տխուր չկայ,
 Դժոխքունն էլ իմ ունեցած,
 Կրակի պէս հուր չկայ:
 Ծարաւ պապակ այրում եմ,
 Ո՛հ մի կաթիլ ջուր չկայ,
 Սպասում եմ այցելութեան,
 Ոչ մի տեղից լուր չկայ:
 Իմ տարիքս անցնում են շուտ,
 Գլորում են հանապազ,
 Ա՛խ իմ յոյսս իմ փափազս,
 Համարում են ինձ երազ:
 Որտեղ ձայն ու շշուկ լսեմ,
 Կը վազեմ այնտեղ վռազ,
 Սպասում եմ այցելութեան,
 Ոչ մի տեղից լուր չկայ:
 Քո խղձալի հարաւն եմ սոհ,
 Ինձի օգնէ քաջ հիւսիս,
 Քեզ եմ տուել իմ Ախուրեան,
 Իմ անառիկ մէծ Մասիս:

Երբ կլսեմ աւետեաց ձայն,
Ուրախութեան աւետիս,
Սպասում եմ այցելութեան,
Ոչ մի տեղից լուր չկայ:

51

ՄԱՆՈՒՇԱԿԻՆ

Ո՛հ, մի ողբալ դու թառամած,
Եւ դալկացած Մանուշակ,
Որ քո անուշ բոյրն առած,
Քեզ ձգեցին ոտքի տակ:
Աւելի պարզ էր շողշողում,
Մեր գարունը մանկութեան,
Բայց մեզ համար այս աշխարհում,
Նա չքացաւ յաւիտեան...

52

ՊԱՂ ԱՂԲԻԻՐԻ ՄՕՏ

Պաղ աղբիւրի մօտ կանգնած մի աղջիկ,
Ձեռին սափոր բռնած ջուրն էր անուշիկ,
Աչք ու ուր կալամով քաշած գեղեցիկ,
Մայրիկ զարնւեցայ սիրում եմ նորան,
Մի փոքրիկ ակնարկով արաւ ինձ նշան:
Պաղ աղբիւրի մօտը պարտիզում նստած,
Ունէինք լաւ գինի, գառան խորոված,
Երգում էին ու պարում աղջկերք բոլորած,
Մայրիկ զարնւեցայ սիրում եմ նորան,
Մի փոքրիկ ակնարկով արաւ ինձ նշան:

Ման էր գալիս ընկերներով միասին,
Կարծես հրեշտակ էր, չէր նա հողածին,
Մազերն ոսկէգոյն ձակատը լուսին,
Մայրիկ, զարնւեցայ սիրում եմ նորան,
Մի փոքրիկ ակնարկով արաւ ինձ նշան:
Ցերեկը անդադար նորան եմ յիշում,
Գեշերն էլ երազիս մէջն եմ տեսնում,
Տոչորւած ման կուգամ խեղճ մուար տրտում,
Մայրիկ, զարնւեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքրիկ ակնարկով արաւ ինձ նշան:
Երանի այն աւուր հազար երանի,
Տեսութեան ես կրկին լինեմ արժանի,
Առանց նորան երբէք չեմ մնալ կենդանի,
Մայրիկ, զարնւեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքրիկ ակնարկով արաւ ինձ նշան:

53

Կ Ռ Ո Ի Ն Կ Ի Ն

Բարով եկար սիրուն կոունկ, X
Ի՛նչ լուր բերիր հայրենիքէս,
Խօսիր ինձ հետ ազատօրէն,
Կեանքս կնւիրեմ ես քեզ:
Տեսա՞ր իմ հայրենեաց տունը.
Գեղեցիկ զարդարւած գոյնը.
Նորա սիրուն տանջում եմ,
Աչքերիցս կտրաւ քունը:
Ազատ տեսա՞ր մեր լեռները,
Հաղորդեցի՞ր դու իմ սէրը.
Այն լեռներու պաշտպանողը,
Արծւի կորիւնի նետերը:

Տեսնօր մեր փոքրիկ բուրաստան,
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան,
Եղեմական գրախտավայր,
Նա կոչւում է Հայաստան:

—Այնտեղ ունիս եղբայր ու քոյր,
Միջազ ի՞նչ կսպասես ի դուր,
Արի աւնեմ իմ թեքրուն.
Գնանք այնտեղ ուրախացուր:

54

Ա.ՉԱՏՆ ԱՍՏԻԱԾ

Ազատն Աստուած այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինւածքին,
Կենդանութիւն պարզակել:

Ես անբարբառ մի մանուկ,
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անդօր թեքրով,
Ազատութիւն գրկեցի:

Մինչ գիշերն անհանդիստ,
Օրօրոցում կապկապած,
Լալիս էի անդատար,
Մօրս քունը խանգարած:

Խնդրում էին նորանից,
Բազուկներս արձակել,
Ես այն օրից ուխտեցի,
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզւիս մինչ կապեր,
Արձակեցան բացեցան,

Մինչ ծնողքս իմ ձայնից,
Խնդացին ու բերկրեցան:
Նախկին խօսքն որ ասեցի,
Չէր հայր կամ մայր կամ այլ ինչ,
Ազատութիւն դուրս թռաւ,
Իմ մանկական բերանից:

Ազատութիւն ինձ կրկնեց,
Ճակատագիր վերկից,
Ազատութեան դու զինուոր,
Կամիս գրւել այս օրից:

Ո՛հ փշոտ է ճանապարհ,
Քեզ շատ փորձանք կսպասէ,
Ազատութիւն սիրողին,
Այս աշխարհը խիտտ նեղ է:

Ազատութիւն գոչեցի,
Թո՛ղ որոտայ իմ գլխին,
Կայծակ փայլակ հուր երկաթ,
Թող թաւ դնէ թշնամին,

Ես մինչի մահ կախադան,
Մինչի մահու անարգ սիւնը,
Պիտի գոռամ պիտ գոչեմ,
Անդատար ազատութիւն:

55

ԹԻԿՈՒՔԴ ԼԱՅՆ

Թիկունքդ լայն, թեքրդ ուժգին,
Կուներդ ամուր պինդ պողպատ,
Միբել զիտես, կուռլ չիտես,
Դու անզգայ երիտասարդ:

Քոյրդ տանում են քիւրդերը,
Եղբօրդ արիւն են ծծում:

Դու անտարբեր, սառն արիւնով,
Հանգստութիւն ես փնտռում:

Ամօթ քեզի, հազար ամօթ,
Որ զէնք չունիս քո ձեռքին,

Քո եղբօրդ կուրի դաշտում,
Տապալում է թշնամին:

Չեռքդ տնւր ինձ, երգեհնք այստեղ,
Թողնենք փառքը աշխարհի:

Գնանք, կուենք առիւծաբար,
Ի սէր ճնշւած հայ ազգի:

Ի Մ Ս Է Ր Ը

Սիրում եմ այնպէս, որպէս չէ սիրած
Դեռ ոչ մի էակ արար աշխարհում,
Այդ սէրն է միայն որ սրտիս տիրած
Անշէջ վառում է իմ ջերմ երգերում:

Բայց ես իմ սիրով չեմ երգում ներքող,
Երկնային պարզե սին գեղեցկութեան,
Պաշտում եմ մի սուրբ պատկեր լուսաշող,
Նա է իմ կուռքը երկրպագութեան:

Ո՛հ, դու ես իմ սէր, սուրբ ազատութիւն,
Ես քեզ եմ միայն սիրում խելագար,
Քեզ եմ նւիրում իմ խանդ իմ աւիւն,
Իմ կեանք իմ արև զոհում քեզ համար...

Ո՛վ ազատութիւն անմարմին ոգի,
Թովիչ երազում ինձ երևեցար,

Եւ իմ վառ սրտի, իմ վառ ցնորքի,
Դու միակ իշխող տիրուհին դարձար:

Ես գմայլում եմ քո լոյս պատկերով,
Քո հետ համբուրում ազատ անվտանգ,
Բայց յանկարծ դահիճն արնաներկ սրով,
Սզեց իմ սիրոյ մաքուր թոթովանք...

Ես քեզ կամեցայ, ո՛վ իմ լոյս հրեշտակ,
Պարզեկ սիրոյս վարդը նորարաց.
Այժմ առ դիակս, վարդի փոխանակ,
Արնաներկ դիակ՝ քո սիրոյն զոհւած...

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳ

Ա՛յ մարդ այսօր շատ քնեցար, նընջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր:

Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փրփուեցաւ:

Ընկերներդ վաղ արտերը գնացին,
Ցորեն, զարին գերանդիով հընձեցին,
Սուրճ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նստան հանգչիլ կաղնիներու հովումը:

Ա՛յ մարդ՝ վեր-կաց սառը ջրով լուացվիր,
Գօտիդ կապէ, գերանդիդ առ դաշտ հասիր,
Քանի հով է՝ հունձըդ արաւ արտումըդ,
Հունձըդ հընձէ, մի ծուլանար գործումըդ:

Հունձըդ կապէ-բարդըդ բարդէ. տուն արի,
Հանգստացիր, երբ քո հունձըդ կատարի,
Բեր գերանդիդ կախէ պատին քո տանը,
Ես իրիկուան կը պատրաստեմ սեղանը:

Այ՛ մարդ՝ հերիք ինչ որ այսօր քընեցար,
 Աչքըդ մէկ բնց, տես թէ արչափ ուշացար,
 Մեր դրացին վաղ անցկացաւ կամուրջէն,
 Վաղ լըռել է մեր զըզիւրը ձայնելէն:
 Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քընել, սիրականն,
 Արեգական շողը հասաւ մեր դըրան,
 Մի ծուլանար, ժամանակդ խնայէ,
 Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ:

ԳՈՒ ԶՈՎ ԽՆԴՐԵՍ...

Դու զո՛վ խնդրես մայր իմ անուշ,
 Ե՛կ, մի՛ դողար, մօտեցիր հոս,
 Անլաց աչօք դիտէ՛ զորդիդ:
 Ու իւր վէրքերն արիւնահոս:
 Թուրքաց մայրեր թող լան ու դուն՝
 Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:
 Ինչպէս երբեմն օրբանիս մէջ,
 Կակուղ ձեռամբ փայփայելով:
 Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր,
 Իբրև հրեշտակ նուագելով:
 Զիս հանգչեցուր ի հող ու դուն,
 Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:
 «Նորեկ որդւոյս կենացն արև
 Չեզի համար փայլի հայեր»,
 Այսպէս յայնժամ դու կերգէիր,
 Օրօրոցիս նստեալ քովեր:
 Անոնց համար շիջաւ, ու դուն՝
 Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Վերջին համբոյր՝ մ տամ քեզ մայրիկ,
 Հատուցանես զայն սիրելւոյս,
 Վերջին անգամ գրկեմ մեր հող
 Ոյր արդ կիջնիմ ի ծոցն անլոյս:
 Խաչ մը տնկէ՛ վրաս, ու դուն՝
 Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

ՀԱՅՈՑ ԳԻՆԻ

Բաժակներ անունը, եղբարք,
 Լիք լիք բաժակներ գինով,
 Կարմիր ու ճերմակ գինի,
 Մեզ լինի անուշ համով:
 Բերներու տաններ անվախ,
 Չէ դա խառնած կամ խարդախ,
 Նեկտար է և ո՛չ գինի:
 Խմենք՝ մեզ անոյշ լինի:
 Արաքսայ ջրով ցողած,
 Հայոց արևով հասած,
 Հայոց աղջիկ է քաղել,
 Բընքոյշ ձեռներով քամել:
 Այս բերքն է հայոց երկրին,
 Հայաստան տընկած Նոյէն,
 Անմահ երկնային գինին
 Նա խըմեց, երբ իջաւ սարէն:
 Այս անոյշ գինին խմողը,
 Սրտէն թող հանէ ոխը,
 Ամենքս էլ ասենք «ամէն»,
 Որ շատ տայ մեզի ամ էն:

ՇՈՒՇԱՆԻԿ

Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից,
 Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից.
 Մեր ամենիս դու մայր էիր գլխառատ,
 Արդ հեռանաս, մեզ մութ պատէ անփարատ:
 Քո սուրբ ձեռք մեր վէրքերը շատ անգամ,
 Լուանայիր, դեղ դնէիր ամեն ժամ,
 Քո մազերից ոլորէիր վիրակապ,
 Քո բոլոր կեանքդ ազդիդ համար է ազապ:
 Արդ հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,
 Վրաց ազգը քո խնամօք պերճանայ,
 Հայաստանը զրկի իւր սուրբ Շուշանից,
 Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից:
 Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի,
 Մեր սիրտ հոգին քեզ հետ տանիս մաքրուհի,
 Գընաս բարեաւ մեր լոյս հաւատն քեզ ընկեր,
 Աջն ու խաչը քեզ պահապան զօր գիշեր:

ԱՐԲՈՂԻ ԿՏԱԿԸ

Ընկերք մաշուելով պօտազբայից.
 Շուտ կը հեռանամ ես ձեզանից.
 Կարճ միջոցով լինելով միտած,
 Չէք տեսնիլ ինձ այսպէս արբած:
 Այն գինետան մէջ ինձ թաղեցէք.
 Ուր ամենից շատ արբում էի,
 Այնտեղ գերեզման պատրաստեցէք,
 Ուր տակառի տակ ես պարկէի:

Ոտներս դէպի պատն արէք,
 Իսկ գլուխս դէպի ծորակը.
 Որ երկու ձեռքով բռնէի ես,
 Գինիով լիք մեծ բաժակը:
 Ինձ հին տկի մէջ պատանի տեղ,
 Լաւ փաթաթեցէք, կուպր քսեցէք
 Եւ որպէս մեղքիս թողութեան դեղ,
 Կէս թունկի գինի բերանս ամէք:
 Անձէս թաղեցէք, չամէք զանգակ,
 Ի սէր Աստուծոյ, թաղմանս ժամանակ.
 Բաժակներ չըրխկացրէք դորա փոխանակ,
 Գինով թրջեցէք արբողիս գիակ:
 Դամբանական դուք չ'գրէք տառ,
 Որքան ապրելուս, վարքիս համար,
 Միայն ասել հինգ բառ մեծատառ.
 «Սա էր արբեցող սաստիկ թշուառ»:
 Բայց դեռ քանի որ չեմ մեռել,
 Բերէք խմեմ կէս թունկի գինի,
 Հոգեհանս գինու սումբի կարծելով՝
 Գուցէ ձեռք չ'տայ, երբ արբած տեսնի:

ՎԵՐՁԻՆ ԳԱՐՈՒՆ

Գարունն է եկել նախշուն թեւերով,
 Նախշուն թեւերը պէս-պէս ձեւերով.
 Գոյն գոյն ծաղիկներ՝ կարմիր ու սպիտակ.
 Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով:
 Երկինք ու երկիր քեզ տօնեն զարուն,
 Զի ես քան զամէն եղանակ սիրուն.

Նա անձրև ցօղէ առատ 'ի վերէն,
 Դա օրհնել տայ քեզ եկւոր հաւերուն:
 Ոսկի արևը փայլէ քեզ վերէն,
 Կենսաբեր հովը փռչէ լիռներէն.
 Ա՛խ, աղնիւ գարուն, եղանակ սիրուն,
 Արդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ Տէրէն:
 Գլխաքարը երթամ 'ի պարտէզ այգուն,
 Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն ի բուն.
 Չ'կայ ինձ հանգիստ, ցնծութիւն սրտիս,
 Ես վաղ եմ մոռցել՝ զի՞նչ անդորր է քուն:
 Մեռած պատանքած գետնին կեանք տուար,
 Տերևթափ ծառին ստուերախիտ արար.
 Քեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր,
 Ինձ մենակ խղճիս էսպէս մոռացար:
 Առաջ գնն, գարուն, դէպի հիւսիսն ի խոր,
 Գնն, կանանչցո՛ւր դու անդ սար ու ձոր,
 Որոց անհամբեր քեզ կան՝ տո՛ւր բարև,
 Քու ուրախ գալստեամբ նոցա զուարճացուր:
 Կուգաս գալ տարի՝ դու ինձ կու գտնես,
 Ո՛չ 'ի մեր այգին և ո՛չ 'ի պարտէզ,
 Այլ անդարթ բընով հողի տակ պառկած,
 Գերեզմանաքար մի վրաս կը տեսնես:

63

ԹԷ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Թէ հայրենեաց պսակադիր,
 Գողթնի քնարը լոել են,
 Երկնից թող գան անմահ հոգիք,
 Հայոց քաջեր պսակել:

Մասեաց դագաթ թող գան բազմին,
 Երկնից գունդ գունդ հրեշտակներ,
 Ասուած իջեր ի հայաստան,
 Հայոց արիւն հոտոտել:
 Փախէք ամպեր Շաւարշանէն,
 Այ մի ցօղէք ձեր ցօղեր,
 Շաւարշանը ոտգւած է,
 Հայոց քաջաց արիւնէն:
 Եւ կը ծլին ու կը ծաղկին,
 Այս դաշտին մէջ ոչ խոտ վարդ,
 Այլ Վարդանայ խնկած երկիր,
 Պիտի ծաղկի սուրբ հաւատ:
 Քանդակագործ քաջ Եղիշէն,
 Գրիչ ի ձեռն գայ յԱրտաղ,
 Չափէ ձեէ գրէ դրոշմէ,
 Կամք մահ հաւատք Վարդանանց:

64

ԳԻՇԵՐ ՅԵՐԵԿ

Գիշեր ցերեկ կը հառաչեմ,
 Ա՛խ, օրիորդ քո սիրուդ,
 Սև աչերուդ, վարդ այտերուդ
 Չարնուեցայ ինչ օգուտ:
 Աչերուդ, այտերուդ,
 Եւ ոսկեթել մազերուդ,
 Միայն քեզի սա կ'աղաչեմ,
 Որ ունենաս քիչ մը գութ:
 Գիտե՛ս, անգութ, որ պատանին,
 Չի դիմանար այս ցաւուն,

Քեզի համար ալ չի դազրիր,
Աչքիս արցունքն օրն ի բուն:

Քեզի միայն կ'յիշեմ,
Թէ բուն ըլլամ թէ արթուն,
Թէ մութ ըլլայ, միտքս կուգաս,
Նոյնպէս և առաւօտուն:

Շատ աղուորներ թէպէտ տեսայ,
Սիրտս միայն քեզ սիրեց,
Ո՛հ, չեմ գիտեր թէ քո սէրդ,
Սրտիս մէջ ո՞վ արծարծեց:

Ա՛խ, բու խաթուն մարիկդ,
Իրեն փեսայ ո՞վ ընտրեց,
Գերի կըլլամ քու մօրկանդ,
Եթէ զիս զուրս չի ձրգեց:

Ո՞ւր էր, որ սա աղջիկը,
Ինձի ըլլար ամուսին.
Նիստ երջանիկ պէյերու պէս
Ապրէինք ՚ի միասին:

Թոմպուլիկ կլօրիկ դաւկըներս,
Մեր չորս դին,
Ես ծխէի իմ սիկառս,
Ասեղնագործէր իմ տիկին:

Քեզի համար թափառական
Ես սար ու ձոր ընկեր եմ,
Քեզի համար ձրգիկ ձրգիկ
Ոսկոռ ու մորթ հղեր եմ,

Ալ բաւական իս խոցոտիս,
Անս ոտքդ ընկեր եմ,
Ըսէ ինձի բառ մ'երջանիկ,
Թէ ես ալ քեզ կը սիրեմ:

ՆՊԱՏԱԿՍ ԳԷԹ ՄԻ ՄԱՍԸ

Նպատակիս գէթ մի մասը կատարէր,
Եարալի բըլբուլ եմ.
Հայրենիքիս ազատութիւնը տեսնեմ ու մեռնեմ.
Եար արի, տուն արի, շուտ արի բըլբուլ,
Սարերի գիւլն եմ:

Ախ իմ դարդս շատացել է չեմ կարող,
Եարալի բըլբուլ եմ,
Դարդի ձեռքից ո՞ր ջուրն ընկնեմ ազատուեմ,
Տուն արի, շուտ արի, եարալի բըլբուլ եմ,
Սարերի գիւլն եմ:

Ա՛խ, անբախտ հայդուկիս Տէր եմ, գու խղճայ,
Եարալի բըլբուլ եմ,
Մի թողնիր թուրքի գնդակով զուր գնամ կորչեմ
Եար արի, տուն արի, շուտ արի բըլբուլ եմ,
Սարերի գիւլն եմ:

ԻՄ ԵՐԳԸ

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից,
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բըսած ծաղկի նրման դաշտումը:
Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգած գարունս, ամառ դարձնում են,
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երէկը կրկնվում է միշտ այսօր:

Ասպարէզս նեղ է ճամբան ու փրշոտ,
 Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ,
 Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի:
 «Դա, ասում են, իբ կեանքումը դարդ չունի»:

— Ես դարդ ունիմ, դարդս մեծ է ու պէսպէս,
 Բայց չեն տեսնում ձեր աչերը կարճատես:
 Երբ ես մայր անհիւրընկալ այս աշխարհ,
 Քանի բոպէ բազըլ ժրպտաց ինձ պայծառ:

Հն, ասացի, դարձել է իմ անիւր,
 Լըրացել է իմ վատ բազըլի չար թիւը»:
 Յանկարծ՝ փչեց անտուրժելի հիւսիսին,
 Թառամեցուց վարդ մանուշակ մայիսին:

Այսպէս չորցուց իմ նազելի հասակը,
 Իմ անողորմ, անազորոյն վիճակը:
 Ա՛խ, մօտեցիր օրհասական օր մահւան,
 Բեր քու հետդ սև հող ու նեղ գերեզման:
 Թո՛ղ սառ լինի իմ նոր տանը յատակը,
 Ծանրը քարէ վըրէս ծածկած վերմակը,
 Բայց, ա՛խ, երբոր կ'անցնի ամիս ու տարի,
 Կըմամոտտի գերեզմանը այն քարի:

Յետքը անգամ չի մնալու իմ խաչին.
 Իմ անունը իմ յիշատակ—կըկորչին.
 Բայց կ'ուզէի թողնել այստեղ մի արձան,
 Որ գարէ դար մընար, ամուր անկործան...

Ես երգեցի երգ ոլորուն ու անուշ,
 Իմ քնարի ձայնն էր մեղմիկ ու բընքուշ:
 Մի՛թէ այնքան անգութ կ'լինի Լեւոս գետ,
 Որ անտունըս անգամ կ'անէ նա անհետ:

ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի էլ լըռենք, եղբարք, հիմի էլ,
 Երբ մեր թըշնամին իբ սուրն է դըբել,
 Իր օրհասական սուրը, մեր կըծքին,
 Ականջ չի դընում մեր լաց ու կոծին,
 Ասացէք եղբարք Հայեր, ի՞նչ անենք,

Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին
 Դառով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
 Ջընջեց աշխարքից Հայկայ անունը,
 Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
 Խըլեց մեղանից թագ, կ' խօսք, կ' զէնք,

Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին
 Խըլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին,
 Մըշակի ձեռքիցն էլ խօփը խըլեց,
 Այդ սուր ու խօփից մեր շղթան կըռեց,
 Վայ մեզ, շղթայով կապւած գերի ենք.

Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին
 Սոսկալի զէնքը բըռնած մեր գլխին,
 Կուլ տալ է տալիս արտասունք առատ,
 Ազէխարշ բողոք վարուց ապիրատ.

Մեր գլուխը լալ է Եփրատ սուր պըտտենք,

Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին
 Լիրբ գոտղութեամբ լցրած իբ հոգին,
 Արգարութեան ձայնն հանած իբ սրտից

Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից,
Պանդուխտ հալածեալ, եղբարք սուր դիմենք.

Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին,
Անգոհ մեր բերած ծանր զոհերին,
Իւր լիրբ, նըզոված ձեռքը կարկանեց,
Ազգութեանս վերջին կապը պատուոեց.
Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք.

Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին,
Արհամարելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գայլազգեստ գառին մեզ գըլուխ դըրաւ,
Սուրբ խորան չունինք, արդ սուր աղօթենք.

Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, մարդիք ի՞նչ կ'ասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Չէ՛ն ասիլ որ Հայք արժանի էին,
Այդ ստըրկական անարգ վիճակին,
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք.

Մինչև երբ լըռենք:

Թող լըռէ մունջը, անդամալոյժը,
Կամ՝ որոց քաղցր է թըշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ երեսնք թըշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խըլինք:

Ու այնպէս լըռենք:

Վ.Ա.ՀԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հիմի էլ խօսենք, եղբարք հիմի էլ,
Նրբ ընտանեկան երկպառակութեամբ
Ուրիշ բան չունինք, բայց իրար դաւել,
Եւ սարսափելի ազգուրացութեամբ
Մեր նախնեաց ուխտը ոտքով կոխել ենք.

Հիմի էլ խօսինք

Հիմի էլ խօսենք, երբ քաջն Վարդան,
Վաթսուն հազարից, հազարով մնաց,
Մինչ մնացել էր Պարսից լոկ մատեան
Գունալը, մեր վաթսուն հազարի դիմաց
Երբ մեր վատութեամբ՝ սղջ կորուսել ենք.

Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ օտարից շատ
Մենք ենք մեր ազգի արիւնը խմում,
Մոխրատնով լցինք Դուին, Արտաշատ
Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն,
Երբ այս ամենը մենք կատարել ենք.

Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ հրապարակում
Պարսիկ առակ արել է Հային,
«Եթէ Ասորու նման աշխարհում
Չկայ մի վատ ազգ, բայց, քան Ասորին,
Էլ վատ է Հայը» մենք այս տանում ենք:

Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ իշխանութիւն
Ծախում է անարգ հացկատակներին,
Մինչ ստրուկ մարդիկ նստած մեր գլխին

Եւ մեզ կարծում են հող իրենց ստքի,
Ու մենք մեզ կոխող ստքը լիզում ենք.

Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ Լուսաւորչի
Բնիկ ժառանգի թեւերը կտրած,
Անարգ Պարսիկը՝ այս ու այն թեմի՝
Կարգում է տեսուչ ըստ իւր չար մտաց
Եւ մենք դեռ՝ սկէցցէ՛ արին» գոռում ենք.

Հիմի էլ խօսենք

Հիմի էլ խօսենք, երբ ձեռք ենք տալիս
Երբ ողջունում ենք մենք այդ չքերին,
Որ դրան շուն են, և մեզ տեսնելիս՝
Շուտ դիմակները դնում երեսին,
Այդպիսիներին դարձեալ պատում ենք.

Հիմի էլ խօսենք

էլ մեր երեսին մնաց մի կաթիլ
Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք.
Ո՛չ թէ չենք ուզում հողէց հող կորչիլ,
Թ՛չնամու արիւնով մեր թրին ջուր տանք,
Ազգ, եկեղեցի փրկենք ազատենք.

Ապա թէ խօսենք:

ՊԱՐԶ ԳԻՇԵՐ

Մի գեղեցիկ պարզ գիշեր,
Երկինքը լի աստղերով,
Եւ լուսինը մեզմ փայլում էր,
Կաթնանըման իւր լուսով:

Նա նայում էր, լռիկ մնջիկ,
Իբրև մի կոյս գէպի Վան,

Նորա աչքին երևում էր,

Բիւր ցաւալի տեսարան:

Նա տեսնում էր անթիւ քրդեր,
Առած սուր, թուր, հրացան,
Կոտորում են, կողոպտում են,
Աւերում են Հայաստան:

Եւ կարծես թէ երկնքիցը,
Ասում էր այդ լուռ վկան.
Վրայ հասիր հայ ազգասէր,
Զեռքից զնաց Հայաստան:

ԻՄ ՄԱՀԸ

Եթէ տըժգոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ...
Շողիանան ցաւքս ու հողիս,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:
Եթէ սընարըս՝ իմ տիպար
Մոմ մը վտիտ ու մահագէմ,
Ո՛հ, նըշուլէ ցուրտ ճառագայթք,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:
Եթէ ճակտովս արտօսրագօծ
Զիս պատանի մէջ ցուրտ գերթ վէմ,
Փաթթեն, դընեն սև դագաղը,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:
Եթէ հնչէ տըխուր կոչնակ՝
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ,
Դագաղս առնէ իր յամըր քայլ,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:

Եթէ մարդիկն այն մահերգակ՝
 Որք սև ունին և խոժոռ դէմ՝
 Համասրփոնն խոունկ ու աղօթք,
 Գիտցէք որ դեռ կենդանի եմ:
 Եթէ յարգարենն իմ հողակոյտ,
 Եւ հեծեծմամբ ու սրգալէն
 Իմ սիրելիքը բաժընւին,
 Գիտցէք որ դեռ կենդանի իմ:
 Իսկ աննըշան եթէ մընայ
 Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
 Եւ յիշատակս ալ թառամի,
 Ա՛հ, այն ատեն ես կը մեռնիմ...:

71

Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր Ի Ս

Լուռ գիշերին մտքիս գիմած,
 Շատ սուերններ ժողովեցան,
 Ընկերներս՝ մեռած, կորած,
 Հոգուս խորքով անցկացան:
 Նրանց աչքեր, բոց ու վրէժ,
 Սրտիս խորքը նայեցին,
 Սիրտս բաց էր խոր վերքի պէս,
 Նրանք այնտեղ սուգւեցին...
 Անհաւասար գոռ կռւի մէջ,
 Ընկաք իմ վեհ ընկերներ,
 Ա՛խ, ձեր շիրիմն իմ սրտումս է,
 Իմ վեհ, իմ սուրբ ընկերներ...:

72

ԹԱՂՈՒՄՆ ՔԱԶՈՐԴՈՅՆ

Ո՛չ փող զարկինք, ո՛չ արձագանք լեռնասոյզ
 Սարէ ի սար չարաշըշուկ տարին լուր,
 Ու չհրգեցինք ողբոց կրգեր սրտայոյզ,
 Երբ պատանւոյն բացինք մըռայլ փոսին դուռ:
 Գիշերական մոռնջ ստուերներ շուրջ կային,
 Երբ հրացանի կոթով ըզհող փորեցինք.
 Լուսին միայն զողգոջ շողայր մեր գլխին,
 Սուգ էր պատեր ըզգաշտ բըլուր և երկինք:
 Պէտք չէր գագաղ և ո՛չ ճերմակ պատանքներ,
 Որով գոցուէր ազատորդին քաջորդին.
 Նա յեռ մարտին կարծես յոգնած կու հանգչէր
 Ու վերարկուն կարմիր բաւ էր իւր անձին:
 Անձայն ու կարճ ննջեցելոց մի զրուցից
 Մեր բաջ Տէրտէրն, զինուոր Հայոց ու Աստուծոյ,
 Գովեց ըզմահն և զքաջութիւնն իւր օրհնեց,
 Թոյլ չի տըւաւ հառաչ մ՝ ու ճիչ հանելոյ:
 Բայց երբ զըլուխն ի բարձ դըրինք հողաշէն,
 Տեսանք զգեղ ճակտին ու վէրքըն պայծառ.
 Մէյ մալ քամի յանկարծ փրչեց ցրտաշունչ,
 Լուսնին շողերն եկաւ գոցեց մըթին ամպ,
 Ու մեր սարերն զերթ ուրուականք անմոռունչ,
 Սև գլուխնին տնկած դիտեն ասլու թեամբ:
 Յայնժամ ցուրտ ցուրտ հող լեցուցինք իւր վրան
 Խաչ մը դրինք, ինչպէս իւր մօր պատուէր ետ,
 Ո՛չ այլ շըբեղ արձանագիր, ո՛չ տապան,
 Զինքն մինակ թողուցինք իւր փառքին հետ:

73

ՔԱՅԼԵՆՔ

Յոռահատուել մեղք է ընկեր,
Արիացիր, ոգի առ,—
Նայիր, փայլեց հեռուում լապտեր,
Մենք էլ կառնենք շուտ դադար:
Արիացիր, սիրտ առ, ընկեր,
Շարունակենք մեր ուղին,
Լսիր կարծեմ՝ թէ զանգակներ
Ղողանջացին սարերէն...
Ահա բացւեց աղօթարան,
Վստահ ընկեր, առաջ քայլենք,
Զինուոր ենք մենք ազատութեան
Եւ անփորձ տեղ կը հասնենք...

74

ԿՈՒԻՆՅԵՔ ՏՂԷՐՔ

Կուեցէք աղէրք, կուեցէք քաջ-քաջ,
Անվեհեր կանգնած թշնամու առաջ,
Յանկալի է մեզ միշտ ազնիւ մահը
Հեռու մեզանից ոսոխի ահը
Այս անգամն էլ ցոյց տանք թշնամուն,
Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն:
Ահա քիւրդերը փախչեն սարսափած,
Ահա դիակներ արեամբ շաղախուած,
Կրակ տեղացէք անդադար կրակ,
Փառք մեր ղէնքերին, առատ է զնդակ,
Այս անգամ էլ ցոյց տանք թշնամուն,
Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն:

Մենք տօնախմբենք, մեր հախնի քաջեր,
Մեզի կսպասեն մեր սէգ եղբայրներ,
Ազատ չենք ծնւած, գէթ մեռնինք ազատ,
Եւ մեր սուրբ հոգին պահենք անարատ,
Դէ՛հ, կուէք աղէրք, մինչև շունչ վերջին,
Արժանի լինինք փառաց պսակին:

— Մեռնենք յուսալով մերն է ապագան,
Մեռնենք բայց կեցցէ, կեցցէ Հայաստան,
Այսպէս յորդորեց և ընկաւ արին՝
Թողնելով մեզնում յիշատակ բարի
Ահեղ կուր մէջ, անսման հերոս,
Անմոռանալի, կտրիճ Մարտիրոս...

75

ՀԱՅԴՈՒԿԻ ՆՇԱՆԱԾԻ ԵՐԳԸ

Հայաստանից եկած զինուոր,
Միրահան, կեանքիս հատոր,
Քեզ կսպասէի օրէց օր
Շողշողուն զէնքերիդ մատաղ:
Արկածալից կեանք խորհրդով,
Լեռներ ես անցել շտապով,
Արեգակն է այրել տապով,
Սևորակ պատկերիդ մատաղ:
Կրգաս զոհերի երկրէն՝
Պատմէ Մովսէսի նստիւթէն,
Խօսիր Գիսակի խօսքերէն՝
Սրբաշարժ խօսքերիդ մատաղ:
Զով Սասունի հովէն կուգաս,
Վանայ Ծփան ծովէն կուգաս,

Անգրանիկի քովէն կուգաս
Սարձոր ընկած գլխիդ մատաղ...

Սերոբ-փաշի գերեզման,
Տեսել ես, իմ սիրական,
Տեսել ես ողջ Հայաստան
Էգուցւայ ճամբիդ մատաղ:
Հայաստանից եկած զինուոր.
Սիրական կեանքիս հատոր,
Քեզ կսպասէի օրէց օր,
Ապագայ յոյսերուդ մատաղ:

ՇԽԱԼՈՒ ՄԱՀԸ

Չորանար այն ձեռքը, որ քեզի դիպաւ,
Քաջ Շխալի, զործակատար Ստեփան,
Կոյր փորձանքը որ Յուզայից քեզ հասաւ,
Տունդ թողեց անմխիթար, Ստեփան:

Երբ որ պատմութիւնդ անել սկսեմք,
Ֆէլու, Ֆէնտ խօսքերդ որի հետ խօսեմք,
Եահու, ես մատէթ էլ ունից լսեմք,
Ծիծաղաշարժ լեզուդ, ճարտար Ստեփան:

Քաջ անունդ պիտի յիշուի անպակաս,
Ընկերներուդ սրտերու մէջ միշտ դու կաս,
Կեանքիդ թելը կտրեց մահը վաղահաս,
Հաղորդութեան արժան չեղար Ստեփան:

Պատկերդ ահարկու, դու բարձրահասակ,
Պարսկաստանի Սալմաստ գաւառի գաւակ.
Չնչին մարդու ձեռքով եղար նահատակ,
Հայրենիքի թունդ սիրահար Ստեփան:

Քու մահդ Ձիւննուն սաստիկ ցաւ տեց,
Սիրեցեալիդ սրտին դառար ցաւ ու ցեց,
Համարեա թէ ողջ Թիֆլիզը ցնցեց,
Շատ մարդ ողբաց քեզի համար Ստեփան:

ԶԻՆԻԱԾ ՊԱՏՐԱՍՏԻԱԾ

Զինւած պատրաստւած, Զէյթունի քաջեր,
Սուրբ ազատութեան վկայք անվեհեր.

Վրէժով լցւած առիւծի նման
Քաջ-քաջ կուռում են թուրքի դէմ դաժան:

Կեցցէք, դուք միշտ Զէյթունցիք

Որ պիտ փրկէք հայրենիք,

Դուք հայաստանի պարծանք,

Մեր կեանքիցն էլ ձեզ կտանք:

Մանուկն օրօրոցում հանդիստ չէր պառկած
Խնդրում էր մօրից «բազուկներս բաց»...

«Ես չուզեմ մնալ այս օրօրոցում,
Մինչ իմ եղբայրներ լաց կոծ են անում»...

Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք

Որ պիտ փրկէք հայրենիք,

Դուք Հայաստանի պարծանք,

Մեր կեանքիցն էլ ձեզ կտանք:

Ինչ ես կաշկանդել, քանդիր ինձ մայրիկ,
Ես կուզեմ կուել թուրքի դէմ ճարպիկ,

Տուր ինձ հրացան և մի սուր դաշոյն,
Ես կուզեմ ծծել կաթի տեղ արիւն:

Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք,

Որ պիտ փրկէք հայրենիք, և այլն:

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՅ

Կովկասի քաջեր խմբեր կազմեցէք,
Քաջ Անդրանիկին օգնութեան հասէք,
Առած իր շուրջը զինւորներ ութսուն:
Մաքրէ ճանապարհ նա դէպի Սասուն,
Սուլթան սարսափած, ճարը կտրւած,
Հազար ոսկի է գլխին խոստացած:

Հայ պատանիներ, շուտով շարժեցէք,
Երբէք միք վախնայ, սուրբը շարժեցէք,
Հասել է ժամը սուրբ ազատութեան,
Կենալու ժամ չէ շուտով քայլեցէք:
Սիրենք միութիւն չանենք վատութիւն,
Ունենանք հայեր սուրբ ազատութիւն:

Օտար հողի մէջ չըմնանք հայերս
Հերիք է հային այս պանդխտութիւն,
Թող չը ծաղրէ մեզ անզուրթ թշնամին
Մինչև մենք հասնենք մեր նպատակին.
Սիրենք միութիւն... և այլն:

Քաջ Անդրանիկը անվախ, սուր առած,
Հայաստան գնալ վաղուց էր ուխտած,
Աջ ու ձախ ջարդել տաճկաց զինւորին,
Քիւրդերից մատաղ բերել վանքերին:
Դէ՛հ, Շէքիր փաշայ, մտածիր հնար,
Հազար ոսկիքով անես գլխիդ ճար:

Կովկասի քաջեր, առիւծի ճուտեր,
Սիրէք ձեր սուսեր, առէք նիզակներ,
Հայ օրիորդներ, պճնեալ տիկիներ,
Ծախէք ձեր զարդեր, առէք գնդակներ:

Տ Ր Տ ՈՒ Ն Ձ Ք

Հարուստը ձեր ոսկին տուէք մեր ազգին,
Ձեր անգին անունը յիշենք սերունդներ:

Դէ՛հ հայ ընկերներ, հեծէք ձեր ձիեր,
Բաց թողէք սանձեր, անցէք սար ու ձոր,
Ահա կուրի դաշտ, թշնամին անհաշտ,
Մեր սուր թող ուտէ օսմանեան վաշտեր:
Ասաւ քաջ Մուրադ, առած եմ խրատ,
Կամ կուել ազատ, կամ մահ անարատ:

Է՛հ, մընաք բարով, Աստուած և արև,
Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերև...
Ասող մ' ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից,
Ասողերն ի՛նչ են որ՝ եթէ ոչ անբիծ
Եւ թշուառ հոգւոց անէծք ողբազին՝
Որք թըռին այրել ճակատն երկնքին,
Այլ այն Աստուծոյն՝ շանթերո՛ւ արմատ՝
Յաւելուն զէնքերն ու զարդերն հըրատ...:
Այլ ո՛հ ի՛նչ կ'ըսեմ... շանթահարէ զիս,
Աստուած, խոկն հըսկայ փշրէ հիւլէիս՝
Որ ժպըրհի ձգտել՝ սուզել խորն երկնի,
Ենել աստղերու սանդուխն անալի...:
Ողջոյն քեզ, Աստուած դողդոջ էակին՝
Շողին՝ փըթիթին՝ ալւոյն ու վանքին,
Դու որ ճակատիս վարդն և բոցն աչերուս
Խըլցիլը թըթուումս շըթանց՝ թռիչն հոգւոյս,
Ամպ տըլիւր աչացս, թեք տըլիւր սրտիս,
Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժպտիս,

Անշուշտ ինձ կեանք մը կազմած ես ետքի՛,
 Կեանք մ' անհուն շողի՛ բոյրի՛ աղօթքի.
 Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
 Հոս մառախուղի մէջ համր՝ անշըշունջ,
 Այժմէն թող սը շանթ մ' ըլլամ դալկահար՝
 Պլլըւիմ անուանդ, մոքնչեմ անդադար,
 Թո՛ղ անէծք մ' ըլլամ քու կողքդ խըրիմ,
 Թո՛ղ յորջորջեմ քեզ «Աստուանձ ոխերիմ»:

80

ՀԵՌԱՒՈՐ ԵՐԿԻՐ

Հեռաւոր երկիր, նստած դու նժդէհ,
 Հայրենեաց բաղդին մօտուց ես տեղեակ,
 Քարոզ քաջարի նոր սկզբանց վեհ,
 Յեղափոխութեան ձայնատու Հնչակ:
 Նոր գաղափարի քո ցանած սերման,
 Ազնիւ պտուղներ հասուն են արագ.
 Կարին և Պօլիս որոտման նման,
 Անդրանիկ շարժումը ծնաւ քե Հնչակ:
 Չար բունակալը հայոց կեղեքիչ՝
 Վախէն պահուեցաւ ոսկէ գահի տակ,
 Խուլ Եւրոպայի թնդաց մէն գահլիճ,
 Հայը ցնցուեցաւ, կարմրեցաւ Հնչակ:
 Այսօր քո սերմանց նոր պտուղք անձ,
 Հասան, կարմրին արեան նմանակ.
 Կենաց և մահու սուրբ ժամ մերձենայ,
 Կարմիր հրաւերիդ ակն ունինք Հնչակ:
 Կոչնակդ հնչեցուր, հնչեցուր արագ,
 Թող հայք ոտք ելնեն—ծագէ մինչև ծագ,

Փշրէ ժանտ շղթան, ծագէ նոր արև,
 Ազատ ենք, հնչէ, ոսկէգօծ Հնչակ:

81

Ե՛ԼԷՔ Ե՛ԼԷՔ ՀԱՅԿԱՂՈՒՆՔ

Ազատութեան այն վառ սէրը,
 Թունդ որոտաց իմ սրտում,
 Իմ հայրենեաց սուրբ արիւնը,
 Ինձ պատերազմ է կանչում, տրայլալալամ:
 Ելէք, ելէք հայկազունք,
 Ելէք հայկայ զաւակունք,]]
 Ելէք, ելէք հայ եղբայրներ,
 Առնենք մեր սուր նիզակներ, տրայլ...
 Այս օրերը մեր քաջ կեանքին,
 Նւիրական թող լինի,
 Ով սիրում է ազատութիւն,
 Թող չըմոռնայ հայ անուն, տրայլալալամ:
 Ելէք, ելէք հայկազունք,
 Ելէք հայկայ... և այլն: (Կրկնել)
 Ահա եղբայրք, հայ եղբայրներ,
 Սիրէք զրահ, սուր զէնքեր,
 Մահի գաշտում Շաւարշանայ,
 Մեզի հրաւեր կը կարդայ, տրայլալալամ:
 Ելէք, ելէք հայկազունք,
 Ելէք հայկայ զաւակունք,
 Ելէք, ելէք հայ եղբայրներ,
 Առնենք մեր սուր նիզակներ, տրայլալալամ:

82
Լ Ռ Ե Յ

Լըռեց: Ամպերը եկան ծածկեցին
 Երկինքն, ու Լուսինն աչքէս խըլեցին.
 Մընացի մենակ՝ հոգիս վըրդոված,
 Ձեռներըս ծոցիս, գլուխս քարշ արած:
 Եւ այնուհետև ամեն իրիկուն
 Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
 Նորա տըխրամած դէմքը նայելիս՝
 Յիշում եմ թըշուառ վիճակը ազգիս:
 Ա՛խ, ցոլա՛, փայլէ՛ տըխրագէմ Լուսին,
 Գուցէ քու փայլից փայլ տաս և Հային.
 Պատմէ շատերուն Վարդանի մահը,
 Կամ՝ Խնչպէս կորաւ հայ ազգի գահը,
 Կամ Խնչ վեհ սիրով սիրում էր Վարդան
 Մայրենի հողը—աշխարհն Հայաստան:

83

ԵՍ ՀԱՆԵՅԻ ՍՈՒՐԸ...

Ես հանեցի սուրը՝ պատեանից
 Արտասուքովս օծեցի,
 Տրտմաւ անուշ սիրականս,
 Երբ իմ ուխտս կարգացի:
 Նա երգեցաւ այն սրովը,
 Ձը ինայիլ թուրքերուն,
 Այս պայմանով աշխոյժ քաջին,
 Սուր, հրացան յանձնեցի:
 Ոգևորած կրկնեց քաջը,
 Ո՛ւմ կը սպասենք, վայ՛ մեզի,

Նա հեռացաւ մոնչալով,
 Խնչպէս կորին առիւծի:
 Ասուած սիրէք, հայ աղջիկներ,
 Եկէք, խորհենք միասին,
 Այսուհետև ալ չը սիրենք.
 Կուից փախչող վախկոտին:
 Խիստ զգւելի կերպով նայենք,
 Ոսկու սիրուն մեռնողին,
 Համբոյրի տեղ թոյն կամենանք,
 Թուրքից վրէժ չառնողին:
 Քեզի մեռնեմ Տիրան-Տիրան,
 Քաջ Ձէյթունի սիրական.
 Հազար երանի այն հայ կնոջ,
 Մարդ կունենայ քեզ նման:
 Բաբէնիկիս օրօրենք ուքով,
 Վառօղ մաղենք ձեռքերով,
 Շուն սուլթանի հետ գործ ունենք,
 Ձէյթուն դեռ չէ ապահով:
 Տիրանի պէս քաջեր սիրենք,
 Արժանի են մեր սիրուն,
 Որոնք գիտեն սրով պահել,
 Կին չեն յանձնիլ թուրքերուն:

84

ՀԵՐԻՔ ՈՐԴԵՍՔ

Հերիք որդեաք, այսքան տարւայ տառապանք
 Հերիք, դաժան անգութ քրդին ուն ընկանք.
 Քանի խոնարհ գլուխ տուինք գայլերին,
 Այնքան ծանրը բեռը դրին մեր վզին:

Հերիք, ելնենք, ցոյց տանք՝ թէ մենք հարազատ
Հին քաջերու արիւն էինք և ազատ.

Թէև չունինք ոչ սուր, ոչ թուր ոչ նիզակ,
Մեր բահերն էլ կ'անեն նորանց շանսատակ:

Ինչո՞վ են նրանք մեզ արիւրու արժանի,
Նորանք մարդ չեն, այլ լեռնական վայրենի.

Մերն է ձիւրքը, մերն է ուսում ու հանճար,
Մերն է հողը, մենք ենք նորա տէրն արդար:

Հերիք, ելնենք, և այլն:

Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում,
Նորա մեր վրայ լըռիկ արցունք են թափում.

Չեն խնայիլ, թե ու թիկունք կը հասնին,
Շուտով կը գան, կը միանան սուրբ գործին:

Հերիք, ելնենք, ցոյց տանք, և այլն:

ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻԻՔ

Խաղաղ դաշտի որդիք լեռները ելնենք,
Արօր գութան մոռնանք, հրացան առնենք,
Խեղդած մեր բողոքը յայտնենք զէնքերով,
Եւ մեր արդար դատը վարենք արիւնով:

Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,
Ճնշած հայի որդիք հարազատ:

Քան թէ ամեն վարկեան կենդանի մեռնել,
Ազատութիւն վճուել և ազատ մեռնել,
Հինգ դարով մեռեալ ստրուկ հայ ազգը,
Այսպէս պիտ' լուծէ եղբարց վրէժը:

Մեր կեանք մեր մահ թող լինի ազատ,
Ճնշած հայի որդիք հարազատ:

Ստրկութեան շղթան պարզ շառաչում է,
Ազատութեան ճնշած ձայն հառաչում է,
Ազատ լեռներ լինին թող մեր ապաստան,
Եւ ընդարձակ հողերը Հայոց գերեզման:

Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,
Ճնշած հայի որդիք հարազատ:

Յրւած խմբեր հասնեն Զէյթունից ի վան,
Շտապենք միանանք կազմենք խումբ հայկեան,
Հայի ազատութեան պարզենք վառ դրօշակը,
Կեանքը մահով կապած, գնենք նոր պտակ:

Մեր կեանքը, մեր մահը թող լինի ազատ,
Ճնշած հայի որդիք հարազատ:

ՎԱՆԵՑԻ ԳԵՂՁՈՒԿԻ ՏԱՂԸ

Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է զարթելու.
Էրթամ ախոս, գոմշուկներըս լըծեմ՝ գութան վարելու,
Դէհ, գոմշուկներ, ելէք, ելէք, արտը երթանք աշխատինք
Հարկ ու խարջի վատէն մօտ է. վօթենք արուն ու
քրտինք:

Հայի գութան, հայի գութան, որի՞ համար կը ջանաս,
Ո՞վ քեզիմով կը տանջուի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս,
Այն օր, երբ քեզ ձեռքըս առի՝ ազատ օրըս կորուցի
Անվախ սիրտս վհատեցաւ, հոգիս թուրքին մտանեցի

Բաւ է, գութան, մեր տանջանքը, համբերութիւնն
վերջ ունի.

Դուն տեսնիր, որ մեր դուշմանը ամօթ, խելք ու
գութ չունի:

Արի՛ փըշըիմ ես քու խփը, տանք դարբինին կոնու-
կըսենք—կոփենք սուր ու սուրեր՝ դուշմանի դէմ

կըրուելու:

Եղբարք հայեր, առէք խփը, տուէք դարբինին

կըսելու,

Կըսել—կոփել սուր ու սուսեր Հայաստանը փրկելու:

ԶԷՅԹՈՒՆ ԱՆԿԱՆ

Զէյթնն, անկախ դու աշխարհիկ,

Քո սար ու ձոր են անառիկ,

Ամեն մի քար և անկիւնդ

Շաղախել է քո արիւնդ:

Հէլէ, հէլէ, հէլէ, հէլէ, հէլէ:

Դեռ ևս քո գորեղ բազկում

Ռուբինեանց երկիրն է շարժում,

Յիշատակ նախնի դիւցազանց

Պատկերն է քո քաջ գաւազանց,

Հէլէ, հէլէ

Մըրախդ է ունեցած կայքն,

Քո ապրուստն է և քո կայքն,

Բռնութեան լուծն թուրք մարդու

Էդ գէնքով ես թօթափել դու:

Հէլէ, հէլէ

Կեցցէ Գրիգորեան հաւատը,

Հայ պահել իւր ժողովուրդը.

Ո՛չ մի կըօն աշխարհիս վրայ

Զունի ազատ ոգին սորա:

Հէլէ, հէլէ

ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԿՌԻՆՔ

Մենք պէտք է կուենք և ոչ լաց լինենք,
Ազգի կորուստը գէնքով յետ խլենք.

Այսքան դար լացինք, ո՞վ է լսողը,

Մեզ ի՞նչ շահ բերեց արցունքի ծովը:

Այլևս չըլանք և ոչ լաց լինենք,

Կրակած սրտով մեր գործը վարենք,

Անվեհեր քաջին այս է պատկանում,

Միշտ ազատ մեռնել կուի լայն դաշտում:

Մոլի և երկչոտ տաճիկը թո՛ղ լայն

Երբ հայ քաջի դէմ կուի դուրս կուգայ,

Մենք վախեցող չենք մահից տանջանքից,

Եւ ոչ էլ մահու դաժան գնդակից:

Անէ՛ծք այն հօրը չի մղում որդուն,

Որ ազգի սիրուն նա թափէ արիւն.

Ամօթ այն հային և բիւր նախատինք,

Որ ազգի սիրուն չի գործում բարիք:

ԶԱՐԹԻՐ ՍԻՐՏ ԻՄ

Զարթիր, սիրտ իմ վշտահար,

Նոր սուաւօտ բեղ ծագեաց,

Պարք մուգայից շուրջ զքե

Պահեն զգահոյսդ յարհաւրաց:

Պանծա՛ դիւցազն մեծ արքայ փառօք,

Ճեմս առեալ յերթս քո երգով,

Ո՛չ արև, ո՛չ լուսին, ո՛չ աստղեղբ, ո՛չ երկին

Հասանին քոյդ փառաց, յաւերժացիր:

Ուրախութեան օր է այս.
Բերկրեալ սրտից դեռահաս.
Պարք մուգայից շուրջ գըլ
Պահեն զգահոյսդ յարհաւրաց:

ՀԱՅՐԵՆԻՔ ՍՐԲԱԶԱՆ

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թըռչում եմ դէպի քեզ հողուովս անդադար.
Բայց, աւանդ, այս բանտում փակեա՞ծ եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կուլում և ես:
Հանապազ տանջուեցայ քո ճակատագրով,
Արտումս շլթաների ձայներ կրելով...
Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ա՛խ, կամ ոչնչանալ, կամ լինիլ ազատ:
Ի՞նչ ընկերներովս հեշտ է ինձ կուլել,
Եւ սուրբ գործքի համար քաղցր է մեռանիլ,
Բայց, աւանդ, այս բանտում փակեա՞ծ եմ անտես
Պատերազմի դաշտում չեմ կուլում և ես:
Չը գիտեմ, ի՞նչպէս է կռիւն հրդեհվում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...
Տարվում է միշտ համբաւ սպանութեան անեղ
Թափում է ազգ-արիւն, բայց ես չեմ այն տեղ:
Ա՛խ, քո աղատութիւն փոթորկի մէջ է,
Եւ վառ արշալուսով քո օր կարմրում է...
Թո՞ղ այս տեղ չարչարվեմ անծանօթ կապված,
Միայն քեզ, Հայրենիք, տեսնեմ տղատուած:

Թէ ԻՄՍ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Թէ իմս հայրենեաց քնար սգաւոր
Հեծէ տխրագին՝ իմ հոգիս է այն,
Թէ նորա բեկբեկ թելեր վշտաւոր
Խօսի ողբաձայն՝ իմ սրտիկս է այն:
Թէ հայ մուսային սրտաուռչ նուազ
Դեռ կ'եղերերգէ՝ հառաչանքս է այն.
Թէ Հայաստանի սև բաղդին հազազ
Լայ աղեկտուր՝ հեծեծանքս է այն:
Թէ իմս հայրենեաց կիսամեռիկ շունչ
Դեռ լսւի տխուր՝ իմ ողբերս է այն.
Թէ լռիկ մնջիկ հեծէ անշըշունչ,
Ո՛հ, անկարեկիր իմ լալիքս է այն:
Եւ Հայկայ փառաց յօժար ողբերգուն
Հարազատ լացողն իմ ձայնիկս է այն.
Չորս հազար տարուան պարծանաց դարուն
Արձագանք տուողն՝ աղաղակս է այն:
Իմ Հայաստանիս ցաւերուն հատոր
Ահա այս մաշած իմ կուրծքս է այն,
Սև սև թերթերուն էջ սրտակոտոր
Արտասուօք գրւած՝ իմ աղիքս է այն:
Թէ բանաս կարդաս արիւնոտ դաշտեր
Վարդագոյն ներկուած՝ իմ կողերս է այն
Թ՛աչքէ անցընես շամփրած նիզակներ
Մահահոտ ցցւած՝ իմ թիկունքս է այն:
Թէ Հայկ և Արամ, Վարդան, Վահաններ
Ինկած տիսանես՝ իմ ուժս է այն.
Թէ գէնը, թէ զրահ, թէ սուր, թէ սուսեր
Փշրած կոտորած՝ ոսկորներս է այն:

Թէ արեամբ հերկեն աղունը եղեմին
Նշխար քաջերուն իմ բիրերս է այն,
Թէ քաղցր ու ամրիժ ալիք եփրասին
Լեղի են դարձեր՝ արտասուքս է այն:

Թէ վճիտ գետերն, աղբերքն արծաթի
Լալիք առուակին՝ երակներս է այն.

Թէ Տիգրիս, Գեհոզն, Փիսոն մունչեն՝
Թէ պղտոր գնան՝ իմ արիւնս է այն.

Թէ սառնամանիք ձմրան բբաբեր
Լեռներն է պատեր, իմ դադաթս է այն.
Եւ քաղցրիկ զեփիւուն անուշակ հովեր
Ցրտագին փչեն, իմ շնչիկս է այն:

Թէ վտակ վտակ ցօղէ գլխատակ
Չայս տրտմավաստակ, աչքերըս է այն,
Թէ սրտաձայնիկ երգէ զՀայաստան.
Կանչէ զՀայաստան՝ անկեղծ սէրս է այն.

Թէ մթին խորշերն ու ձորեր լռեն:
Սևերով ծածկին մենաստանս է այն.

Թէ ողբ կըկարդան վայրերն եղեմին,
Ճնշած լերդերուս արձագանքն է այն:

Եւ Հայաստանիս հողերը ուխտիւ
Պինդ սիրով գրկողն՝ իմ ձեռքերս է այն.

Թէ կը համբուրեն կաթոզին խնդիւ՝
Ո՛հ, մայրակարօս շրթունքներս է այն:

Եւ հայոց լեբանց ցուրտ շուքերուն տակ
Ընկած ապարաղդ՝ իմ ճակատս է այն.

Մասեաց սուրբ բարերն իւր բարձն ու պսակ
Դրած սգաւոր՝ գլուխիկս է այն:

Եւ կիսակործան տաճարն հայրենի
Սև սուգ է պատեր՝ տաղաւարս է այն:

Ուր շիջեւալառ կանթեղ դեռ հիւժէ
Նուազ առ նուազ՝ իմ յոյսըս է այն:

Ուր տխուր նստեր, մազերն են ծածկեր
Իւր սևուկ աչքեր՝ սիրականս է այն.

Չեռքերն ի ճակատ, կունակն ի հողեր,
Յուսով կոթրներ՝ Հայաստանս է այն.

—Գերեզմանս է այն:

Ուր երբ տեսնեմ զիմ հէզն Հայաստան
Ի մէջ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն,
Յայնժամ թող մեռնիմ յիւր ծոց մայրական,
Չիմ վերջին շնչոյս միակ ուխտս է այն:

ՉԱՅՆԸ ՀՆՉԵՑ

Չայնը հնչեց էրգրումէն, հայոց լեռներէն,
Թունդ-թունդ ելան հայոց սրտեր զէնքի շաչիւնէն
Հայ գիւղացին դարուց ի վեր սուրբ չը տեսած,
Դաշտը թողուց, ու հրացան բահի տեղ առաւ:

Անմիութիւն տունը քանդող հայոց խեղճ ազգին
Հրաժարուեց ու տեղ տուաւ միութեան ձայնին:
Լսեց թուրքը ու սառեցաւ արիւնը խեղճին,
Չէր երազեր հայուն տեսնել նա այս վիճակին:

Եւրոպային հասաւ լուրը հայ գեղջկի շարժման,
Ուրախական ողջոյն տուաւ հայրենասէրներին:
Յնձան, մայր մեր ո՛վ Հայաստան, որդիքդ միացան,
Ութը դարու սուգ ու թախիժ քեզնից վերացան:
Ուսումն ու լոյս—ազատութիւն արդ քեզ են ընկեր,
Սուր, հրացան, երանդ ռազմի պաշտպան անվեհեր:

ՄԱՅՐԻԿԻՍ

Հայրենիքէս հեռացեր եմ,
 Խեղճ պանդուխտ եմ—տունն չունիմ,
 Ազիզ մօրէս բաժանուեր եմ,
 Տխուր-տրտում—քունն չունիմ:
 Մարէն կուգաք, նաշխուն հաւքեր,
 Ա՛խ, իմ մօրս տեսեր չէք.
 Ծովէն կուգաք, մարմանդ հովեր,
 Ախլըր, բարե բերեր չէք:
 Հաւք ու հովեր եկան կըշտիս,
 Անձէն դիպան ու անցան.
 Պապակ—սրտիս, փափազ—սրտիս
 Անխօս դիպան ու անցան:
 Ա՛խ, քու տեսքին, անուշ լեզուին
 Կարօտցեր եմ, մայրիկ ջան,
 Երնէկ, երնէկ, երազ լինիմ,
 Թռնեմ մօտդ, մայրիկ ջան.
 Երբ քունդ գայ, լուռ գիշերով,
 Հոգիդ գրկեմ, համբոյր տամ,
 Սրտիդ կըպնիմ վառ—կարօտով,
 Լամ ու խնդամ, մայրիկ ջան...

ԿՈՐԿՈՏԵԱՆԻ ԵՐԳԸ

Ձէնքերս տուր մայրիկս, սուրերս տուր քոյրիկս,
 Թէ որ ազգիս չգոհեմ, ապա ինչո՞ւ ճնար դիս:
 Առաւօտ արշալոյսին չորս կողմերս պատեցին,
 Չորս դին չորս հազար դօրքեր, չորս հազար թշնամիներ:

Ակատութեան վառ սէրը ինձ հանել է լեռները,
 Վատ տաճկի դէմ կուելու՝ Հայաստանը փրկելու:
 Լեռն սուրդ բաշեցիր, վրէժ առնել ուզեցիր,
 Երբոր գնդակը դիպաւ՝ «ախ Հայաստան» գոչեցիր:
 Մայր՞անունս Արամեան մականունս Կորկոտեան,
 Երբոր բանտից ազատեմ՝ դարձեալ խմբեր կ'կազմեմ:

ԱՂՔԱՏ ԿԻՆ

Յուրտը փչեց, ձմեռ սաստիկ,
 Ձիւնը ծածկեց գետինը,
 Ամենայն մարդ մտաւ իւր տունն,
 Պատսպարվել ցրտիցը:
 Ժամի դռնում դողդողալով
 Կանգնած է մի աղքատ կին.
 Նորա հանդերձ պատառ պատառ,
 Չունի շապիկ իւր հագին.
 Անհամարձակ նա իւր ձեռքը
 Պարզում է անցկացողին—
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Անտուն, անտէր աղքատին»:
 Ձեզ, սիրելիք, ասեմ ով էր
 Այս խղճալի աղքատը,
 Այն ցրտումը ոտաբոբիկ
 Կանգնած, ժամի դռնումը.
 Շատ ժամանակ դեռ չէ անցել,
 Երբ նա փառքով ու պատուով
 Ման էր գալիս փողոցներում
 Իւր սեպհական կառքերով.

Այժմ, վախով նա իւր ձեռքը
Պարզում է անց կացողին—
«Ողորմութիւն արէք, պարօն,
Անտուն, անտէր աղքատին»:
Ամենայն օր նորա դնում
Կանգնած էին շատ կառքեր.
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նուագարան ու տաղեր.
Ամենայն ոք ցանկանում էր
Լինի նորա բարեկամ,
Ամենայն ժամ նորան բաց էր,
Շռայլ քսակը մեծատան.
Այժմ զրկւած ամեն բանից,
Չունի անգամ հացի գին—
«Ողորմութիւն արէք, պարօն,
Անտուն, անտէր աղքատին»:
Ժամի դնում նա կանգնած է,
Աչքերը կոր, վիզը ճուղ
Նորա նախկին բարեկամքը
Չէն ասում նորան, «խղճուկ,
Եկ դու մեր մօտ, մենք կամորենք
Քո վիճակի դառնութիւն
Կը թուլացնենք ճակատագրիդ
Խիտ հարուածի սաստկութիւն»:
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վշտերին—
«Ողորմութիւն արէք, պարօն,
Անտուն, անտէր աղքատին»

Ո՞ւր ես, հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ
Մեր հոգին էրված, մեր սիրտը հարուտ...
Սե սուգ է պատել մեր կեանք ու օրին,
Սե թուխպ է կապել մեր սար ու ձորին.
Վայ սե գիշերն է մեր կեանքը մաշում,
Քո լոյս-երգերի կարօտն ենք քաշում,
Ո՞ւր ես, հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ,
Չէս երգում էլ մեզ դարնան առաւօտ...
Մեր օրն ու արե մըթնել սևացել,
Դըժոխքի դունն է մեզ կեանքը բացել
Բաղդն էլ մեզանից երես շուռ տել,
Խեղճ հային կրակի բերանն է գցել:
Էրվում ենք անմեղ, սըրտներս հարուտ
Քո դեղ ու դարման երգին ենք կարօտ
Սարէսար ընկած՝ մենք վայ ենք կանչում
Բաղդաւոր ազգեր մեզ չեն ճանաչում,
Քաղցած ենք, ծարու, անտէր, խղճալի,—
Հաց, ջուր ենք ուզում մեզ թոյն են տալի.
Մեր ճամբէն դժւար, մեր ճամբէն բարուտ,
Ո՞ւր ես, հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ...
Լեզուով չի պատմվի հայի դարդ ու ցաւ,
Հայի արիւնով աշխարհ ներկվեցաւ.
Միրտն է մըխկտում, սիրտն է սեանում,
Ոչ ով մեր ձէնին ահանջ չի դնում.
Ո՞ւր ես, հայ բըլբուլ, երգիդ է կարօտ
Էս սե օրերին մեր սիրտը հարուտ...
Բըլբուլ, դու մեզ հետ տանջւում ու լալիս,
Մեր անյոյս օրին՝ յոյս էիր տալիս:

Դու ասում էիր ազգ իմ մի սգայ,
 «Յուսով եմ վաղ ուշ գարուն պիտի գայ»,
 Բայց, անխ, չը տեսանք գարուն վարդահոտ.
 Ո՛ւր ես, հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ:

97

ՍԵՒ ԱՄՊԵՐԷՆ

Սև ամպերէն, ամպի՛ սրտէն
 Արտասունքի պէս թօն կուզայ.—
 Ա՛խ, ո՛ւր կ'երթայ իմ սև ճամբէն
 Ա՛յ բնիտ, եարար վերջ չը կ'ա՛յ...
 Եարար գարդու, չոր-գլուխս
 Ո՛ւրտեղ, պիտի քուն մտնի.—
 Սիրած, կարօտ սրտի վրա՛յ,
 Թէ՛ չօլի մէջ ամայի...
 Ա՛խ աչերս ո՛վ պիտ' ծածկէ,—
 Ազիս մէքս համբուրո՞վ,
 Թէ՛ ձունն ու հող քամին բերէ
 Սև-սհակի վույ-վույով...

98

ԻՄ ԻՂՁՍ

Սիրտս ուրախ կեանքս անվրդով
 Ազատ խօսել կուզէի,
 Հոգիս հանգարտ խաղաղ կերպով
 Անվերջ գործել կուզէի:
 Հայաստանի սուրբ երկիրնս
 Գընալ տեսնել կուզէի,

Դաշտ և հովիտ բարձր լեռներ
 Փռլթալ թռչել կուզէի:

Աւարայրի ասպարիզում
 Նետս լարել կուզէի
 Շուն-տաճիկի զինուած խմբին
 Ջարդել փըշրել կուզէի:

Անի քաղքից քար մի բերէք
 Վանայ Մշու մի բուռ հող
 Հայաստանի ջրով շաղուած
 Հայ մանուկը շինէ թող:

99

ՄԱՃԿԱԼ ԵՍ

Մաճկալ ես բեզարած ես,
 Առը շուռ տուր, շուտ արի,
 Ծովի պէս քրտնած ես,—
 Եզներն արձկի, տուն արի:
 Կաթի սերը քաշեր եմ,
 Դրեր եմ հովին՝ սառի.
 Ալ-գոգնոցս փոսեր եմ.
 Արի, թառան, թը՛ռու արի:
 Տեղ եմ քցեր շուաքում,
 Քամին կուզայ զով կանի.
 Լուսնի շողքն է մեր ծոցում,
 Չափ տուր, չափ առ—չուտ արի:
 Դատրած, բեզարած ենք ջան,
 Ամպերն ելան—դէ՛հ, արի,
 Բեզարած ջանիդ զուրպան,
 Ծախց թև առ, թէ՛զ արի...

ՀԱԶԱՐ ԵՐԱՆԻ...

Հազար երանի քեզ, մանուկ ամբիժ,
 Որ շուտ հեռացար դու այս աշխարհից,
 Ուր վաղուց ի վեր ունի բնակութիւն
 Անմեղութեան հետ մոլի չարութիւն:
 Բայց այն ո՞վ գիտէ՝ քեզ ի՞նչ էր սպասոււմ
 Փըշոտ, տատասկոտ այս մեր աշխարհում.
 Միթէ յաւիտեան պիտի մընայիր
 Հանգիստ գրկի մէջ քու մօր սիրալիր,
 Կամ թէ յաւիտեան քեզ պիտի ժըպտար
 Գարնան վարդի հետ այս օտար աշխարհ:

ԳԻՇԵՐ ՅԵՐԵԿ...

Գիշեր ցերեկ մորմոքում եմ, ի՞նչ անեմ,
 Կարօտդ քաշում եմ տարով, նազանի,
 Հանգիստ չունիմ, անդադար եմ քեզ համար,
 Ցաւերս թեթեւցուր սիրով, նազանի:
 Մէկ տեսքդ տեսնողը քեզնից կամաչէ,
 Ծանօթացիր, սիրականիդ ճանաչէ.
 Հազա՞ծդ զգեստը ալ ու կանանչ է,
 Փաթաթուել ես ճերմակ դարով, նազանի:
 Թալալօղլին խոնց երազումը թաս,
 Քաղցրանաս, դու մեզի անուշ բարև տաս,
 Երանի այն օրուան, որ մեր տունը գաս,
 Պտըտուիմ զլիտովդ բարով, նազանի:

ՕՏԱՐ ԵՐԿԻՐ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
 Ի ու հայրենիք, քեզ յիշելով կարտասուեմ:
 Չըկայ ծնող, չկան որդիք, բոյր, եղբայր,
 Չիք ամուսին, որով ցաւերս մեղմանայ:
 Օտար երկին, արև, աստղեր և լուսին
 Թէև պայծառ՝ ինձի խաւար կը թուին:
 Բնակարանս տխուր պանդուկ օտարաց,
 Օղս օտար, ջուրս օտար, օտար հաց:
 Ո՞ւր է հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն,
 Ո՞ւր գաւակունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն:
 Սակայն ունիմ քովս Յիսուս, փրկէ զիս,
 Նա օտար չէ, Նա իմս է, սիրէ զիս:

ՀՈՎԵՐՆ ԱՌԱՆ

Հովերն առան սար ու դարեր,
 Ամպերն ելան, — մութն ընկաւ.
 — Անգին մէրիկ, հերիք յուսաս,
 Քու շողջողուն աստղն ընկաւ:
 Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ գայ,
 Վէրքը սրտիս տուն չեմ գայ...
 Կաթիլ-կաթիլ ամպն է ցողում
 Սև ու պղտոր երկնքէն.
 Մաղիկ-մաղիկ վէրքս է ծորում
 Իմ անգիւման, սև սրտէն.
 Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ գայ,
 Վէրքս խորն է, ճար չը կայ...

Անգուլթ կեանքում վէրք ստացայ
 Սրտանց սիրած ընկերէս.
 Անխիղճ կեանքում վէրք ստացայ
 Անսուշ սիրած բուրիկէս...
 Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ գայ,
 Ազիզ բալէդ էլ չը կայ...

ԿԱՊՈՅՏ ԵՐԿԵՔՈՒՄ

Կապոյտ երկնքում
 Աստղեր են փայլում,
 Այլ և լուսնակը.
 Ամենից սիրուն,
 Ամենից փայլուն
 է արեգակը:
 Կանաչ դաշտերում
 Եւ այգիներում
 Ծաղիկներ կան շատ.
 Բայց չէ ոչ մինը
 Վարդի նմանը,
 Նա է բնութեան զարդ:
 Սիրուն աղջիկներ,
 Ինչպէս ծաղիկներ,
 Ամեն տեղ շատ կան.
 Բայց իմ բնորածը,
 Սրտիս սիրածը
 Հրեշտակի է նման:

ԱՀԱ ՄԱՅՐԻԿ

Ահա, մայրիկ, ես գնում եմ,
 Ազգիս համար զոհեցում,
 Քաջ ընկերներով միասին՝
 Անգուլթ քրդին ջարդելու:
 Երբոր մայր իմ, Սասուն եկար,
 Ինձի սրտեղ փնտռեցիր.
 Գերեզմանիս վերայ զալով
 Ի՞նչ ասացիր ու լացիր: 》
 Գերեզմանիս հողի վերայ
 Ի՞նչ անուշիկ հոտ կուգայ,
 Այսուհետև անուշ մայրիկ,
 Ինձմէն քեզ օգուտ չկայ:
 Գերեզմանիս հողի վերայ,
 Ցանէ ծաղիկ, իմ մայրիկ.
 Ցանէ ծաղիկ, թափէ արցունք,
 Երիտասարդ եմ մայրիկ:
 Գերեզմանիս քարի վերայ,
 Սոշոր տառով զրեցէք—
 Այսուհետև հայ մանուկներ,
 Ազատութեան զոհեցէք:

ԵԱՐՍ ՏԱՐԱՆ

Սիրեցի,—եարբա տարան,
 Եարայ տուին ու տարան,
 —էս ի՞նչ զուլում աշխարհ է,
 Պոկեմէս սիրտս ու տարան:

Յաւըս խորն է, ճար չը կայ·
Ճար կայ, ախ, ճարող չը կայ·
—էս ինչ գուլում աշխարհ է,
Սրտացաւ ընկեր չը կայ...

Լաւ օրերը գնացին,
Ափսոս ասին, գնացին,
—էս ինչ գուլում աշխարհ է,
Սե-դարդերը մնացին...

ՕԽԹԸ ՍԱՐՈՎ

Օխթը սարով հեռու քեզնէն
Քու շուաքով եմ ապրում.

Օխթը տարով բաժան քեզնէն
Քու կարօտով եմ էրում...

Դարդիս դարման, եարիս մահլամ
Չան ու շիգեար եարս ուր ա...

Գիշեր-ցերեկ զրկուած քնէն
Ծով է կտրում աչքերս,
Բալի դարիբ մի ճամբորդէմ՝
Խաբար առնեմ իմ եարէս:

Դարդիս դարման, եարիս մահլամ
Թագ ու պսակ եարս ուր ա...

Օխթը տարի ծոմ ու պասով
Օր ու արեքս սեցուցի,
Բալի Մշու-Սուլթան գօրքով՝
Իմ մուրազըս տար ինձի...

Դարդիս դարման, եարիս մահլամ

ՀԱՄԵՍ ԱՂԶԻԿ

Համեստ աղջիկ, ինձ մի տանջիր չարաչար,
Չարաչար սիրուն ջան չարաչար:
Հոգիս հոգոյդ մատաղ լինի ամեն ժամ,
Ամեն ժամ սիրուն ջան ամեն ժամ:
Ես հայ դու հայ մեր մէջ չկայ խտրութիւն,
Խտրութիւն սիրուն ջան խտրութիւն:
Նազլու, Նազլու ինձ մի քցիր սարէսար,
Սարէսար սիրուն ջան, սարէսար:
Մատաղ կեանքումս ինձ մի դնիր գերեզման,
Գերեզման սիրուն ջան գերեզման:

ՀԱՅԴՈՒԿԻ ՎԵՐՋԻՆ ՈՒԽՏԸ

Թող չար օրհասը թափէ իմ գլխին,
Ապագութ մահւան բոլոր սե չարիք
Բայց քո սուրբ անուն մինչև վերջին շունչ,
Ես չեմ մոռանայ սիրուն հայրենիք:

Թող ինձ պատրաստէ անխիղճ թշնամին
Կախաղան, և սիւն, կամ մի այլ գործիք
Բայց մինչև չը գցեն շիրիմ իմ մարմին,
Քեզ չեմ մոռանայ սէր իմ հայրենիք:

Թող կոյր ամբօխը անձրեկ գլխիս,
Քար, հուր, շանթ, երկաթ և շատ չարիքներ,
Բայց մինչև իմ բերնից չելանէ հոգիս,
Քեզ չեմ մոռանալ անտէր Հայաստան:

Թող ինձ հալածեն վասակի թոռներ,

Այդ ես կը տանեմ մինչ կեանքիս վախճան,
Բայց քեզ չեմ ժողովանայ, երբէք Հայաստան:

Թող իմ դիակը, մանրած մաս առ մաս,
Տանեն սգալով դէպ մահու դարպաս,
Յայնժամ կաշկանդւած քնով մշտական,
Գուցէ քեզ մոռնամ, մայր իմ Հայաստան:

Բայց ոչ երկնքում լուսոյ որդոց հետ,
Իբրև մի անմահ սուրբ հրեշտակապետ,
Պիտի միշտ գոչեմ, կրկնեմ յաւիտեան,
«Սիրուն հայրենիք, սիրուն Հայաստան»:

ՉՄԵՌՆ ԱՆՑԱԻ

Չմեռն անցաւ, եկաւ գարուն,
Հալաւ բանձրիկ սարերու ձուն:

Ճամբայ բացուաւ դարիբներուն:

Իմ դարիբէն խարար չը կայ:

Սիրտս ճամբին դադար չը կայ:

Ղարիբ երկիր ամպ-մշուշ է:

Իմ դարիբի սիրտ քնքուշ է:

Ոտ կը փոխէ՝ քար ու փուշ է:

Հերիք մնաս, դարձի վաթան,

Իմ ախպէր ջան, աղիգ եար ջան:

Չուրն է պրծեր կուգայ սարէն,

Սարէն, ձորէն, իմ աչքերէն...

Իրար մի տար սրտիս եարէն:

Դարձի վաթան, հողն անուշ է:

Հողն անուշ է, ջուրն անուշ է:

ԳՆԱՅ, ԳՆԱՅ

Գնաց, գնաց, սիրելիս գնաց,
Էլ մի որոնէք, էլ մի փնտրէք,
Ա՛խ, նրան ո՞վ էր ճանաչում,
Նրա քաղցր ձայնն էլ ո՞վ է լսում:
Հիանալի էր նա, գեղեցիկ էր նա
Նորա պէս սիրելի էլ ո՞վ կունենայ:

Ա՛խ սիրուն դու իմ սիրահար,
Էր այդպէս գնաս սիրտ իմ ժողովոքես,
Արի, սիրուն խնդրում եմ քեզ,
Աղաչում եմ քեզ խղճա՛ վիճակիս,
Հիանալի ես դու, գեղեցիկ ես դու,
Քեզանից սիրուն չեմ ունենալու:

Ի գուր այնպէս զգեցի նրան,
Ինչպէս գեփիւռը ծաղիկ գարնան,
Ո՛հ, քանի անգամ ժպտալով նրան,
Նրան տարեցայ ջերմ համբոյրներով...
Էլ ի՛նչու ապրեմ մինչդեռ նա գնաց,
Նրա մահից յետ լոկ կսկիծ մնաց:

ԱՐԵՒՆ ԻՉԱԻ

Արև իջաւ սարի գլխուն,

Դար ու դաշտում լուս չը կայ:

Հաւք ու թռչունք մտան խոր քուն,—

Ա՛խ, ինձ համար բուն չը կայ:

Կունակն ընկաւ երթըկից ներս,
Կշեռքն ելաւ երկնքում

Զով հովերն էլ մըթնշողէս
Աստղերի հետ են զրցում:
—Սիրուն աստղեր, անուշ հովեր,
Եարըս ուր ան էս գիշեր.
Պարզ երկնքի նշխուն աչեր,
Եարիս տեսնաք էս գիշեր..
Լուսը բացուաւ, դուռը բացուաւ,
Ամպ ու զամպ է,—թօն կուգայ.
Ալ-ձին եկաւ, անտէր եկաւ,
Ա՛խ եարս ուր ան, տուն չի գայ..

ՈՂՁՈՅՆ ՏԻԷՔ

Ողջոյն տւէք իմ հայրենեաց
Կիսակործան տաճարներուն,
Ողջոյն տւէք աւերակաց,
Արարատեան գաւառներուն:
Ողջոյն տւէք Աւարայրի
Արիւնաներկ սուրբ վայրերուն,
Ողջոյն տւէք տխուր լուսնի,
Որ լուսացնէ սև շիրիմներուն:
Ողջոյն տւէք պանդուխտ հայուն,
Թշառ հայուն, չուառ հայուն,
Ո՛հ ձեռք տւէք, ո՛հ սիրտ տւէք,
Ո՛հ շունչ տւէք անշունչ հայուն:
Ողջոյն տւէք ոլոր մոլոր,
Մոլոր վազող գետակներուն,
Ողջոյն տւէք պղտոր բոլոր,
Աղի լեզի աղբիւրներուն:

Ողջոյն տւէք ո՛հ հող դարձած,
Արքայական պալատներուն,
Ողջոյն տւէք գետնատարած,
Սրբոց անբիծ մասունքներուն:
Ողջոյն տւէք ծաղկանց խումբ-խումբ,
Որ կան թաղած հովիտներում,
Ուր հայ սոխակ թումբէ ի թումբ,
Կհանք է խնդրում դեռ շատերուն:

ՄՈՒԹԸ ԳՐԿԱԾ

Մութը գրկած գետ ու գետին,
Հով ու ալիք կը ծփան.
Երկինք գրկած աստղ ու լուսին,
Լուս կը ննջէ Ախուրեան:
—Սիրտս, սիրտս, թոյլ կը զարկէ,
Սէր ու երգեր էլ չը կան.
Նոր էր ծլեր,—աբև սիրեց,
Արև-աչեր էլ չը կան:
Վառ աստղերը երկնուց ընկան,
Վարդ ու շուշան թառամեց.
Ա՛խ, իմ կեանքս, անո՛ւշ կեանքս
Կտոր-կտոր փշրուեց..
Հոմը ու ալիք կուգան-կերթան
Ցաւած սիրտս կը շոյեն.
Ու իմ սիրուս մրմունջներէն
Տխուր երգեր կը հիւսեն..

ԹՈՂԷՔ ՈՂԲԱՄ

Ոչխարներս գայլեր տնտան,
Մէկն էր մնացել այն էլ կերան,
Ինձ թողեցին ոսկորները,
Թողէք ողբամ իմ դառն ցաւեր:
Պալատիս մէջ մի ժամանակ,
Ապրում էի ես համարձակ,
Հրդեհն այրեց կտրեց ծուխը,
Թողէք ողբամ իմ դառն ցաւերը:
Ծովի վրայ նաւ կազմեցի,
Մի ժամանակ նաւ բանցուցի,
Ալիքն արեց կտոր կտոր,
Թողէք ողբամ իմ դառն ցաւերը:

ԹԱԹՈՒԼԻ ՔՐՈՋ ԵՐԳ

Եղբայրս թուրքի բանտում,
Արև լուսնի կարօտով,
Վայ իմ սև օրին վայ,
Ես ինչպէս հազնեմ կապեմ,
Նաշխուն շորեր նարօտով,
Աւանդ իմ սև օրին աւանդ:
Ես դարտ ունիմ սարերով,
Տաջուում եմ ցաւերով,
Վայ անբաղդ եմ վայ անբաղդ:
Ահա, տարին լրանում է,
Չեմ ստացել մէկ նամակ,
Վայ իմ սև օրին վայ,

Տրտում ու տխուր սիրտս,
Չունիմ ուրախ ժամանակ,
Աւանդ իմ սև օրին, աւանդ:
Ես կրակոտ երգերով,
Թողէք վառւիմ դարդերով,
Վայ անբաղդ եմ վայ:
Ես ինչպէս ուտեմ խմեմ,
Երբ նա բանտում, ծարաւ է քաղցած,
Վայ իմ սև օրին վայ,
Ես ինչպէս խնդամ պարեմ,
Միթէ խիղճս է մեռած,
Աւանդ իմ սև օրին աւանդ:
Առանց նրան ոնց մնամ,
Լաւ է մեռնեմ վերջանամ,
Վայ անբաղդ եմ ես անբաղդ:

ՍԱԳՕՅԻ ԵՐԳԸ

Այն օրը, որ ես քեզ տեսայ էլ ուրիշին չը սիրեցի
Գիշեր ցերեկ աղաչելով՝ քաջիդ կեանք արև խնդրեցի
Այդ պատճառով շատ սիրեցի, որտեղ տեսայ Սեքարեցի
Սեքարիդ զուրբան Սագոյ ջան, ջան ջիւան ջան:
Բորիկ ոտով ուխտ գնացի, փառք Աստուծոյ մու-
րազիս հասայ,
Այն ինչ երջանիկ օր էր, որ քեզ սկզբում Դերիկ տեսայ,
Դերիկիդ զուրբան Սագոյ ջան, ջան, հոգի ջան:
Հարց արեցի վարդապետին ասի, ո՞վ այդ արեղան,
— Արեղայ չէ հոգիս, զինուոր է այդ սիրուն տղան,
Չեմ ստացել նամակն Աստուծոյ ջան, ջան, տեսնե՛ք ջան:

Պատարագ վերջացրին, գնացին զարկելու նշան,
Մէկդին Պետո մէկդին Կարօ, ինչ սիրելի ըկերներ կան
Ընկերիդ զուրբան Սագօյ ջան, ջան ասլան ջան:

Երկար յաղթութիւնից յետոյ, տանջանքների դէմ
կուելով,

Անյաղթ ջան-Ֆիդայ, մեծ մարդ կոչման արժանացար
Այդ դէպքումն էլ պատմութեան մէջ անյաղթելի

փառք ստացար,

Անյաղթիդ զուրբան Սագօյ ջան, ջան հայդուկ ջան:

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ես ընկած եմ քիւրդերու մէջ,
Արնաշողող վէրքով լցված,
Ինձ կարծել են մեռած,
Թողել գնացել են.

Կիսամեռ թշառս ի՞նչ անեմ,

Մնացել եմ անօգնական:

Երբ նայում եմ լուսնի լուսով.

Հազարներով փուած գետին

Սատկած և վիրաւոր.

Շարիֆ-բէկի քիւրդեր մըմնջում են մի լս.

Վախկոտ հեկալօներ.

Տեսարանն ուրախալի էր.

Թեթևանում էր իմ վշտեր:

Քիւրդ լաց կոծների միջից,

Յանկարծ լսվեց. «Մայր իմ անուշ»...

Ա՛խ, այդ ձայնն էր հայկական:

Զինուոր էր նա վէրքը ստացած,
Արեան դաշտում ինձ նման:

Ձեռք մեկնեցի մտերմիս ասի.

«Նայիր բոլորդ հոգի ստացիր»,
Հայի յաղթութիւնը մեծ է ջանֆիդան,
Փառք իւր Դրօշակին:

Վիրաւորներս սիրտ առած

Հեռացանք արեան դաշտից:

Էլի սաղ եմ բաջի պէս.

Տես իմ վէրքերուս տեղերը.

Հաւատացէք հայ զինուորի ուղղութիւնը,

Որ չինսայեց իւր ազգին իւր արիւնը,

Ազատութեան զոհեր ենք մենք,

Ազատ կամքով, ազատ խղճով:

ՓԱԽԻՐ ԱՅԾԵԱՄ

Անհոգ ես չես գիտում ինչ կայ քո մասին,
Փնտռում են քո խեղճ անձի ֆրասին,
Գամբռներով, բարակներով միասին,
Փախիր այժեամ փախիր որսկան է գալիս,
Չագուկներդ տխուր լալիս են լալիս:

Որսկան ճրագով քեզի ման կուգայ,
Կուզէ իւր ձեռքը քո արիւնով լայ,
Խղճալի քո տեղեակ սար ու ձոր կուլայ,
Փախիր այժեամ փախիր որսկան է գալիս,
Չագուկներդ տխուր լալիս են լալիս:

Որսկան գութ չունի կանէ կրակը,

Զուր չի անցնիլ հրացանի գնդակը,
 Փախիր այժեամ փախիր որսկան է գալիս,
 Զագուկներդ տխուր լալիս են լալիս:
 Դաշտում չես ման գար թէ մտածես լաւ,
 Քեզ կվիրաւորեն կստանաս մեծ ցաւ,
 Դուրս մի ելնիր խիտ անտառից դու բնաւ,
 Փախիր այժեամ փախիր որսկան է գալիս,
 Զագուկներդ տխուր լալիս են լալիս:
 Զորեր մի մտնիր այնտեղ վտանգաւոր է,
 Որսկան ման կուգայ այնտեղ սովոր է,
 Գարայրից խփելով քեզ կը զլորէ,
 Փախիր այժեամ փախիր որսկան է գալիս,
 Զագուկներդ տխուր լալիս են լալիս:

120

ԹէՊէՏ ՎՏԱՐ...

Թէպէտ վտար քաղքէ քաղաք կամ թափառ,
 Բազդն ու մարդիկ զիս կհալածեն անգթաբար,
 Այլ արդէն իսկ ազատութեան երբ վե՛հ ձայնը,
 Թուաւ բերնէս յանձն առի զայն միշտ համայն:
 Ազատութեան ես անձնւէր,
 Վիշտ ցաւ սիրով եմ յանձն առեր:
 Թէպէտ հեռի իմ հայրենեաց գրկերէն,
 Հեռի նոցին գողտրիկ ձայնէն երգերէն,
 Տխուր քնարս նոճիներէն վար կախած,
 Լռիկ ողբամ խեղճ ազգիս բազդն մտահայց:
 Ազատութեան ես անձնւէր,
 Վիշտ, ցաւ սիրով եմ յանձն առեր:

121

ԶԻՆԻՈՐԻ ԵՐԳԸ

Թռիլը իմ նժոյգ, սլացիլը շուտով,
 Տնր ինձ ցանկալի կուրի փոթորիկ,
 Կըուրի մէջ միայն ես արեան գնով,
 Կը փրկեմ իմ խեղճ ստրուկ հայրենիք:
 Տար ինձ այն աշխարհ—անցեալում հզօր,
 Պանծալի վայրը իմ քաջ պապերի,
 Ուր աւանդ դժբաղդ եղբայրս այսօր,
 Իւր կեանքն է ողբում՝ օտարին գերի...
 Անցան շատ դարեր, անցան շատ տարիք,
 Ազգս շատ ապրեց քաղցրիկ յոյսերով,
 Բայց նորան երբէք չժպտաց երկինք,
 Զըտեսաւ նա կեանք խաղաղ, անվրդով:
 Միշտ լուռ ու խոնարհ անողորմ բաղդին,
 Երկար սպասեց նա կեանքի գարնան,
 Բայց նորա առջև ոտիս թշնամին,
 Իւր սրով փորեց կեանքի գերեզման...
 Դէ՛հ, թռիլը, նժոյգ, սըլացիլը շուտով,
 Տնր ինձ ցանկալի մարտի փոթորիկ,
 Մարտումն է զինւորն իւր արեան գնով,
 Ազգին պարգևում յաղթութեան դափնիք:

122

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեան օրեր, երազի նման,
 Անցաք գնացիք ալ չէք դառնալու,
 Ո՛հ դուք երջանիկ ո՛հ անհոգ օրեր,
 Ընդունակ միայն ուրախացնելու:

Ձեզանից յետոյ եկաւ գիտութիւն,
Իւր ծանր հարւածով աշխարհիս վրայ,
Ամեն բան ընկաւ մտածութեան տակ:
Բոպէ չըմնաց ազատ կամ ունայն:

Մտածութիւնը յաջորդեց նորան,
Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս,
Ապողոնը տւեց ինձ իւր քնարը,
Որպէս փարատիչ տրտում ցաւերիս:

Աւանդ այդ քնարն իմ ձեռքում հնչեց,
Որպէս փարատիչ նոյնպէս վշտահար,
Որչափ իմ ազգս կը մնայ սարուկ:
Օտարութեան մէջ անխօս տխրագէմ:

Գ Ա Ր Ո Ի Ն

Է՛յ, կանաչ ախպէր, դուն բարով եկար.
Դուն բարով եկար, իմ կանաչ ախպէր:

Մով-մանուշակով ծաղկուն սարերէն,
Արտուտն ու արօս ինձի ձէն տուին,
Ու գարնան անուշ արև ոսկեղէն
Ինձի ձէն տուին՝ սար ու ձոր ելնեմ:
— Երանէ՛կ ձեզի, սարեր ու ձորեր,
Նշխուն հագերէք գարնան զուքսերով,
Ա՛խ, սիրտս մեռաւ ծով-դարդերի մէջ,
Գարնան զուքսերին մնաց կարօտով:

Ա՛խ, սարեր, ձորեր, դուք առաջւան էք,
Բլբուլ ու բաղեր դուք առաջւան էք.
Ա՛խ մենակ ես եմ փոխուեր ու չորցեր,
Բլբուլ ու վարդեր, դուք առաջւան էք:

Ա՛խ, ես եմ փոխուեր ու աշխարհի մէջ,
Ղարիբ ու հիւանդ ճամբորդ եմ դառեր.

Ճամբէս մոլորել կերթամ փշի մէջ,
Մարեր ու ձորեր, դուք առաջւան էք:

Կեանքիս աղբուրը մարդիք քամեցին,
Իմ փայ—աշխարհը դարձրին մութ զնդան,
Ա՛խ, սիրտս ու հոգիս հալ ու մաշ արին,
Ու ծաղիկ կեանքիս փոքին գերեզման:

Կերթամ փշի մէջ, գերեզման կերթամ՝
Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ.
Ա՛խ, տանեմ սիրտս, տանեմ գերեզման.—
Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ,
Ազիդ մեռելս տանեմ հողին տամ...

Է՛յ կանաչ ախպէր, կուգաս գալ տարի:
Ու գերեզմանս մամուով կը զուքես,
Իմ կանաչ ախպէր, գալդ միշտ բարի,
Խեղճ գերեզմանս մտքէդ չըքցես...

ՍԵՒԻԿ ԱՉԵՐ

Վրդովեցիր խաղաղ կեանքս սիրական,
Անցուդարձովդ ինձ նայելով մշտական,
Չէի տեսել մէկ հոգեհան քեզ նման,
Սեիկ այեր դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր:

Ինչպէս մնամ ես առանց քեզ միայնակ,
Դուն ձգել ես սրտիս մէջը վառ կրակ,
Ակնարկելով գազանի ամեն ժամանակ,

Սեիկ այեր դու իմ կեանքս մաշեցիր,
Ինչպէս մնամ ես առանց քեզ միայնակ,
Դուն ձգել ես սրտիս մէջը վառ կրակ,
Ակնարկելով գազանի ամեն ժամանակ,

Անուշ անուշ խօսալովդ սիրուն կոյս,
Մաշւած սրտիս նորից տւիր կեանք և յոյս,
Առանց գինոյ արբեցուցիր խղճալոյս,
Սևիկ աչեր դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր:

Սիրոյդ սուր սուր նետերովը խոցեցայ,
Իբրև ծաղիկ դեռ չըբացւած գոցեցայ,
Երբ քեզ տեսայ կրակովդ լեցեցայ,
Սևիկ աչեր դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր:

Սիրոյդ լարը պարանոցէս տւիր կախ,
Օր ու արև չունիմ գործս է ան ու վանխ,
Կրկին խօսէ գոնէ լինիմ ես ուրախ,
Սևիկ աչեր դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր:

ԱՂ ՈՒ ԱՂԻԱՆ...

Ալ ու ալւան ես հագել,
Կարմիր լալայ ես դառել,
Սուրայի կլոր մէջքդ
Փամփուշտներով ես ծածկել:

Ալ ու ալւան ես հագել,

Ախպէր ջան քեզ դուրբան,

Մեր գուժանը դու ես դու:

Ձեռքդ թւանք ես առել,
Դուշմանի դէմ ես կանգնել,
Ինձ ասան գլխիդ մատաղ
Բինիշդ սիլ է կարել:

Ձեռքդ թւանք ես առել
Ախպէր ջան քեզ դուրբան
Մեր գիւժանը դու ես դու
Առիւծի պէս կանգնել ես
Բեղերդ ոյրուկ ես
Սև թուխ բեղերուդ մատաղ
Յաղթանակը տարել ես
Առիւծի պէս կանգնել ես
Ախպէր ջան քեզ դուրբան
Մեր գիւժանը դու ես դու:
Սիրտս վրէժով լցիք
Կրակով բորբոքեցիք
Ազիզ քոյր ու ախպրտանք
Ահա թուրս սրեցէք
Սիրտս վրէժով լցիք
Ախպէր ջան քեզ դուրբան
Մեր գիւժանը դու ես դու:

ԳԷՈՐԳ ՉԱԻՈՒՇԻ ԵՐԳԸ

Թուրքը լսաւ անունդ Չաուշ
Իէմքդ սիրուն, լեզուդ անուշ,
Կեանքիդ մէջ հանգիստ չունեցար.
Թշնամեաց դարձուցիր ապուշ.
Սասունն է քո ապաստան.
Վրէժ է քո դատաստան:
Հայոց համար սպարապետ.
Անդրանիկին ընկեր վարպետ,

Սասունը կանգուն պահեցիր,
Օգնող է քեզ սուրբ Կարապետ

Սասունն է քո և այլն:

Կոտորեցիր քանիցս վաշտ.

Թուրք արիւնով ներկեցիր դաշտ.

Անվախ հերոս թուրքաց դէմը,

Մինչև վերջը մնացիր անհաշտ:

Սասունն է քո և այլն:

Անվախ հերոս ես ճշտապէս,

Հայք պիտի յիշեն մշտապէս,

Բաջաց քաջն ես Գէորգ սարգար

Վարդանի տիպ ես իսկապէս:

Սասունն է քո և այլն:

127

ՀԱՄԱԶԱՍՊԻ ԵՐԳԸ

Ծագեց արև ազատութեան

Փախէք ամպեր երկնքից,

Համազասպը իր խմբովը

Կուգայ Սաչէն գաւառից:

Գալիս էին բազմաթիւ զօրքով.

Ադիգեօզալ Բէգովը.

Յանկարծ ընկաւ Ասկեարանը.

Հերոսների ուռկանը:

Թուրք խուժանը սարսափահար.

Փախչուժ էին. իսկ գլխակօր,

Թողնելով իրանց յետեից,

Իրակներ հարիւրաւոր:

Սաչէն, գաւառը սրբեցին
Թարաքեամայ թուրք ցեղից
Ժողովրդին հանգիստ տւիր,
Թուրք չի անցնիր այնտեղից:
Հայերիս տէր Դաշնակցութիւն,
Բաջեր ունիս սրտալի.

Ամբողջ աշխարհ հռչակեցաւ

Համազասպը պանծալի:

128

Ա. ՄԱԼՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

էն արծիւ էր, թռաւ, գնաց,

Մեր վրայով, մեր միջով,

Ա՛խ էն մեր սիրտ, մեր ազիգն էր,

Գնաց սարով, սննդ դարձով:

Ինոր դարձը, անխ, մեր դարձն էր,

Ու մեր սրտիցն էն գնաց,

Ինոր դարձը խեղճի դարձն էր,

Սեղճի սրտիցն էն գնաց:

Ո՛ւր գնացիր, հւր գնացիր.

Մենակ-մենակ գնացիր:

Հեռու տեղեր արնոտ տեղեր.

Ոխը սրտիդ, հոգի ջան,

Ընկար մենակ ու անընկեր՝

Դու՛ման դաշտեր, Աւօ ջան:

Ընկերներդ, անխ, քեզ մոռցան,

Կեանքի ճամբով գնացին.

Բո սուրբ սրտի սէրը մոռցան

Գերեզմանդ կորուցին:

ԼԵՒՈՆԻ ԵՐԳԸ

Սասնայ գաւառում ծնաւ մի մանուկ,
Անունն էր Լեոն ուժեղ ու կարճկոտ,
Դեռ նա չը հասած պատանեկութեան
Յանձն առաւ զոհել ի սէր ազգութեան:

Վրիժառու լինել ուզեց իւր նախնեաց,
Լցնել զկարօտ իւր փափագանաց,
Բիւրակեան լերանց ստորոտն իջան,
Այնտեղ կանգ առան ևս քնացան:

Յանկարծ արթնացան մօտ էր կէսօրւան,
Բարբարոս քիւրդեր վերեւից տեսան,
Ընկեր զոչեցին Լեոն արթնացաւ,
Հրացան ձեռ չառած գետին փռեցաւ:

Արցունք աչքերից վառ վառ կթափւէր,
Լեոն ցաւոց մէջ ընկած տատանէր,
Ո՛հ հայեր, հայեր, թափեցէք արիւն,
Կեանքով տւեցէք ձեր նախնեաց անուն:

ԱՐԱՄԻ ԵՐԳԸ

Բանտիս դռներն էին եօթն ելքերով,
Շուրջն էր պատած ամուր երկաթ քարերով,
Ձեռս ոտըս շղթայ զարկին այս պահուն,
Վիճակուժս այսպէս ընկաւ կախաղան:

— Պարան գրին պարանոցիս յետ քաշէք.
Գոչեց Արամ բարձրանալով կախաղան,
Ժամացոյցս ընծայ տարէք իմ մօրս,
Եւ մի ասէք Արամ կախուց իմ հօրս:

Իմ անունս քաջ Արամ,
Մականունս Արմենեան,
Խմբապետ եմ խուճր կը կազմեմ,
Հայ ազգիս, հայ ազգիս:

ԹՈՂ ԵՐԳԻ ԲԼԲՈՒԼ

Թող երգէ բլրուլ Մշու դաշտերում,
Թող վարդեր բացեն Սասնոյ լեռներում,
Թող մեր թշնամիք սարսեն, սարսափեն,
Գազան քիւրդերն ճաքեն, տրաքեն:

Մշու դաշտերը ծաղկունքով բացած,
Հայու սերունդը կը պահէ Աստուած,
Ինչքան որ կուզեն թշնամիք թող գան,
Սասնոյ լեռներէն ի՞նչ պիտ ստանան:

Ինչո՞ւ չը ծաղկէ ծաղիկն անխնայ,
Այդ թշնամուցը ո՞վ կը վախենայ,
Թող հայ աղջիկը երգէ վաւուռուն,
Սուր զէնքը ձեռքին ջարդէ քիւրդերուն...

ԱՌ ԱԶԳՍ

Ազգ իմ, որքան նկուն մնաս,
Սիրտս քեզնից չի գատուի,
Հազար տեսակ չարչարանք տաս,
Սիրտս քեզնից չի գատուի:
Քեզ չեմ մոռանայ յաւիտեան,
Հարազատ մայր իմ Հայաստան,
Թէկուզ դրախտն էլ ինձի տան,
Սիրտս քեզնից չի գատուի:

Քեզանով եմ ես երջանիկ,
 Իմ սիրելի, իմ անուշիկ,
 Ծոցիդ մէջը հանգչիմ մայրիկ,
 Սիրտս քեզնից չի գատւի:
 Զիւանին եմ, քեզ բարեկամ,
 Քանի ողջ եմ, ամենայն ժամ,
 Հնդկաստանին էլ սէր դառնամ,
 Սիրտս քեզնից չի գատւի:

133

Ը Ն Կ Ե Ր

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,
 Փայլեցնում է արևի պէս պատկերը մարդուն.
 Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր՝
 Յերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն,
 Կեանքդ նուիրես ընկերի լաւին քիչ է դարձեալ,
 Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն,
 Ընկեր եմ ասում, աստուածավախ ճշմարիտ ընկեր,
 Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:
 Թշնամիները իր վերայ գալած ժամանակը
 Կտրիճ հարազատ ընկերն է սուսերը մարդուն.
 Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Զիւան աշըդ,
 Զի սպիտակիլ ամենեկին մէկ հերը մարդուն:

134

ԳՈՒՐԳԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գլգլալով ջուր է իջնում
 Մշոյ մշուշ սարերէն,
 Ծիծեռնները ծիւծիւ եկան
 Գարնան գալը երգելէն:

Գարուն չը կայ հայի համար
 Ծաղիկ, ծիծեռ մեզ պէտք չեն.
 Գերեզմանս հողին հաւասար,
 Թող փուշ բըսնի իմ վրէն:
 Գնա ծիծեռ, թող ինձ մենակ,
 Վէրքը սրտիս հողի տակ:
 Բայց երբ տեսնես թշնամու դէմ,
 Հայ ժողովուրդ պարի պէս,
 Զէնքը ձեռին հպարտ կանգնած
 Կուրծք դէմ տւած ժայռի պէս
 Ա՛խ այն օրը արի ծւայ,
 Գարնան գալը նոր կանչէ,
 Հայոց գարնան, որ բիւր բարև
 Սիրտս խորէն ղօղանջէ...

135

ՏՍՐՈՆԱՅԻ ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳԸ

Մայիս ամսւայ դու գեփիւռիկ,
 Սլանում ես Մշու լերինք,
 Կորուցել եմ քաղցր հայրենիք,
 Կուլամ կողբամ շատես հերիք:
 Լեան Մշոյ է նման Մասիս,
 Մայրիկս կուլայ կանչում է զիս,
 Կասէ—որդի, եկուր առ իս,
 Բաւ է այսքան դուն թափառիս:
 —Պանդուխտ եմ ես օտարութեան,
 Ատեն չունիմ որ առ քեզ գամ,
 Ցաւերս շատ են վիշտս յարածամ,
 Դուցէ սոցա եմ ես ալժամ:

Պանդուխտ եմ եւ Տարոնացի,
Շատ ժամանակ ցաւօք ֆնացի,
Մշու երկրէն հեռի կացի,
Հայրենիքս եւ միշտ լացի:

136

ԵՐԲ ԱԼԵԿՍԻՍ

Երբ ալէկոծ ծովի վրայ,
Իմ մակոյկս խորտակւի,
Ես փրփրադէզ ալեաց մէջը,
Դեռ իմ յոյսս չեմ կտրեր:
Բոլոր ոյժով և համարձակ
Բազուկներս կը շարժեմ,
Ալիքները պատառելով
Դէպի ափը կը թռչեմ:
Անհաւասար այդ կուր մէջ,
Թէ ոյժերս ինձ թողնեն,
Ալիքները յորձանք տալով
Դէպի անդունդ ինձ նետեն:
Այն ժամանակ գէթ սփոփանք,
Ես կը գտնեմ նորա մէջ,
Որ մեռնում եմ քաջի նման,
Կուր տալով մինչև վերջ:

137

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԻԵՏԱԲԵՐ

Հայաստանի աւետարեր,
Ո՛վ դու կոռունկ ձայնդ անուշիկ:

Արդ եկել ես օտար վայրեր,
Ի՞նչ լուր բերիր ինձ պանդխտիս,
Ո՛հ հայրենեաց կոռունկ սիրուն,
Տար իմ ողջոյս անդ հայերուն:
Ըսէ կոռունկ հայ զաւակաց,
Թէ ձեր կղբայր օտար վայրեր
Բնիկ է բայց սիրտն չմոռցած,
Միշտ հայրենեաց կարօտ եղեր.
Ո՛հ հայրենեաց կոռունկ սիրուն,
Տար սիրոյս հետ և զիմ ողջոյն:
Մեր հարթ կանաչ մարգագետինք,
Ուր կազաւեն հայ օրիորդներ,
Արդեօք քաղէ իմ անուշիկ,
Սրտին հատոր սիրուն վարդեր.
Ո՛հ հայրենեաց կոռունկ սիրուն,
Տար անկեղծ սէրս անդ հայերուն:
Մայրս կխորհեմ գիշերն ամեն,
Երբ աստեղը բարձր երկինս փայլեն,
Դառն արցունքներ աչքիցս վազեն,
Երբ կը յիշեմ իմ հայրենիքս.
Ո՛հ հայրենեաց կոռունկ սիրուն,
Տար արցունքներս անդ հայերուն:

138

ԱՅ ՍԵՒ ԱՄՊԵՐ...

Ա՛յ սև ամպեր, վայ սև ամպեր,
Սիրաբըս պատեց սև ու մութ...
Ետարբ ի՞նչ էք դուք ինձ բերում—
Գարնան անձրև, թէ՛ կարկուտ...

Յուսով-լուսով արտ եմ ցանել,
Արինն թափել ու քրտինք,
Ողջ սուրբերին՝ մոմ եմ վառել,
Աղօթք արել... որ երկինք,
Մտախ նայի տունս ինայի,
Կեանք տայ, օր տայ իմ հացին,
Վայ բալէքս... Ասուած չանի,
Թէ որ անհաց մընացին...

Այ սե ամպեր, ի՞նչ էք գոռում,
Սիրտըս պատեց սե ու մութ...
Եարար ի՞նչ էք սրտիս բերում—
Գարնան անձրև՝ թէ՛ կարկուտ...

ԱՂԱՍՈՒ ԵՐԳԸ

Մար ու ձոր ընկած մէկ չոր թփի տակի,
Գետնին նայելով՝ մնացել եմ նստած,
Զեռս ծոցումս, զլուխս մէկ լեռ բարի
Տըւած՝ լալիս եմ, օրըս խաւարած:

Ամպերն առաջիս, սարերն ետևիս,
Քեզ մտիկ տալով, այ իմ քաղցր Մասիս,
Աղի արտասունքով էրւած, խորոված,
Երեսիդ նայեմ, մընամ քարացած:

Ծընող, ազգականք հեռու ինձանից,
Լուսնին նայելով ձեր սէրն յիշելով,
Եարար երբ կըլի, որ ես քեզանից
Իմ կարօտս առնեմ, ձեզ ջան ասելով:

Աչքըս ծով դարձաւ ճամբին նայելով.
Մէկ զուշ, որ գլխիս պըտիտ է դալիս,

Թէ երբ մէկ խաբար կը հասնի ինձ բարով,
Հոգոց հանելով ասոււմ եմ լալիս,

«Նազըն իմ, Նազըն, աննման Նազըն,
Սիրաս խորովի՝ անունդ յիշելով,
Նազըն իմ, Նազըն, հրաշալի Նազըն,
Աղասին քեզ տայ իր յետին բարով:

Սարերի դօշին, ձորերի միջին,
Վայ գլխին տալով քո խեղճ Աղասին,
Երեսիցդ զրկւած, քո սիրով մաշւած՝
Տափալի նման փշի վերայ նստած:

Նազըն իմ, Նազըն, մէկ շունչս է մնացել,
Ոսկերքս քրքրել՝ աչքերս խաւարել,
Թո՛ղ մէկ շունչդ առնեմ, յետոյ հող մտնեմ,
Դժոխքն էլ տանեն՝ ես հանգիստ կլինեմ:

Քեզ եմ մընում, քեզ, քո ջանին մեռնեմ,
Հող ու գերեզան ես վըրէս ունեմ,
Քանց իմ սառը մարմին էլ ի՞նչ գերեզման
Ինձի պէտք կուզայ, երեսիդ զուրբան:

ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ

Դու անցար, հերոս, դէ՛հ հանգի՛ստ քեզ քուն.
Դու լուսադէմին մեռար լիայոյս,
Դու ճամբորդ ժիր դէպ ազատութիւն,
Երբ դեռ հեռու էր, հեռու՝ արշալոյս:

Տես ի՞նչ հերոսներ՝ երգովդ ստեղծւած՝
Փակեցին աչքերդ, որ հանգիստ առնուս.
Հերոսների մէջ դու մեռար, հերոս,
Մա մնով դառար հող, հոգով՝ արշալոյս:

է՛րնէկ քո յոյսին, նա՛մ, որ չէր դողում,
 Երբ թոյլ տնքում էր մեր ճահիճն անյոյս.
 Այն օձեր էին և գորտեր սողում,
 Քանզի գալու էր անշուշտ արշալոյս...

Սակայն երբ ազգի թմրկով ու փողով
 Դէպ՛ երբ ազատութիւն երթայ սրտայոյս,
 Դու կգաս այնտեղ յարութեան շողով,
 Բայց ննջի՛ր... դեռ կան մինչև արշալոյս...

ԽԱՆԻ ԵՐԳԸ

Լուսին չկար, մութ գիշեր էր,
 Մի խումբ կերթար արագ-արագ,
 Տեսանք որ քաջ Խանի խումբն էր,

Զինւած էին բոլոր նրանք:
 Կեանքերը ազգին նւիրած,

Կտրիճ Խանն առաջ ընկած.
 Գնում էին Տաճկաց սահման,

Թուշում էին ինչպէս կրակ:
 Հրացանները ուսերին.

Դրօշակը պարզել էին.

Գնում էին ուրախ, զւարթ.

Ազատութիւն երգում էին:

Մութ անտառից անցնում էին.

Ամեն մէկը առիւծ էին.

Նժոյգ ձիաներ նստած.

Մերկ սրերը քաշել էին:

Երբ քաջ Խանը հլաւ Բասեն.

Թնդանօթներ արձակեցին.

Հայ քաջերի մօսիններից

Գնդակները գողգողացին:

ՀՐԱԽԷՐ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ի գէն հայեր, ի սուր, և ի հրացան,
 Տաճկա--Հայաստանից կոչում է մի ձայն.
 Լեռից լեռ թնդում է անեղ հրաման,
 «Թռէք հայեր, թռէք՝ դէպի Հայաստան»...

Արեւիք, արևմուտք, հարաւ և հիւսիս,
 Դղրդաց ու թնդաց քաղցր աւետիս:
 Հայկայ քաջ զաւկաց առոյգ կուրծքերից
 Ազատութիւն հնչեց ամեն կողմերից:

Խումբ-խումբ հայեր դէպի Տաճկա-Հայաստան
 Փրկութեան աւետիք առած իր բերան
 Իրմում են ցնծութեամբ իբրև հարսանիք,
 Ուխտած սուրբ արիւնով փրկել հայրենիք:

Տաճկա-Հայաստանը ոտքի է կանգնում,
 Առիւծաբար վրէժ, վրէժ է կանչում,
 Արիւնով ներկում են բոլոր դաշտերը.
 Արիւն է լոկ հոսում բոլոր գետերը:

Թշնամին զարհուրած փախուստ է գիմում
 Անթիւ աւար և պահն հայերին թողնում.
 «Յաղթութիւն, Յաղթութիւն», գոչենք միաձայն
 «Թշնամին կորած է, կեցցէ՛ Հայաստան»...

ՆՈՐ ՏԱՐԻ

Երնէկ, թէ այս նոր տարին
 Վերջ տար Հայի ցաւերուն.
 Չարը կորչէր, ու բարին
 Բուն դնէր մեր սրբաւորուն:

Երնէկ, թէ այս նոր տարին
Ազատ շընչէր Հայաստան՝

Եւ շուրջ Մասիս մեր սարին
Փայլէին արաւանդաստան:

Երնէկ, թէ այս նոր տարին
Ոտքի կանգնէր Հայաստան

Եւ կիսաքանդ մեր Կարին
Լինէր քաղաք մեր ոստան:

Երնէկ, թէ այս նոր տարին
Հայ սըրտի մէջ ուժ հոսէր,

Ապաւինած իւր սըրին,
Հայր Քիւրդէն չի սարսէր:

Երնէկ, թէ այս նոր տարին
Հայ ազգ ի մի գումարուէր,

Ի գլուխ Կարնոյ Հայ ամբին
Հայի զբօշակ ծածանէր:

Հայեր, երբէք չե՛ր կմրտինք,
Կը կատարուի այդ ամէն,—

Եթէ իսպառ մենք հանենք
Փոքրոգութիւն մեր սըրտէն:

144

ՍԻՐԵՑԷՔ ՄԻՄԻԱՆՑ

Ես տաճար մտայ... «սիրեցէք միմիանց»
Լսվում էր բեմից քարոզ փրկչաւանդ,
Եւ ստուար շարքեր բարեղաշտ մարդկանց,
Աղօթում էին այնտեղ ջերմեռանդ:

«Սիրեցէք միմիանց... օ, վսեմ ուսմունք,
Որ միշտ կը կնւում ես միայն տաճարում,

Եւ միայն այնտեղ անշար զգացմունք,
Գուցէ զարթեցնում մարդկանց սրտերում...

Շատ եմ փափագած, որ լսե՛մ ես քեզ,
Ե՛ւ կեանքում—հեռու տաճարի բեմից,
Բայց իզո՛ւր փափագ... Դու հալածւած ես
Ե՛ւ մարդկանց սրտից, և՛ կեանքի շեմից...

145

Ա Ր Ա Ձ Ի Ն

Արնո՛ղ, տակըդ մի փորէ,
Առանց դըրան նա խոր է,
Արնո՛ղ փընտրածս ինձի տուր,
Կամ թէ ասան նա ո՛ւր է:

Ձիւան բալէս կըտրի՞ճ էր,—
Տանը նըստել կամաչէր.—

Եկաւ որ անցնի զընա,—
Ճամբէն կըտրե՛ին ամօթ չէ՛ր:

Արնո՛ղ, արդեօք դու գիտե՛ս,
Որ անհողի մի գետ ես.

Աչերըդ փակ, կատաղի,
Մուրազով մարդ կը խեղդես:

Մու՛թ ջրերիդ ծալերում
Բալիս հայեացքն եմ տեսնում,

Որգեկորոյս մի մայր եմ,
Արնո՛ղ, քեզ եմ անիծում:

Արնո՛ղ, քո ջուրը վարար,
Մի տար ցաւերս իրար,

Արնո՛ղ եթէ դու կարաս՝
Վերջին շունչըս բալիս տար...

146
ՄՇԵՅՈՒ ՀԵԿԵԿԱՆՔԸ

Վիզերըս ճըկած՝ սըլտով խոնարհներ,
Տիրասէր հպատակ լինինք ու ծառայ,
Նորա անունը աղօթքով յիշենք,
Խըղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:
Քըրտինք—վաստակի մեր տասանորդը
Տանք նորա գօրքին, որ նա կըշտանայ,
Ըլլանք սուլթանի մըտերիմ ճորտը,
Խըղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:
Թող նա մեր որդոց անմեղ արիւնով
Հաճոյքի համար սուրը լըւանայ,
Սըրտերուս կըսկիծն զըսպենք խընամբով,
Խըղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:
Թող պարկեշտասուն մեր աղջիկներով
Սուլթանի տըտփոտ պասքը յագենայ,
Մեր ոսկին սէրայ տանինք փէշերով,
Խըղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ,
Ցուցնունք որ Հայը չէ Տաճկին ոստի,
Այլ բարեացակամ սերտ ընկեր է նա.
Նորա գովողն է և ոչ չարխօսող,
Խըղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:
—Լուս կաց, խեղճ Հայ մարդ. սընտար յոյսեր
Քեզ շատ խաբեցին. էլ մի հաւատալ.
Կ'անցնին ու կ'երթան շատ ու շատ դարեր,
Հայ ազգիս վերայ Թուրքը չի խըղճալ:
Ինչո՞ւ կը մոռնաս Փըրկչի ասածը.
«Դուսը չիբախած՝ ոչ ոք չի բանալ»,
«Ո՞վ ըստացել է իւր չի հայցածը»,—
Հայ ազգի վերայ Թուրքը չի խըղճալ:

Ազատ լալ կուզես, գիտեմ փափագըդ,
Բայց դու մի յուսալ հասնիլ այդ օրին.
Ո՞ւր է, դու գիտե՞ս, բաղդըդ ու փառքըդ
Ու ազատ կեանքըդ:—Ի ծայր քո սուրին...

147

ՄԱՆԿԱԿԱՆ ԹՈՒԹՈՎԱՆՔ

Աշխարհիս վեշայ մէկը կար միայն,
Որ ինձ սիրում էր հօգով անարատ,
Նա իմ մայրիկն էր, իմ անուշ Ագին,
Հոգուս ու մարմնուս ծնող հարազատ:
Միաքս թռչում է միշտ դէպի երկինք,
Երբոր յիշում եմ մայրիկիս անուն.
Այդ նորանիցն է, որ չեն երկրային՝
Ոչ նորա ստինք, ոչ նորա լեզուն:
Նա ինձ կաթ տուաւ, տուաւ և լեզու,
Մինը քան զմիւսն աւելի անուշ.
Մէկով իմ փափուկ մարմինն էր սնվում,
Միւսով զարգանում իմ հոգին քնքուշ:
Ի՞նչ կայ այնքան քաղցր ու մնդարար,
Որքան անարատ կաթն է մայրական,
Ո՞վ կարէ խօսել այնպէս սրտաբուխ,
Ինչպէս որ մայրն է թոթովում մանկան:
Կարծես հիմա էլ տեսնում եմ մօրըս.
Ես իբրև մանուկ գրկումն եմ անն,
Նուրը շրթունքներիս զարկում է մատով,
Որ իւր հկտ ձայնեմ «ազ՞ն» կամ «ազմ»:
Ես թոթովում եմ հրճվում է մայրըս,
Իմ մէջ տեսնում է շնորհքի նշան.
Չար աչքից ազատ պահելու համար՝
Վերաս կարում է պէս-պէս թալիսման

148
ՄՈՒՇԵՂԻ ԵՐԳԸ

Քաջ Անդրանիկի այրող կայծակի.
Առիւծ Մուրադի ընկերն ես, Մուշեղ.
Հայոց անձնուէք, կտրիճ խմբակի.
Փայլուն Փարոսը, լապտերն ես, Մուշեղ:
Հայրենիքդ Մուշ լեզուդ քաղցր անուշ,
Ինքդ դեռահաս, ոյժդ անպակաս,
Պապիդ Վարդանայ պատկերն ես, Մուշեղ:
Թողած տուն ու տեղ, հայրենիք, ծնող,
Վսեմ, սուրբ գործին, սրտանց հետևող,
Զինավարժութեան հմուտ ու յաջող,
Կրակն էլ մանես, դուրս կելնես յաղթող:
Անյաղթ քաջի պէս դուրս կուգաս հանդէս,
Կուռւմ ես անվախ, խիղճմ աջ ու ձախ.
Մասնոյ դիւցազն, Մհէջն ես, Մուշեղ:
Բերդաքաղաքում հրաշք գործեցիր,
Մարտնչոյ խմբին նորից կեանք տւիր,
Մեծից ու փոքրից սիրւած, անխտիր.
Ժողովրդի ճուտ, ինքդ քաջ ու ժիր:
Թաթարներու քով չեղար ամօթով.
Տէրը տայ քեզ կեանք. դու հայի պարծանք,
Գոհ ենք Արարչից, որ մերն ես Մուշեղ:

149
ԴԱՐԴՈՏ ԵՄ

Դարդոտ եմ, դարդաքաշ եմ,
Սարի չափ դարդ կը քաշեմ,
Դարդըդ դեր դարդիս վրայ
Էն էլ ես կը քաշեմ:

Մօրից տնից ձեռ քաշի,
Սիրու խաթեր ձեռ քաշի,
Ազիս եարիս որ տարան,
Զոր գլխուցս էլ ձեռ քաշի:
Դօխիկ ջան, ես ինչ անեմ,
Կարօտդ եմ ես ինչ անեմ,
Ես կերթամ, սիրտս չի երթայ,
Դուն կերթաս ես ինչ անեմ:
Կեանքս գնաց յետ չի գայ,
Հաւք էր թռաւ յետ չի գայ,
Մարդուս սիրտը որ կտորաւ,
Կեանքն էլ գնաց յետ չի գայ:

150
ԶԱՐԹԻՐ ԼԱՕ

Զուր երբ մնանք զէլու գոներ,
Երթամ գանիմ զիմ խեղճ գառներ.
Սուքեմ զիմ պախչայի ծառներ.
Զարթիր, լաօ, մոնիմ քզի:
Սեղճ մշեցին մեռաւ լալով
Օտար երկիրներ ման գալով,
Մեռաւ թուրքի պարտքը տալով,
Զարթիր, լաօ, մոնիմ քզի:
Գրող տանի բուրդ Հասօյին.
Որ չսպանէր ջօջ Ափօյին.
Իլաճ մացեր Արաբօյին.
Զարթիր, լաօ մոնիմ քզի:
Դէն իրիշկէ, գալողն թրն ա,
Քաջ Արաբօ բաղդաւորն ա,
Կարմիր երիցանց զինւորն ա,
Զարթիր, լաօ, մոնիմ քզի:

ԱՆԿԵՂԾ ԶԻՆԻՈՐ

Մենք անկեղծ զինուոր ենք, առանց ի վիճակի
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ,
Պարսկաստանի խորքից եկել խիստ նամակ,
Գնում ենք բարով, կուշանանք տարով,
Արիւն, սուր ու հուր, պատերազմի դաշտ
կըսպասեն մեզի:

Դուշմանը մեզ տուաւ «Նան ֆիդայ» անուն
Այդ անւան համաձայն, տեսաւ զօրութիւն,
Մենք չենք ուզեր ազատ կամաւ բռնութիւն,
Ուխտել ենք կուել, այդ սիրով մեռնել,
Համոզւած ենք որ այդպիսով միայն
կայ մեզ փրկութիւն:

Ստամբուլը պիտի լինի արեան ծով,
Ամեն կողմից կռիւ կսկսի շուտով,
Կոտորենք Բաշկալայ, անցնենք հեշտ կերպով,
Աջից Վարդանը, ձախից Իշխանը,
Գրաւենք Աղբակ, տարածենք սարսափ,
Փառք Դաշնակցութեան:

ԽՆՈՒՍԻՑ ԳԱՂՈՂ...

Մնուսից գալող հայ զիւորները քաջ,
Արեան դաշտից եկած և պարտաճանաչ,
Հին-հին վրէժներ առնել էր նոցա պահանջ,
Ինչի պէս վազեցին թշնամու առաջ:

Մօտ թևով տասն ու չորս և իրանք անվախ,
Ղեկավար՝ Տիգրանն էր, գործում էր անկախ:

ՎԱՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Պըզտի տըղայ, չեմ օրօրիւ օրօրանքըդ, որ քուն լաւ,
Հայ աղբարքըդ ոտքի ելան, մենակ դժու ետ պիտ մնաս.
Զարթէ, հոգիս անուշ քունէդ, թող աչքերըդ լուս
տեսնին,

Արևմուտքէն արև ծագեց, բաղդը բանեց Հայ ազգին:
Զար սուլթանի ոսկի թախտը ջարդըւեցաւ, վար
ինկաւ:

Թախտի տակէն հազար ազգաց ազատութիւն
ծագեցաւ.

Ով որ շուտով ոտքի ելլէ, ազատութիւն կը գրանէ,
Սիրուն որդիս միթէ մենակ չար լուծի տակ պիտ՝
մըտնէ:

Մենք սուլթանին շատ խընդրեցինք կողկողազին
ու լացինք,

Ազի ազի արտասուներով ձեռք ու ոտը լուսցինք.
Բայց նա չանասց պաղատանքին ողորմելի Հայերուն,
Այժըմ, նայինք, նա կը լըսէ շառաչիւնը սուրբրուն:
Տնւր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուլները, ար-

ձակեմ,

Ու այդ թուրիկ աջիդ մէջը մի պողպատէ սուր դընեմ,
Ըստրուկ գընն արեան դաշտը, վերագարձիր ազա-
տուած.

Արդեօք մի օր պիտի լըսէս մեր խնդիրըը, ո՞վ Աս-
տուած:

154

ՎԱՆԵՑՈՅ ՉՈՒՆՈՒՍԳԸ

Բնւ է, եղբարք, վիզ ճըկել,

Ողորմելի երեւել,

Ժամանակը հասել է

Հայ դքսօշակին ծածանել:

Հայոց լերինք թո՛ղ թընդան,

Հայոց բերանք թո՛ղ գոռան

Հայաստանի դաշտերում

Քաջ հայերու գիլ «ուռան»:

Արիւն վոթէ թո՛ղ Հայը,

Աղաղակէ միշտ ուռած.

Մեր թըշնամին այսուհետ

Սըրտի վախէն թո՛ղ դողայ:

Այսուհետև արտասուներ

Վախկոտները թո՛ղ հեղուն,

Հայքըս արդէն պատրաստ ենք

Վոթել ազնիւ մեր արիւն:

Ու չենք դադրիլ վոթելու

Մեր Հայ, ազնիւ արիւնը,

Մինչև ազգը չի ստանայ

Իրա ազատութիւնը:

Ախ ու վախը մենք մոռցանք,

Այժըմ գիտենք մենք ուռած.

Հայք, դոչեցէք միշտ ուռա,

Որ թըշնամին մեր դողայ:

155

Ի՞ՆՉ ԱՆԵՆՔ

«Ի՞նչ անենք»... Ամօթ այսպէս ասողին,
Ամօթ, բիւր ամօթ յուսահատուողին,
Մահ, մահ, հազար մահ հէգ վըհատուողին...
Եղբարք, ալ չասենք. «Հայեր, ի՞նչ անենք»:

Ասէք՝ ի՞նչ կ'անէ ջուրը ընկածը,

Ասէք՝ ի՞նչ կ'անէ քաղցած սովածը,

Ասէք՝ ի՞նչ կ'անէ գերի ընկածը...

Եղբարք՝ ալ չասենք. «Հայեր, ի՞նչ անենք»:

Ջըրամոյնք ճըգնին՝ քանի ուժ ունին,

Քաղցածը մաշէ շեմքը գրացիին,

Փախչել կըհնարի կաշկանգած գերին...

Եղբարք ալ չասենք. «Հայեր, ի՞նչ անենք»:

Հնարուտ, հէ՛ր ոսկիդ սընդուկ դըրել ես,

Կըտրիճ, ո՞ր օրուայ ուժըդ պահել ես,

Առ ի՞նչ, ազգասէր, ազգըդ սիրել ես...

Եղբարք, ալ չասենք. «Հայեր, ի՞նչ անենք»:

Հարնւտ, դիմացդ է ազնիւ ասպարէզ,
 Հայրենին լաւ է քան թէ ոսկու դէզ,
 Թէ մեռնիս՝ ոսկիդ հե՛տըզ կըտանես...
 Եղբարք, ալ չասենք. «Հայեր, ի՞նչ անենք»:
 Կըտընձ, ալ կ'անցնի քանի մի տարի,
 Այդ թըշիգ վարդը իսպառ կըխամրի.
 Չի թոռմիր միայն յիշատակ բարի...
 Եղբարք, ալ չասենք. «Հայեր, ի՞նչ անենք»:
 Թէ ուզէ Հայը նա շատ բան կ'անէ,
 Եղբարք, ալ չասենք. «Հայեր, ի՞նչ անենք»:
 Հայը կըստիպէ Վեհ Պատրիարքին.
 Յորդորակ սըփռել բոլոր Հայ ազգին,
 Թոթուել-դարթեցնել մեր թմբած հոգին...
 Եղբարք, ալ չասենք. «Հայեր, ի՞նչ անենք»:

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Դաշնակցական խումբ գնանք մենք Սասուն.
 Մեր հայ եղբայրներ մեզ են ըսպատում,
 Անդրանիկը քաջ իւր ընկերներով,
 Կուզէ պատերազմ, կսպասէ գարնան:
 Մօտ է գարունը շուտով կը բացի,
 Հայի խօսքը քաջ, շուտով կը լսի,
 Հայերն անվախ, հոգով միացած,
 Հրացան ուսերին մերն է «Նոր-տարին»...
 Խմբապետները հոգով են կանգնած
 Ֆիդայի ուժով գնում են առաջ
 Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ
 Գոռուս է գոհում, կուզէ պատերազմ:

Յիշէք, եղբայրներ մենք շատ քնեցինք,
 Բաւական է մենք այսքան համբերենք.
 Մայր-Հայաստանը ձեռքից հանեցինք,
 Հիմայ այժ ունենք դարձեալ հետ կանոնք:

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ

Մաստի ճակատին ամպրոպ պատոեցաւ,
 Հայերուս սըրտէն վախ փարտոեցաւ,
 Նըժոյգ է տակըս, ձեռիս այնալու,
 Սուլթան, ունիս ուժ ինձ դիմանալու.
 —Ըստրուկ եմ եկել, կը դառնամ ազատ,
 Յետ խըլած քեզմէն հողն իմ հարազատ:
 Անսուտ երգումով ուխտել եմ ազգիս—
 Զոհել մարմինըս, զոհել և հոգիս,
 Արհամարհել սով և անդորրութիւն,
 Տալ Հայաստանին սուրբ ազատութիւն.
 —Ըստրուկ եմ եկել, կը դառնամ ազատ,
 Յետ խըլած քեզմէն հողն իմ հարազատ:
 Էլ ես ահ չնւնիմ քու վախկոտ զօրքէն,
 Զըզուած եմ ես քու շարեաթ օրէնքէն.
 Մըշու դաշտերը, Վան ու Արզըրուս
 Կ'լուանան Տաճկի սև ու պիղծ արիւն.
 —Ըստրուկ եմ եկել, կը դառնամ ազատ,
 Յետ խըլած քեզմէն հողն իմ հարազատ:
 Թշուաւ, քու յոյսն է Չերքէզն ու Քուրդը—
 Հա՛, մէկ քամիին տամ նոցա բուրդը.
 Չեռքիս ունիմ ես Ղևոնդի լախտը,
 Որ ջարդեմ-փըշրեմ քու փըթած թախտը.
 —Սուլթան, սիրտ ունիս, իջիւր մարտի դաշտ,
 Տես, քու առջևն է թըշնամիդ անհաշտ:

ՀԱՅՐԵՆԵԱՅ ՍԻՐՈՅ ՀԱՄԱՐ

Հայրենեաց սիրոյ համար
Խմբեր պատրաստած են քաջ.

Հրացանները ուսերին
Փամփուշտները ձախ ու աջ:

Հնազանդ կարգով շարած,
Իրանք առիւծի պէս քաջ.

Խմբապետը հրաման տւեց
Գնալ դէպ յառանջ, յառանջ...

Ոսկեզօծ բաշլուղներով
Լազի շորեր թանգազին

Գնում էին դէպի Մասուն:
Օգնելու Անդրանիկին:

Հայ քաջերը դիրք մտան
Թշնամուն պաշարեցին,
«Ամեն կողմից կրակ տւէք,
Կոտորեցէք», գոռացին...

Եաման եկաւ ջան ֆիզան,
Սարսափ տիրեց բանակին.
Փախչում էին դէպ լեռներ
Վախկոտ դօրքերն ահագին:

ՄՇԵՑՈՒ ՄՕՐ ԱՂԱԶԱՆՔԸ

Թիփի բորան մութ գիշերին
Կըպտուէ ֆիզային,

Պատրօնդաշն խաչփագ թալած.
Զեռքին առած հրացան:

Ախ, ձեզ մատաղ, ջանֆիզայիք
Զեր մէր ձեզի թող մեռնի.

Մշու սուլթան սուրբ կարապետ
Զեզի քեօմագ թող եղնի:

Դուք վախցուցիք քիւրդ անօրէն
Քշիք մեր սար ու ձորէն,

Քեաֆր քրդու աչք վախեցաւ
Ջան ֆիզայու պուլայից:

Ախ, ֆիզայիք ձեր սագաղէն.
Զեր խետ տարէք զիմ տղուն,

Զեր խետ մրենի ձեր խետ ապրի.
Ազգի մատաղ զիմ տղէն:

Թող դէն թողնի խարօր ու մաճ
Իմ մէկ ու ճար ազիդ լաճ,

Քիչ մնլ թող թուանքի խետ խաղայ.
Էլ թող չը տայ քրդին խարճ:

ՍԵՐՈՅ ՓԱՇԻ ԿՈՉԸ

Ով որ քաջ է ինչ կը սպասէ.
Արդէն ժամանակ է, թող գայ.

Մահ-պատերազմի օրհաս է.
Ով որ անվախ քաջ է՝ թող գայ:

Կամ կուենք պարպենք, վերջանանք,
Կամ զէնքով փրկու թիւն ըստանանք,

Կուելով փրկենք Հայաստան,
Ազնիւ մտածողը թող գայ:

Մերթ Մասուն մերթ սարէ Սիփան
Կուիւ անենք միշտ անխափան,

Կուելով փրկենք Հայաստան,
Այս յոյս ունեցողը թող գայ:

Այս հինգ դար է մեզ կսպանեն,
 Բռնի կրօնքէն կըհանեն,
 Մեր կին աղջիկներ կը տանեն.
 Պատիւ ունեցողը թող գայ:
 Երկաթէ մարդ քարէ հողի
 Վրէժխնդիր լինի թուրքին,
 Անվախ քարի տակ չոքողը
 Անսխալ խփողը թող գայ:
 Վերջապէս մենք ունինք կռիւ,
 Ձէնքով պիտի մաքրենք հաշիւ,
 Մեր հայրենեաց փառքն ու պատիւ՝
 Սերոր-փառային սիրողը թող գայ:

161

Ի ՄԱՀ ՐԱՖՖԻԻ

Վըհատած հոգուս ցաւած խորքերից՝
 Աշխոյժ, արթնացիր,--կրկին ոգի առ,
 Տնւր ինձ, արիւնոտ սրտիս թելերից
 Մի պսակ հիւսեմ անմահի համար:
 Անմահ Րաֆֆիի սուրբ յիշատակին՝
 Բերում եմ աննա ի ձօն այս հիւսած,
 Ազգիս բազմաշխատ ազնիւ մըշակին՝
 Ես-էլ ուզում եմ տալ յարգանք յուզւած:
 Գնձկան, մի գուժիր, թէ Րաֆֆին մեռաւ,
 Նա անառց կեանքով միշտ կայ կենդանի,—
 Դարեր կըսահեն, նա զեռ անզրաւ
 Հայ սերնդոց մէջ՝երկար կեանք ունի:—
 Նորա վեհ մըտքի փայլուն ծընունդներ—
 «Կայծեր», «Սամսայի մելիքութիւններ»,

«Սամուէլ, Փընջեր, Խենթ, Դաւիթ-Բեգեր»
 կընծայեն Հային նոր կեանքի մըտքեր...
 Ճանապարհ տուէք, Րաֆֆին տնայնում է,
 Ուսերին բարձած բեռն անմահութեան...
 Տեսէք հեռքերը սրչափ հընձում է
 Համայն հայ ազգից դափնիք զոհութեան:
 Թող Րաֆֆին երթայ, կայթէ այն կաճառ՝
 Ուր հանգիստացած կան մեր մեծ մարդիկ,—
 Բայց հայը ընդմիշտ նորա ձիւղն ու հանձար
 Կը յարգէ անկեղծ քնքոյշ գերթ վարդիկ:
 Անցի՛ր, սըլացի՛ր դու երկնի խորան,
 Ով յաւերժացած լուսափայլ հողի,—
 Բայց քո վաստակներն կըտան նոր ոգի,
 Նոր շունչ Հայերին վերածնութեան...
 Անցաւ և Րաֆֆին ինչպէս մի յաղթող,
 Եւ պայծառ հետքը թողեց աշխարհում.
 Սերնդից սերունդ նա կանգնեց կոթող,
 Նըշան անմոռաց հայոց սրտերում...

162

Յ Ո Յ Մ

Թող փըչէ քամին պաղ պաղ երեսիս,
 Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,
 Ո՛րքան որ կուզէ՝ թող փըչէ Հիւսիս,
 Յուսով եմ, վաղ-ուշ, գարունը պիտ գայ:
 Թուխով թող պատէ երկինքը պայծառ,
 Թանձրը մառախուղ երկիր թող փակէ,
 Տարերք տշխարհիս խառնուին իրար,
 Յուսով եմ, վաղ-ուշ, արև պիտ ծագէ:

Թո՛ղ գայ փորձութիւն, թո՛ղ գայ հալածանք,
 Խաւար թո՛ղ դաննայ անաղօտ լոյսը,
 Սարսափելի չեն Հային տառապանք—
 Միայն... չի հատնէր խըղճուկի յոյսը:

ՆՊԱՏԱԿԻՍ ՀԱՍՆԵՄ ՄԻԱՅՆ

Նպատակիս հասնեմ միայն,
 Թող զիս հանեն կախադան.
 Կախադանէն խեղտուկ ձայնով
 Պիտի գոչեմ, ա՛խ, Հայաստան:
 Ա՛խ, Հայաստան սիրտս ու հոգիս,
 Քեզ նւիրեմ ընդունէ,
 Թէ կարելի, թող ես մեռնեմ,
 Թաք Հայաստան ստքի ելնէ:
 Անոր սիրուն բանտն ալ մտնեմ
 Պալատ է այն ինձ համար,
 Ոտք ու ձեռքս շրթայակապ
 Երջանկութիւն է ինձ համար:
 Թէ մինչև իսկ աքսորեմ ալ
 Թափառական գտնէ զիս բախտ,
 Հայաստանի սիրոյն համար
 Փշոտ վայրեր կլլան գրախտ:
 Ա՛խ- Հայաստան դու սիրուն վայր,
 Մինչ ե՛րբ այսպէս քո որդիք
 Քեզնէն հեռի պիտ հառաչեն,
 Իսկ զձեք մինչ կըր թափառիք:

ԵՍ ԿՈՒՉԵՄ ԿՈՒԻՆԷԼ

Հերիք է, մայրիկ, դու ինձ փայփայես,
 Հերիք է, մայրիկ, ինձ կրճքիդ սեղմես.
 Ես կուզեմ խմել ջրի տեղ արիւն
 Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:
 Հասակս քսան տարուց անց կացաւ
 Սիրտս վրէժով լիքը լցեցաւ.
 Չեմ ուզում տեսնել եղբայրս թշւառ,
 Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:
 Լացով չեմ կարող փրկել Հայաստան,
 Մայրիկ, ինձ պէտք է ձի, սուր, հրացան,
 Չեռնիրս ծալած չեմ կարող նստել,
 Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:
 Համի՞զն ունի գործեր մեզի հետ,
 Մեկ կոտորում են, մեկ թալանում են.
 Հերիք է, մայր իմ, կարճի եմ լուել,
 Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

ԱՐԻՔ ԵՂԲԱՅՐՔ ՄԻԱՆԱՆՔ

Եթէ կամիք փրկել թշւառ հայրենիք
 Նախ պիտ կապենք մեր մէջ մի սիրտ ու հոգի,
 Եթէ կամիք անցեալ փառքին տիրանալ
 Հարկաւոր չէ կուսակցութեան բաժանել:
 Արիք եղբայրք միանանք
 Բաւ համարենք մեր տանջանք
 Ի սէր ճնշած հայ ազգին,
 Գործ դնենք մեր ճիգ ու ջանք:

Մեր պապերն էլ ներկայիս պէս գործեցին
Որ մեր տունը իրանց ձեռքով քանդեցին,
Ուրիշներն սուտ պարգևից շլացած,
Մեզ մատնեցին մինչև այժմ գերութեան:

Արիք եղբայրք և այլն:

Մենք Հնչակեան, եղբայրք, դուք Դաշնակցական
Մենք երկուսս էլ կուլանք վիշտը հայկական.
Արիք վճռենք, հոգով սրտով միանանք
Ձեռք ձեռքի տանք, ապա գործենք արշաւանք:

Արիք եղբայրք և այլն:

Մի նպատակ և մի վսեմ գաղափար
Մեզ կը սպասեն անհամբեր ու անդադար.
Ուխտենք, եղբայրք, յայտնենք սրտի միութիւն,
Միութիւնով պիտի գտնենք փրկութիւն:

Արիք, եղբայրք և այլն:

166

Ն Ի Է Ր

Անուշաբոյր, թարմ ծաղիկներ,
Հայ օրիորդը ինձ ընծայեց,
Հեռու երկրից անկեղծ նւէր,
Իր քոյրերուն ուղարկեց:

Ասաց. «Տուր այդ փունջն ու ասան.

Թէ չի անցնիլ էլ երկար
Կուի դաշտում հարս ու փեսայ,
Կը հանդիպենք մենք իրար:
Կուի կուտանք, կուի արդար
Կուի վերջին ձգնական.

Գօտէպնդւած, հերոսաբար
Ու կազատենք Հայաստան»:

Դուրս ցայտեցին արցունքներ տաք,
Իմ աչքերից այդ պահուն,
Լսում էի կարծես անյազ
Ազգութեան պատգամին:
Եւ երգեցի տանել փունջն այն,
Դէպի կարմիր Հայաստան
Ուր վիրաւոր հայերն համայն
Սպասում են փրկութեան:

167

ԱՆԹԻԻ ԴԱՐԵՐ

Անթիւ դարեր թափառեցինք,
Դարձեալ օտար հող մնացինք,
Մեր անուշիկ Հայաստանէն,
Հեռու-հեռու բնակեցինք:

Հայ անունը ամենքի մօտ,
Դարձել է լոկ չնչին մի խօսք,
Հայեր-հայեր մտածեցէք:

Ձեր խոր քմից ըսթափուեցէք.

Սասնա, քաջեր ձեր գլուխներ
Բարձրացրէք գերեզմանից,
Տեսէք թէ ձեր երջանիկ ազգը,
Թէ ինչ վիճակի է հասել:

168

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ես գնում եմ հեռու երկիր
Իմ սիրելի թանկագին
Բաժանում եմ ես քեզանից
Գուցէ կրկին չը դառնամ:

Վեր կաց սիրուն քո ձեռքովդ
 Մէջքիս կապէ սուր, նիզակ
 Պտտերագծի փող հնչեցին
 Պիտի մտնեմ զէնքի տակ:
 Մնաս բարով իմ սիրելի
 Իմ թանկագին բարեկամ
 Միշտ աղաչէ Աստուծանից
 Որ կենդանի հետ դառնամ:
 Հայրենիքի սիրոյ համար
 Աշուղ երգիչ եմ դառել
 Գերեզմանս մէկ քարի տակ
 Դուք պիտ ծածկէք սև հողով:

ԽՕՍԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐ

Անխղճօրէն մեզ դատում են,
 Խօսիք Հայաստանի լեռներ.
 Եղբայրս ինձնից դատում են,
 Խօսիք Հայաստանի լեռներ:
 Իմ խնդրիս չեն զնում ականջ,
 Ասում են սուտ է քո պահանջ,
 Այս հողերը թւին էր առաջ
 Խօսիք Հայաստանի լեռներ:
 Գուցէ յիշէք դուք այն օրը,
 Որ պապըս լծած արօրը,
 Ցանում էր ձեր դաշտ ու ձորը.
 Խօսիք Հայաստանի լեռներ:
 Գիտեն իմ պապիս անունը
 Բայց ստում են ուղղութիւնը,

Գոնէ նրանց պատմութիւնը,
 Խօսիք Հայաստանի լեռներ:
 Հիմայ ձեզ մնաց ամեն բան,
 Պէտք է դուք դաք վկայութեան,
 Ո՞ւմնով էք կոչում Հայաստան,
 Խօսիք Հայաստանի լեռներ:
 Պայծառիս վիրաւորել են
 Հողերուն հաւասարել են,
 Մեր կայքը օտարք տիրել են,
 Խօսիք Հայաստանի լեռներ:

ՏՈՒՐԲԱՆԻ ԵՐԳԸ

— Ուրեմն մնաք բարով ազնիւ ընկերներ,
 Մեռնեմ ձեր հոգուն երջանիկ քաջեր
 Քո հողին մեռնեմ Տալուրիկ սպաս,
 Կեցցես դու յաւէտ Սնդրանիկ քո զարդ:
 Քաջի համբոյրով տուաւ հրաժեշտ,
 Անվեհեր Տուրբախ ընկեր հարազատ,
 Բոպէ անցաւ պացաւ ուժգին,
 Վեհ դաշնակցութեան սուրբ անւան արժան:
 Երկինքը պատել էր գունդ-գունդ սև ամպեր,
 Արեգակ չկար, մութ ու խաւար էր,
 Դժուար էր դատել քաջ ընկերներին,
 Հայ ազգի սիրած ու պաշտած տեղից:
 Հեռից տեսնող էլ ու աշիրաթ
 Երնէկ կուտային քեաֆուր Տուրբախին,
 Ահ ու սարսափով լցւած թուրք միլլաթ,
 Կապուտ աչերից արցունք կը ցայտէր:

Նժոյգ ձի նստած ահուելի դէմքով,
 Երկինք ձայն տւեց վեհ քաջի արարք,
 Խնուսայ փաշէն լցւած էր գոյով,
 Թռչում էր ցոլակ, ցայտում էր կրակ:
 Անհամբեր սրտով Դաշնակի ձիւղեր.
 Կտրիչ Տուրքախի գալուն կը սպասեն.
 Փառք ու պարծանք են մեզ այսպէս քաջեր,
 Ուրախ լուր բերաւ ազատ Սասունէն

171

ՍԻՐՈՒՆ ԾԻԾԵՌՆԱԿ

Բարով ես եկել ծիծեռնակ սիրուն,
 Ինչ լուր ես բերել պանդուխտ հայերուն,
 Գիտես որ մենք միշտ աչքներին յառած.
 Քեզ ենք սպասում ամեն մի գարուն.

Գլուխս ծռած խեղճ ու հեզ,

Աղաչում եմ ահա քեզ,

Եկել ես հայրենիքից,

Ինչ աւետիս բերիր մեզ,

Եկել ես հիւր ասա մէկ լուր,

Մի սպասէ զուր,

Լեզուվրջ սուր աւետիս տուր,

Մեզ ուրախացուր

Ինչ լուր ես բերել սիրուն ծիծեռնակ,
 Դու հայրենիքից աստ եկած թռչնակ,
 Ասա ինչպէս է իմ հայրենի տունը,
 Խօսի՛ր ինձ հետ ազատ համարձակ:

Ասա մի բան իմանամ,

Որ քեզանից գոհանամ,

Ուրախացուր սիրտըս իմ,
 Տարակուսւած չմնամ,
 Դու սլացար սարէ շար,
 Մինչ այստեղ հասար,
 Դու ինձ համար բարով եկար,
 Ասա մի խաբար:

172

ԳԱՐԵՎՆԻ ԵՐԳ

Հայաստանի փառք ու պարծանք Գարեգինը կարնեցի.
 Թիկունքը լայն, թեկը հաստ, ինքը կորիւն առիւծի:
 Հայաստանի վէրքին հմուտ, վիրաբոյժ էր խելացի
 Եղբայր լացէք ու ողբացէք այն քաջ հերոսի անձի:
 Խմբով ելան Ղալաբուլազ թշնամու դէմ կուեցին:
 Մի քաջ հերոս վիրաւորւած՝ Գարեգինին յանձնեցին
 Նա ուզում էր վիրաւորին հեռացնել արեան դաշտից.
 Չորս կողմիցը յարձակեցին և քաջին պաշարեցին:
 Անիրաւ, վատ թշնամի դու քաջ Ֆիդայուն լաւ ճանաչէ,
 Ուրիշից օգնու թիւն փնտռող Եւրոպայից ամաչէ
 Որքան կուզես մեզ հետ կուէ, ամբողջ այդ զօրքերով,
 Վստահ եղիր, որ քեզ յաղթող պիտի լինի քաջ Ֆիդան:
 Նա ուխտել էր պէտք է գոհէր իրա կեանքը Դրօշակին,
 Եւ ճշտապէս նա նւիրեց իրա կեանքը թանգազին:
 Կուրծքին չորս գնդակ ստացաւ, վէրք ունեցաւ ահագին
 Կրկին հրացան էր պարպում այն քաջ հերոս Գարեգին.
 Միջազին եմ պէտք է յիշեմ ձեզ նման միշտ քաջերին
 Որ թափեցի՛ք ձեր արիւնը Հայաստանի հողերին:
 Ամբողջ հայութիւնը կանգնած է ձեր վրէժը լուծելու,
 Ինչք Հայաստանի քաջեր, հանգիստ ձեր ոսկորներուն:

ՆԱԶԷԻ ՕՐՕՐԸ

Քնիր իմ բալիկ, օրօր, էլ արն,
Դու լաց մի լիներ, ես շատ եմ լացել
Կոյր կոռնկները սուգ ու շիվանով
Մեր սև երկնքից եկան անցկացան,
Ա՛խ, մեր լեռներում նրանք կուրացան,
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:

Հողմն է հեծեծում սև անտառներում,
Անտէր մեռելի սուգն է այն, բալիկ,
Անտէր ու անթաղ մեռելները շատ,
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:

Կարաւանն անցաւ, բարձած արցունքով
Սև անապատում ծռնակ չորեց փնաց,
Այն մեր աշխարհի դարդ ու զուլումն է,
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:

Յուրունք եմ կապել օրօցքիդ,
Չար աչքերի դէմ, մեր չար դուշմընի,
Քնիր ու աճիր, շուտ արա, բալիկ,
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:

Դալուկ շրթունքիդ իմ կաթը սառեց
Դիտեմ այն դառն է չես ուզում, բալիկ,
Ա՛խ վշտիս թոյնն է քամել նրա մէջ,
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:

Կաթիս հետ մեկտեղ սև վիշտս ծծիր,
Հոգուդ մէջ թող նա սև վրէժ դառնայ,
Ծլիր, բոյ քաշիր, բոյիդ ես դուրբան,
Եւ լաց մի լինիր, ես շատ եմ լացել:

ԽԱԻԱՐԵԼ ԵՄ ԻՆՉՊԷՍ ԳԻՇԵՐ

Խաւարել եմ ինչպէս գիշեր,
Իմ չորս կողմս է փոթորիկ.
Չունիմ ես սէր, չունեմ ես սէր,
Ես սիրում եմ հայրենիք:

Այնտեղ անթիւ անբախտ մայրեր,
Որդեկորոյս ծնողներ,
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր,
Թափում են յորդ արցունքներ:

Ինձ մի սիրիր ինձ մի սիրիր.
Ես շատ ու շատ փոխել եմ.
Առ թաշկինակդ սրբիր աչերդ.
Ես քեզ թիրել կարող չեմ:

Մնաս բարեաւ իմ աչքի լոյս,
Սէրդ լինի ինձ խրախոյս,
Այդ արտասուքը ես պիտ թափեմ
Որ իմ ցաւերս սփոփեմ:

ԲՈՅԸԴ ԲԱՐՉՐ

Բոյըդ բարձր սալբի չինար
Աչքդ նախշուն, ունքդ կամար,
Դուն ստեղծուել ես ինձի համար,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Գոյնդ նման է մարմարի,
Հագիդ շորերն է յարմարի,
Դուն ես վարդը այս աշխարհի,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Քեզ տեսնելը ինձ մեծ մահ է,
 Հողիս հանեմ տամ քեզ պահէ,
 Ինձնուժ եղած ինձ ի՞նչ շահ է,
 Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Գիշեր ցերեկ նստայ լալով,
 Աղի արտասունք թափելով,
 Ինձ թողել ես տանջուելով,
 Անգին ծաղիկ իմ նոր բուսած:
 Ես քեզ տեսայ ծաղկանց միջին,
 Աղաչեցի ես իմ փրկչին՝
 Որ չը կտրէ յոյսն իմ վերջին,
 Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

176

ԻՍԼԱՄՆԵՐԻ ԳՈՌ ՎԱՇՏԵՐԸ

Իսլամների գոռ վաշտերը կատաղի,
 Պաշարել են մեր լեռները սոսկալի,
 Ելէք ելէք քաջ հայեր, արիւն թափենք անձուէր
 Հեռացնենք բռնութիւն, պաշտպանենք մեր լեռները,
 Թափենք մեր վերջին արիւն:

Շէնիկ Սէմալ պաշարւած են քիւրդերով,
 Տալուրիկի անցքն է փակւած զօրքերով,
 Մի վհատիր քաջ Սասուն մեզ համար չէ նորութիւն,
 Մենք պապերից սորված ենք մեռնել տղամարդու պէս
 Զուր չթողին մեզ յիշատակ:

Քոյր եղբորից բաժանելու եկել են,
 Հայր և որդի սպանելու եկել են,
 Իսէր Աստուծոյ դժար է, հպատակուել իսլամին,
 Լաւ է մեռնիլ առանց հաց, քան թէ յաճնուել թուրքին
 Անխիղճ են և անասուած:

Գարնան ելման գետի նման գոռալէն,
 Թափենք դէպի մեր դիւշմանը փրփրալէն,
 Թող սրտտան հրացաններ մեր ժայռերի ծայրերից,
 Թող խոցոտի շուն վալին, շանթի սուլթանի սիրարը,
 Որպէս կայծակ երկնքից:

177

ՍԵՐԵՄՁԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վերքերով լի ջանֆիդայ եմ,
 Թափառական տուն չունեմ,
 Եարիս փոխարէն զէնքս եմ գրկել,
 Մի տեղ հանգիստ քուն չունեմ:

Արիւնրտ երկիր, սուգ ու շիւան,
 Ինձ դուրս կանչեց փակ կեանքից,
 Տանջւած հայրենիքի սէրը,
 Զը վախեցուց ինձ վտանգից:

Ես կոչեցայ ջան-ֆիդայի,
 Դարձայ զինուոր գաղափարի,
 Թող իմ թափած արեան շիթեր,
 Օրինակ դառնայ հայ զինուորի:

Ահա հանգիստ հող կմտնեմ,
 Յոյսս դուք էք ընկերներ,
 Շարունակէք մեր սուրբ գործը
 Դաշնակցութեան վեհ քաջեր:

Կախաղանից երբոր քամին,
 Ինձ տարբերեց ճօճալէն,
 Յիշէք Պետրոս Սերեմջեանին
 Թուրքից վրէժ գոռալէն:

Թէ ի՞մ ԱլեհՈՐ...

Թէ իմ արևոր հերքըս սենային,
Ոյժըս ինձ յետ գար, կըտրի՞ճ դառնայի,—
Նըժոյգ ձի նըստած, պելըս ոլորած,
Չենըս թուր առած ես դաշտ կ'երթայի:
Ես դաշտ կ'երթայի—դաշտն Աւարայրի,
Ողողած ցողած Հայոց արիւնով,
Ազգ իմ սիրական, դու ազգ թորգոմեան,
Քու կորցրած թագը քեզ հետ կուտայի:
Կ'ասէի Հայոց օրիորդներին,
«Ծախեցէք հագի ձեր թանգ շորերը,
Թողէք պաճուճանք, զարդ, մարգարիտներ—
ժանգոտած ու գուլ են մեր թըրերը:
Տուէք բեհեգեայ մեզ ձեր շապիկը,
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը,
Վիրակապ հիւսէք դուք ձեր մազերից.—
Այսպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը»:

Թէ ես լինէի հարուստ մեծատուն,
Սընդուկներըս լի ոսկով, արծաթով,—
Շատերու նըման ես չէի լինիլ
Երբէք ազգասէր ունայն խօսքերով.
Շամպանեա գինու, Ա... Խ... տեղ՝
Կառնէի առատ գընտակ ու վառօդ,
Արձակ համարձակ կ'երթայի հանդէպ
Հայատեաց ազգին անթիւ զօրքերով:
Թէ ես լինէի մի երկրի իշխան,
Կուտայի զօրքիս սաստիկ հըրմաման.—
Շուտաքայլ երթալ դէպի Հայաստան,
Խրղճուկ հայ ազգին լինել օգնական.

Եւրոպ' Ասիա արեան գետերը
Կըվազեցնէի հեղեղի նըման,
Մինչև որ թագ, դահ ու ազատ կըրօս
Ինձնից չըստանար թըշուտո Հայաստան:
Բայց՝ եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ
Աստուած լինէի մեր հողագընտին,
Ի՜նչ սուր սըլաքներ պիտի շաղ տայի
Մեր արենարբու թըշնամեաց գընդին.
Նենգ... Թուրք մոլի, Պարսիկ ռիսերիմ,
Դարևոր ոսոխ դու Յոյն կրօնամուլ,
Գիտցիք, որ իմ սուր երկայրի սըրից
Անփասս չէր մընալ ոչ մի ձեր ողդին:

ԱՇՈՏ ԹԱԹՈՒԼԻ ԵՐԳԸ

✓ Ելլզ քեօշքից հրաման տուց դահիճ Սուլթանը,
Մնաք բարև ազնիւ ընկերքը, մօտ է կենքիս վախճանը,
Կարմրագոյն պատանքս, բանտի պատէն մեխել են,
Դիւապաշտպան անգուլթ ֆարմանը գլխիս վերան
կախել են:

Թող չթաղէ ինձ թուրքն, թողնէ հողի երեսին,
Թող կատարէ անդուլթ ֆարման գազանական հան-
դիսին:

Ես պաշտել իմ գաղափար, ուխտել եմ գոհել ազգիս.
Կախադանի—անգուլթ սարսափ, չի փոխիլ իմ սուրբ
վճիռս:

Բայց դուք ազնիւ ընկերներ, ձեր սըտի մէջ գերեզման
Թող թաթուլին հանդերձներով, մահս յիշէք մշտական:
Արև լուսնի կարօտով, երկար տարու տանջանքով,
էրևած, վառած իմ կենանքին, վերջ դրից իմ թշնամին:

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Մութ գիշերին անվախ Ֆիդան,
Ազատօրէն ման կուգայ.
Արի գնանք Մայր-Հայաստան
Անդրանիկը դէմ կուգայ:
Հայերուս մէջ Վասակներու
Թիւը արդէն պակսում է,
Հայ պատանին սուրը ձեռքին
Նոցա մաս-մաս մորթում է:
Անուշաբոյր թարմ ծաղիկներ,
Հայ օրիորդը նւիրեց
Շուն շխերին ջարդել փշրել
Անդրանիկը վճռեց:

Կ Ա Լ Ա Ն Ա Ի Ո Ր Ը

Ա՛խ, բաց արէք իմ մութ բանտի
Փակ դրոշները—տուէք լոյս.
Տուէք ինձ մի սևաբաշ ձի,
Եւ սեպտեայ մատաղ կոյս:
Մատաղ կուսին ջերմ գրկելով,
Առաջ մի լաւ կը պահեմ,
Ազա դէպ դաշտ՝ ձի նստելով,
Ես քամու պէս կը թռչեմ:
Բայց անխ բարձր է իմ պատուհան,
Բանտիս դռան պինդ փականք,
Եւ հեռու է կոյս սևաչեան
Քաշած իւր ձոխ ապարանք:

Եւ բարի ձին կանաչ դաշտում
Մինակ անսանձ արածում,
Ե՛ւ ուրախ է, և՛ թաշկոտում,
Եւ պոչն օդում խաղացնում:
Մենակ ես եմ—տխուր դարդոտ,
Իմ չորս բոլոր—մերկ պատեր.
Լոկ կանթեղն է շուրջս աղօտ
Սփռում մարող, թոյլ շողեր:
Եւ լսում եմ, լսում միայն,
Գիշերային լուռ ժամում
Լուռ պահնորդի քայլերի ձայն
Բանտիս դռան յետևում:

ՆԻԷՐ ՀՆՁԱԿԵԱՆ ՁԻՆԻՈՐՆԵՐԻՆ

Հնչակեան զինուոր ուժգին համարձակ,
Շողացուր միշտ սուր սուլեցուր գնդակ,
Առանց տատանման անվեհեր թափով,
Դիմիր ու դիմիր դէպ վեհ նպատակ:
Նւիրիր կեանքդ քո եղբայրներին,
Չոհ բեր թշնամուդ քո կարուկ սուրին,
Հակառակորդից դու մի երկնչիր,
Դեզ դարման եղիր արնոտ վերքերին:
Չարութեան ոգու թոյնը սպանիչ,
Թող հեռու կենայ սրտիցդ ով կարիչ,
Իբրև գրօշակին հարազատ պաշտպան,
Ատիր միշտ ոխը քէն, որ է քայքայիչ:
Անխարդախ ոգով միշտ յառաջ գնա
Բռնակալ ուժը ջնջելու ջանա,

Յեղափոխութեան թշնամու հանդէպ,
Եղիբ անողորմ անգութ անխնայ:

Կտրիչ Հնչակեան ուժգին համարձակ,
Շողացրու միշտ սուբ սուլեցոր գնդակ,
Յեղափոխութեան սրբազան դաշտում
Միայն այդ լինի քո վեհ նպատակ:

183

ԱԶԳԱՅԻՆ ՕՐՀՆԵՐԳԸ

Տէր՝ կեցն դու զՀայս,
Եւ արն գնոսա պայծառ
 կեցն զՀայս,
Զողորմութիւնդ վերին
Հաճեաց ձօնել նոցին,
Զի նովիւք մարթասցին
 Ապրիլ յաստիս:
Ո՛վ Տէր մեր, Տէր փութն,
Զազգ մեր համայն փրկեն
 ի թշնամեանց.
Կափն զաչս նոցուն,
Հատ գարմատոյն զբուն
Եւ զազգ մեր պարտասուն:
 Արա հօր:
Ի քո իջեալ տեղի
Զաթոնն Հայրապետի
 Մեր հաստատեն,
Զերկարութիւն կենաց
Հօր մեր Աստուած-ազգեաց
Շնորհեն Պետին մեր հարց,
 Որ զմեզ հովուէ:

184

Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր Ս

Ընկերներս վաղ են մեռել,
Ազիզ սրտերն հող են դառել,
Զոր ծառի պէս ես եմ կեցել,
Ընկերներս հող են դառել:
Անգին մէքս ան մէջըք կոր,
Անկուշտ հողին աչքն է քցեր,
Ազիզ մօրս կեանքն է հատեր,
Զոր ծառի պէս ինչ եմ կեցեր:
Ծառս ծաղկաց անբեր մնաց,
Ծիւլ ու ճուղքս գարնան չորցան,
Դարդի որդն էլ սիրտս է մաշեր,
Զոր ծառի պէս ինչ եմ կեցեր:
Մի վազի էյ մաշած սիրտ,
Աշնան քամին հիմա կուզայ,
Ծառդ արմատով կաննի կերթայ,
Աշնան քամին հիմա կուզայ:

185

ՆՆՋԻԱ ՈՐԴԻՍ

Ննջեան, որդիս անուշ քնով
Օրօր կասեմ ու նանի,
Քնոյ հրեշտակ իւր թևերով
Քո երեսին հով անի:
Ննջեան ննջեան անուշ զաւակ,
Շուտ մեծացիր ու մարդ դառ,
Հայրենիքիդ լեր պիտանի,
Նորա արեան վրէժն առ:

Գիտես արդեօք ո՞վ էր պապդ
 Եւ ինչ գործեր նա արաւ,
 Նա Վարդանն էր որ իւր գործով
 Հայրենիքին փառք բերաւ:
 Քո անունն էլ նոյնպէս Վարդան
 Քաջ Վարդանին նմանիր,
 Նորա տւած օրինակով,
 Հայրենիքիդ ծառայիր:
 Գիտացիր որ ամենայն մարդ
 Պարտական է իւր սոգգին,
 Սիրել օգնել թէ որ պէտք է,
 Հայրենիքին զոհ լինել:
 Դէ՛հ մեծացիր ու քաջացիր
 Ազգիդ վրայ մտածիր,
 Ձեռքէդ եկած ամէն բարիք
 Նորա համար մի խնայիր...

ՀԱՅԴՈՒԿՆԵՐ ՎԱՆԱՅ ԾՈՎԻ ՎՐԱՅ

Ուշ գիշերին ծոփն է խաղաղ
 Զրբեր վճիտ ու յստակ,
 Զինչ է երկինք միապաղաղ
 Աստեղազարդ, կապուտակ:
 Պարզ հորիզոն մէկ էլ յանկարծ
 Սև ամպերով մռայլեց,
 Քամի բրդաւ, քամի անտանձ,
 Եւ ծովակն այլայլեց:
 Կուրծքն ուռած ու փրփրուն.
 Ալիքներն ահագին,

Սուգ ու հառաչ, զոռ ու գոչիւն
 Թուան ծոցից ծովակին:
 —Սիրուն ծովակ, ասա դու մեզ
 Էլ ինչ նորից յողեցիր,
 Այն ինչ բոթ էր, որ բերեց քեզ
 Քամին մոլար, անձանձիր:
 Արդեօք, ողբ էր թէ հառաչանք
 Երգեց նա քո ահանջին,
 Կոյսի մրմռենջ, մօր հեծեծանք,
 Թէ՛ ճիչ անմեղ մանկիկին:
 Արիւնապատ մեր ձորերում
 Հիւսել էր իր մեղեղին,
 Թէ՛ աւերակ մեր գիւղերում
 Կազմել երգը ցաւազին:
 Ա՛խ. այդ ցաւոտ, սև երգերով
 Մեզ քուն ասին մեր մայրեր,
 Ու սարսափի զրոյցներով
 Խլացրին մեր ճիչեր:
 Ու այնուհետ շատ տարիներ
 Նոյն երգերը տխրագին,
 Սև դարձրին կարմիր օրեր
 Վախով լցրին մեր հոգին:
 Մի անգամ էլ մեր լեռներում
 Մի հողմ փչեց ահաւոր...
 Էլ արտասուք նա չէր երգում
 Ո՛չ ողբ ասում սգաւոր:
 Սև լեռների մռայլ ծոցից
 Խլած հսկայ գոչիւններ
 Սև ժայռերի գոչիւններից
 Նա կազմել էր իր երգեր:

Պղտոր, կարմիր գետը յուզած
Այնտեղ ունէր իւր բաժին,
Մայր բնութիւնն էլ զարհուրած
Միացել էր այդ երգին:

Երբ ժայռերը գոռում էին
Հայր ի՞նչպէս լուռ կենար
Երբ լեռները դողում էին
Մեր սիրտն ի՞նչպէս դիմանար:

Եւ խլեցինք մենք պատեանից
Սրբեր վաղուց մոռացած
Եւ դուրս ընկանք մեր տներից
Իէպ սուրբ վաթան աւերած:

Լճու կաց քամի, մի՛ փչիր, լճու,
Շատ յուզեցիր ծովակին,
Թող շնջայ մեզմիկ զեփիւն,
Թո՛ղ, հանգիստ թող ծովակին:

Լճու կաց ծով, դարբերի լալկան
Է՛լ բաւ է այսքան հառաչներ.
Մենք ուժ ունինք, սուր, հրացան,
Շուտ վերջ կառնենք քո ցաւեր:

Թող միայն մեզ շուտով լողանք,
Թո՛ղ որ հասնենք այն ափին,
Տես, լսում են ճիչ, հառաչանք
Աղերս ու ողբ անմեղին...

Իէ՛հ, ընկերներ, զարնենք թիւր
Հզօր բազկով միասին.
Մօտ է ափը. հէ՛յ եղբայրներ
Ահա հասանք ձեր հաւարին:

ՔՈ ՓԱՓԱԳՈՎ

Քո փափագով վառվում եմ. արի՛, սիրական, սեր-
տեղ ես,
Երկնային ամպերու մէջ նստող ծիածան, ուրտեղ ես.
Ճանապարհդ նայելով աչքերումս լուս չ'մնաց,
Ե՛կ երևոյթ տեսանեմ, ազնիւ սիրական, սերտեղ ես:
Ի՞նչ պատահաւ, անուշիկ, որ դու հեռացար ին-
ձանից,

Քաղցրախօս անուշ լեզու, անուամբ դովական, սեր-
տեղ ես.

Քանի՛ մէկ քանի՛ չարաչար տանջուիմ այլոց ձեռով,
Ո՛վ վեհապանձ անուանի, կեանքիս պահապան սեր-
տեղ ես:

Մեր սիրոյ վայելչական տեղերն ուրիշ մարդիկ
առան,

Ի՞նչ արի՛ ի միասին գնանք դատարան, սերտեղ ես,
Թող միայն ասեն Ջիւան, սիրեկանդ կուգայ,
Թող տատանիմ քո սիրով մինչև յաւիտեան, սեր-
տեղ ես:

ԲՈՂՈՔ ԲԱՂԻԻԾ

Կարգացէք իմ բաղդի նամակի սևը,
Երևում է ինձի օտարի նման.

Սկսեց թառամիլ կեանքիս տերևը,
Ձմռան ժամանակի Յունուարի նման:

Այս պնիրաւ բաղդս ինձի յոյս տալով,
Մնացի մորմոքած, ողբալով, լալով,

Յաւովս տապում եմ աշխարհ ման գալով,
Անհովիւ մոլորուած ոչխարի նման:

Այս անիրաւ բաղդէս հաշիւ չունեցայ,
Երկինքը սլացող արծիւ չունեցայ,
Պանդուխտ աշխարհի մէջ պատիւ չունեցայ
Համարում են ինձի յիմարի նման:

Ո՛հ, անիրաւ բաղդից մի բան չիմացայ,
Մէկ տարիից մինչի երեսունն անցայ
Զարմանք չէ՞, որ այս ցաւերին դիմացայ,
Երկաթիցը ամուր՝ լեռ քարի նման:

Զահրին եմ, աչքիցս ցօղը պակաս չէ,
Էրեցած սրտիցս, բովը պակաս չէ.
Գիշեր ցերէկ գլխիս հովը պակաս չէ,
Անբախտ Արարատեան մեծ սարի նման:

189

ԻՄ ՓԷՐԻՆ

Կէս գիշերին գետի ափին
Ես նստած եմ սիրավառ.
Գետն հոսում է—և հոսանքին
Ես նայում եմ միալար:

—Ո՞վ է խաղաղ մէջ-գիշերին
Քնած գետը վրդովում.
Ալիքները խփում ժայռին,—
Ծերուկ ժայռը լուանում:

—Ո՞վ է աստղոտ, զով գիշերին
Լուսնի շողով զարդարում
Շուշան-կրծքին, սև մաղբրին
Գոհար ցօղեր սրսկում:

—Ո՞վ է չքնաղ բարի-լուսին
Ծաղիկները համբուրում.
Մշուշային փրփուրի մէջ
Արշալոյսին ողջունում:

—Նա հեղ գետի լուս փէրին է,
Յնորքներին սիրելին,
—Նա իմ սրտի դիցունին է,
Վառ երգերին նազելին...

Եւ մինչև լոյս գետի ափին
Ես նստած եմ քարացած.
Գետն հոսում է,—և հոսանքին
Ես նայում եմ շուարած...

190

ԾԱՂԻԿ ԷԻ

Ծաղիկ էի նորաբողբոջ
Սարի լանջում,—երկնի տակ.
Ինձ դիւթում էր առուի խոխոջ,
Ինձ ողջունում արեղակ.

Գիշերները աստղ ու լուսին
Քնից կտրած ու ապուշ՝
Ծաղկիս սիրուց երգում էին
Օրօր անդճրը ու անուշ...

Գառների հետ լուսաղէմին
Եկար սարը, ջան աղջիկ.
Ինձ քաղեցիր, դբիր անգին
Կրծքիդ վրայ գեղեցիկ...

Այնտեղ, այնտեղ ես ապրեցայ
Քու արցունքով բիւրեղիկ:
Բախտը ժպտաց քեզ, սևաչեան,
Ես չորացայ... անխ, աղջիկ...

Ծ Ի Ր Ա Ն Ի

Էս մէկ ծառ եմ ծիրանի,
 Հին արմատ եմ անուանի,
 Պտուղներս քաղցրահամ,
 Բոլոր մարդկանց պիտանի:
 Հին ծառ եմ արևելեան,
 Չունեմ որոշ այգեպան,
 Տունկերս ամեն երկիր,
 Ընկած են բաժան—բաժան:
 Արևելքում ինձ տնկեց,
 Երբոր Աստուած ստեղծեց՝
 Ասաց-աճէ ,բազմացիր—
 Մի այգի էլ ինձ տուեց:
 Ուղարկեց մի այգեպան—
 Հարաւից հսկայ իշխան,
 Այն հսկայի անունով
 Կոչուեցայ ծառ Հայկական:
 Չորս հազար տարուայ ծառ եմ
 Արմատս պինդ՝ կայտառ եմ,
 Թէպէտ ոյժս պակաս է,
 Բայց անունով պայծառ եմ:

ՇՂԱՐՇ ԱՄՊԵՐՆ

Շղարշ—ամպերն երկինքն առան,
 Լուսնակն աղօտ կը շողայ.
 Լսիկ ճահճում հարհանդ—մարմանդ
 Նուրբ եղէգնը կը զողայ:

Արագիլը, մենակ ու լուս,
 Եղէգնի մօտ կը քայլէ,
 Կը մտորէ խոր ու ախուր,—
 Ճահիճն նուազ կը փայլէ:
 Մռայլ—ափին մենակ նստած
 Սիրտս անուշ կը թախծի.
 Ու անուրջում միտքս թաղուած
 Քունն աչերիս կը հանգչի...

ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐԻԾ

Առաւօտուն ելամ, աչքս ընկաւ երեսիդ,
 էլ չը մնաց ինձի վերայ հալ, փարի,
 Տարար խելքս գլխէս, արիւր սարսարի,
 Մարդիկ ժողովիր գլխիս, արիւր դալ, փարի:
 Ասլըդ խաբար առնիմ, ըշկամ տիւն դժր ես,
 Նախշուն շամամայ ես, կարմիր խնձոր ես,
 Էշխիդ ալաւը ինձ էրեց մնձորեց,
 էլ չմնաց ինձ վերայ հալ, փարի:
 Պօքդ որ կտաս՝ իղարէդ մի դարձ,
 Դեօշդ ինձ դեօշակ. թկըդ գլխիս բարձ,
 Ձիլֆերդ ետ արն, մէ երեսդ բնց,
 Տըսնամ ջավահիր ես՝ եօխսա լալ, փարի:
 Սալմաստցի Յարութիւնն եմ, ջիււլէին
 դաստան,
 Օրս էլ անցուցիմ քիւլլի քիւրդաստան,
 Իմ ու քոնը մնաց վերջին դատաստան,
 Մինչ Քրիստոսն իկայ ունէյիկալ, փարի:

ՅԼԻ ԵՍՐԻՍ ԵՄ ԳՈՎՈՒՄ

Սիրուններ, միք նեղանայ
Որ ես իմ հարին հմ գովում,
Դուք իմ դարդըս չէք իմանայ
էնդուր նրան հմ գովում:

Թէկուզ լինէք աղանեակ
Թեխիներդ լայն բաց արած.
Ճախրելով վեր բարձրանաք
էլի նրան հմ գովում:

Թէկուզ լինէք սիրամարդ
Ձեր գեղեցիկ փետուրներով,
Կամ անուշիկ երգող սոխակ
էլի հարիս հմ գովում:

Մագերդ ոսկէթել է
Ունքերդ նորածին լուսին,
Աչքերդ փայլուն աստղեր,
էլի հարիս հմ գովում:

Որբան կուզէք զարդարւէք
Ալ ու եշիլ գոհարներով,
Եարս սև՝ դուք ալ հագէք
էլի հարիս հմ գովում:

Ամէն մէկդ մէկ մէկ փերի
Իմ առաջս ման էք գալի,
Բայց ինձի չէք գրաւի
էլի հարիս հմ գովում:



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Ծ Ա Մ Թ Ե Լ

— Իմ գլխու ֆութէն կիտամ
Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծովէն.

— Իմ գլխու չամբար կիտամ,
Դէ խանա ծամթելն ի ծովէն,

— Լողվորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

Եար ունի, եար ունի,

Եարսի եօթ ախպէր ունի,

Եար ունի, եար ունի,

Եօթ լէ գացած բանելու.

Եար ունի, եար ունի,

Նախրագնէն ուսի ծառ.

Եար ունի, եար ունի,

Խնձոր թալեմ արի տար.

Եար ունի, եար ունի,

Խնձորի կէս կծած էր.

Եար ունի, եար ունի,

Չորս բոլորն արծըթած էր.

Եար ունի, եար ունի,

Աղբէրս ուզեց չը տւի.

Եար ունի, եար ունի,

Անուշ հարի խրկած էր.

ՀՕՅ ՆԱՉԱՆ ԻՄ

Հօյ, Նազան իմ նազան իմ,
Ջան, Նազան իմ, Նազան իմ.

Նազան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար,
Նազան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար:

Գարնան սիրուն ծաղիկ ես,
Հօյ, Նազան իմ, Նազան իմ,
Ինձ հաճար աղունիկ ես.

Ջան, Նազան իմ, Նազան իմ.
Գլխիս վրով պլախտ տուր,
Հօյ, Նազան իմ, Նազան իմ.
Նախշուն-թև թիթեռնիկ ես:

Ջան, Նազան իմ, Նազան իմ:
Ենթ ջան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար.
Ենթ ջան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար:

Ճամբայ տըւէք՝ առաջ գամ,
Սիրած եարիս բարև տամ.
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Թող տեսնի աշխարհ ալամ:
Մարեր, ձորեր, յետ կացէք,
Իմ եարի ճամբէն բացէք.

Եար եարի հետ խօսելիս
Ականջ արէք, իմացէք:
Նըշի ծառին նուշ կըլնի,
Վարդի հոտն անուշ կըլնի,
Երանէկ էն աղջկան՝
Սիրած եարին թուշ կըլնի:

ՀՈՎ ԱՐԷՔ ՍՍՐԵՐ

Հով արէք, սարեր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք:—
Սարերը հով չեն անոււմ.

Իմ դարդին դարման անոււմ:
Ամպեր, ամպեր, մի քիչ գով արէք,
Վարար անձրև թափէք, ծով արէք
Գէշ մարդու օր-արևը
Սև հողի տակով արէք:

Հով արէք, ամպեր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք:
Ամպերը հով չեն անոււմ,
Իմ դարդին դարման անոււմ:

Սարեր, ձորեր դաշտեր ու ջրեր,
Մարմանդ-մարմանդ վազող աղբիւրներ,
Մի վեր կացէք, իմացէք,
Տեսէք իմ սըրտի ցաւեր:

Հով արէք, սարեր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք:—
Սարերը հով չեն անոււմ:
Իմ դարդին դարման անոււմ:

ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՒՇ

Լուսնակն անուշ, հոփն անուշ,

Վայ, լէ, լէ, լէ, լէ,

Վայ, լօ, լօ, լօ, լօ.

Շինականի քունն անուշ:

Երնեկ էն օրեր,

Որ կեննենք սարեր:

Ծագեց լուսնակ երկընուց.

Հովըւի փողն էր անուշ:

Հօտաղն եզներ կարածայ,

Մաճկալ պառկեր՝ քունն անուշ:

Ջրղղղուն քամին կը փռչէ

Ծովային հոփն էր անուշ:

Դաշտեր, ձորեր մընջեր են,

Ջրրեր գըլգըան՝ ձէնն անուշ:

Հաւքեր թառան իրենց բուն,

Բըլբուլի տաղն էր անուշ:

Անմահական հոտ բուրէր,

Քաֆուր վարդի հոտն անուշ:

ԾԱՄԵՐԴ, ԾԱՄԵՐԴ

Ծառի վերայ բացուել է կարմիր վարդը,
Քեզի դուրպան ես կը տանեմ քու գարդը.

Ծամերդ, ծամերդ.

Շեկոյ ջան մագերդ,

Սիրունիկ ունքերդ:

Ջօր ու գիշեր կքաշեմ քու կարօտդ
Չմեռնէի քիչ մնայի քու ձօտդ.

Ծամերդ, ծամերդ...

Լալէն աչքերիս մէջն է ցաւն ընկել
Քո սիրովդ ես շատ դոններ եմ ընկել:

Ծամերդ, ծամերդ...

Թէկուզ հոգիս էլ որ յեխի բերնիցս
Քո անունդ դուրս չեմ հանի մտքիցս:

Ծամերդ, ծամերդ...

Քանի անգամ ձեր դոններէն անցել եմ,
Ձեռքս դռան վրայ դրած լացել եմ.

Ծամերդ, ծամերդ...

ԷՍ ԳԻՇԵՐ...

Էս գիշեր, լուսնակ գիշեր,

Վայ, լէ, լէ, լէ, լէ, լէ,

լէ, լէ, լէ, լէ, լէ.

Ձիւնն եկեր, գետին նախշեր,

Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանալ.

Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ.

Աչքըդ դէմ արա՛ պաշեմ,

Վայ, լէ, լէ, լէ, լէ, լէ,

լէ, լէ, լէ, լէ, լէ,

Կեռ ունքեր, կարմիր թըշեր:

Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանալ.

Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ:

Ա՛յ գիշեր, գարձիբ տարի,

Հացըս թող լինի գարի.

Մենակ եարբս ինձ համար
Սըրտով խօսքը կատարի:
Ա՛ղջի, բու չարը տանեմ,
Քու սիրուդ ինձ կը սպանեմ.
Դու իմ խօսքին ահանջ դիր,
Ես մօրըդ հաւան կանեմ:

201

ՀԱՒԱՐ ԶՈՒԼՕ

Հաւանք Զուլօ, մադանթ Զուլօ,
Քեզի տեսայ, վանայ, Զուլօ
Բացուիր, բացուիր, բացուիր,
Բացուիր, իմ վարդ Զուլօ:

Ես Ալեքն եմ Մաստարեցի,
Սիրուն, արի՛, մեր տուն կեցի,
Դէմ աղօթրան եկեղեցի.

Հաւանք Զուլօ, մադանթ Զուլօ,
Բացուիր, բացուիր, բացուիր,
Բացուիր, իմ վարդ Զուլօ:

Արեն ելաւ կամար կամար:
Զուլօն կապեց ոսկէ քամար,
Ես կը մեռնիմ քեզի համար:
Արեն ընկաւ ամուր բերդին,
Քո սէրն ընկաւ մէջ իմ լերդին,
Ես քեզ սիրեմ, թող զիս քերթին:
Դու դաշտ կուգաս հուլա հուլա,
Կու նըմանիս բամբկի քուլա,
Աչքըս տեսաւ, սիրտըս կուլայ:
Մեր ջուխտ գութան դաշտ կուբանի,

Զուլօ խաթուն հաց կու տանի,
Աչքով, ունքով մարդ կու սպանի:
Հեկէլ-վեկէլ, մըսրու գոմէշ,
Իմ ձեռ թալեմ Քեալաշու փէշ
Զուլօն եղնի ինձի փեշքէշ:

202

ՍՈՆԱ ԵԱՐ

Սոնա եանք, Սոնա եանք,
Սոնա սիրուն, Սոնա եանք:

Վարդավառը գալիս ա,
Սոնա եանք, Սոնա եանք,
Ծաղիկը ցընծալիս ա.
Սոնա սիրուն, Սոնա եանք.

Ա՛յ գիւլում կանչող աղջիկ,
Սոնա եանք, Սոնա եանք,

Զէնըդ ծըլվըլալիս ա:
Սոնա սիրուն, Սոնա եանք:

Կանաչ տեղը՝ բաղում ես,
Պարի միջին խաղում ես.

Կարաւի պէս սորալով,
Տըզաներին դաղում ես:

Կարմիր գինին թասումը,
Ես եմ քո հաւասումը.

Ե՛րբ կը տաքնան աղջկերք—
Վարդավառի պասումը:

—Սիրուն աղջիկ, նազ ունիս,
Շահ-զազայի սազ ունիս.

Հողեմ շահ-զազի գըլուխ,
Դու իմ հոգում հազ ունիս:

ՇՈՂԵՐ ՁԱՆ

Ամպել ա, ձուն չի գալի,
 Շողեր ջան,
 Սարիցը տուն չի գալի.
 Շողեր ջան.
 Դու շորորն, դուն օրօրն,
 Շողեր ջան,
 Ամպի տակին ձուն կերևայ,
 Շողեր ջան.
 Սիրտըս կըրակով լըցուած,
 Շողեր ջան,
 Աչքերիս քուն չի գալի:
 Շողեր ջան.
 Դու շորորն, դուն օրօրն,
 Շողեր ջան:
 Ամպի տակին ձուն կերևայ,
 Շողեր ջան:
 Հուրք ա թափում վերիցը,
 Ես վնասայ քո սէրիցը.
 Վարդավառին ինձ համար
 Ձուն բեր դու սարերիցը:
 Սարի գլխին ձուն եկաւ,
 Շողեր ջան.
 Շէկլիկ հարըս տուն եկաւ,
 Շողեր ջան.
 Ուն կերևայ, ձուն կերևայ,
 Շողեր ջան,
 Բերդի տակին տուն կերևայ,
 Շողեր ջան.

Դեռ մուրազիս չը հասած,
 Շողեր ջան.
 Վըրէս խորունկ քուն եկաւ:
 Շողեր ջան.
 Ուն կերևայ, ձուն կերևայ,
 Շողեր ջան,
 Բերդի տակին տուն կերևայ,
 Շողեր ջան:
 Աշունն եկաւ սարիցը,
 Տերև թափեց ծառիցը.
 Շողոն դարդով լըցուել ա,—
 Հեռացել ա հարիցը:

ԽԸՆԿԻ ԾԱՌԸ

Մեր դըռանը խընկի ծառ,
 Գիւլճւմ ջան,
 Չեր դըռանը խընկի ծառ.
 Գիւլճւմ ջան.
 Խընկենին ա բերել բար,
 Իմ խօրոտիկ, պըզտիկ հար:
 Գիւլճւմ ջան:
 Մեր դըռանը խընկի ծառ,
 Նախշուն բըլբուլ վըրէն թառ.
 Երթար ու գար, շորօր տար,
 Սիրուն հարին օրօր տար:
 Մեր դըռանը խընկի ծառ,
 Մարջան բըլբուլ վըրէն թառ.
 Գընար ու գար, շըւին տար,
 Անուշ հարի թևին տար:

Մեր դըռանը խընկի ծառ,
Ռսկի բըլբուլ վըրէն թառ.
Կարմիր խընձոր անել տար,
Ալուան ծաղիկ տանել տար:

205

ԽԱՆՈՒՄ ԵՒ Ա ԶԱՆ

Ես Աղեկն եմ Չամբըրեցի, մէկ ջիւան
Խանում եւա ջան.

Քըռնին տարան էստուց չուրի Երեան.

Դուն կեցիր բարով,

Ես կերթամ լալով.

Լալով, ողբալով,

Քոչ ու բարխանով,

Սարեր ման դալով:

Լալով, ողբալով,

Քոչ ու բարխանով.

Սարեր ման գալով:

Ձեռ ու ոտըս կապին բերդը դըրեցին,
Չուխայ, շալուար լալով տունը բերեցին:

Օրէր,, գարնան անձուշ օրեր,

Ա՛խ, ձեր էք կորեր.

Օրէր, գարնան անձուշ օրեր:

Բերդիցը դուրս ելայ, Ալագեազ տեսայ,
Արարած աշխարհքը դըրախտի պէս ա.
Ապարան աչքերիս դուժան ա դառել,—
Իմ կեանքն ու արեը համան ա դառել:

Ոչխարն էսդին կարծայ՝ էնդին գառները,
Կանաչել են ծաղիկները, ծառները.

Արի, երթանք քո մանգալած արտերը,

Քեզի տեսայ, նորացան իմ դարդերը:

206

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐԻՑ

Պարտիպում վարդեր բացուած կըսպասեն սոխակին,
Առանց սոխակ թառածած՝ կարօտ են պսակին,
Արդեօք ճվ է, դունն է թակում, ա՛խ, սիրտս կըողայ,
Իմ սիրունիս ձեր է գնում, ա՛խ, սիրտս կըողայ:

Գետակի ալիքները գնում են խայտալով,
Սիրահարի աչքերը նայում արտասուելով.

Արդեօք ճվ է դունն է թակում, ա՛խ սիրտս կըողայ,
Իմ սիրունիս ձեր է գնում, ա՛խ, սիրտս կըողայ:

Թիթեռը՝ ճրագի մօտ շրջում է անդադար,
Մինչ իր վերջը սիրակարօտ չունի նա օր դադար,
Սիրունին տանը նստած՝ սպասում է հարին,
Քնարը ձեռին առած՝ նուագում լալագին:

207

ՄԱՆԱՆԻ ԵՐԳԸ

Արի էյ Մանան արի գնանք մեր տունը,
Գիշեր ու գօր կտրաւ աչքերիս քունը.
Ե՛մը, ե՛մը, Մանան, ջան ե՛մը,
Չանան ջան ե՛մը:

Մանանիս հայրիկը չըլտըր դասապ է,
Ինձի Մանանիս քով էրթալ հասաքէ,
Ե՛մը, ե՛մը, Մանան ջան ե՛մը,
Չանան ջան ե՛մը:

Մանանը վերէն կուգար շալկինը ժախ էր,
Ռսկէթել մազերը թիկունքից կախ էր,
Ե՛մը, ե՛մը, Մանան ջան ե՛մը,
Չանան ջան ե՛մը:

Երկինքը ամպել էր, գիտինքը թաց էր,
Մանանիս ծրծերը կիսէն հետ բաց էր,
Եւր, եւր, Մանան ջան եւր,
Չանան ջան եւր...

Գիշերը դուրս էլայ ինչ անուշ թօն էր,
Կաղնած մայիլ էլայ Մանանս հոն էր,
Եւր, եւր, Մանան ջան եւր,
Չանան ջան եւր:

Գիշերը դուրս էլայ ոտքս բոբիկ էր
Արծաթէ քամարը մէջքիս գօտիկ էր
Եւր, եւր, Մանան ջան եւր,
Չանան ջան եւր...

ՄԱՐՁԱՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Աբարան գնացող եղբայր,
Սիրականիս բարև արն,
Սիրտս այրվում է չարաչար,
Սիրականիս բարև արն:
Արինք մէջերս անսուտ երգում,
Ռւրախ անցնել օրերս տրտում.
Նա ծնուել է Մելիք-քեանդում,
Սիրականիս բարև արն:
Ի՞նչ եմ անում գանձն աշխարհի,
Երբ չեմ բռնում ձեռքն իմ եարի,
Մելքոն քեօխուի հարսին բարի,
Սիրականիս բարև արն:
Սիրելիս հագին ալ ունի,
Ուսին թանկագին շալ ունի,

Սայուին սիրուն ման զալ ունի,
Սիրականիս բարև արն:
Ես էլուում եմ սիրականից,
Չկայ մէկը ինձ կարեկից,
Շիրակեցի Մարջանեանից
Սիրականիս բարև արն:

Հ Ա Բ Ը Բ Բ Ա Ն

Տղայ. Հարբբբան:
Աղջիկ. Չանէ ջան:
Տղայ. Սիրել եմ՝ սերն երեսին,
Անթառամ թերն երեսին.
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Աստըծու կերն երեսին:
Աղջիկ. Հարբբբան:
Տղայ. Չանէ ջան:
Աղջիկ. Սարի թըրթընջուկ թագա,
Մեղր ու շաքար քեզ մագա,
Ինձ պէս նազանի աղջիկ
Քեզ պէս տըղին հնց սագայ:
Տղայ. Պըզտիկ աղջիկ, համ ունիս,
Չորեքդիմաց ծամ ունիս.
Խուսջիկ-մուսջիկ մի անի,
Ինձ առնելու կամ ունիս:
Աղջիկ. Գութանըդ հուլն, հուլն,
Գութանիդ տակը բոլ ա.
Քանի գըթութիւն անես,
Քեզի առնողը տող ա:

- Տղայ. Ձեր տան տակին վար կանեմ,
 Չար ագռաւին քար կանեմ,
 Թող իմ սիրածն ինձի տան,
 Գրժութիւնըս թարկ անեմ:
- Աղջիկ. Ջուրը իր ճամբով կերթայ,
 Ցողածը վարդի թերթ ա.
 Ինձ սիրող կըտրիճ տըղէն
 Հազարի մէջ մի բերդ ա:
- Տղայ. Բուսել ես բաղի միջին,
 Շամամի թաղի միջին.
 Գիշեր ցերեկ միալար,
 Դու ես իմ խաղի միջին:
- Աղջիկ. Աշուղի պէս խնդ ասա,
 Բըլբուլի պէս տնդ ասա.
 Ինչքան որ գովես՝ արժեմ,
 Իմ մօր գովական փեսայ:

210

ԴՈՒՐԻՄ ԲԱՇԸՆԱ ՂՈՒՐՊԱՆ

Էրէւաննան օյ, օյ, օյ եար եարմ օյ, օյ,
 Դուրիմ բաշընա դուրպան, քիրմա շալմ օյ, օյ,
 Էրեան ասի եարս,
 Բաղդադ խուրմասի եարս,
 Շաքի, Շիրուան, Շամախի,
 Թաւրիզ աղասի եարս:
 Դոանս փակ շեմակալ,
 Խնձոր բցեմ արի կալ,
 Քրոջդ եարի հեաը
 Ինձ շինել ես քենակալ:

Աղլուխա լուան, դարկի,
 Ախշի, դու ծաղկին պարկի,
 Հերիք հոգեհան անես,
 Կամ ինձ սիրի կամ թարկի:
 Լուսաղէմին քուն կուգայ,
 Կէս գիշերին տուն կուգայ,
 Էրուած ու վառուած եարըս
 Սրտիցս արուն կուգայ:

211

ՍՐՏՈՎԸ ՍԻՐԵՆ ԵՍ

Սուրբ Կարապետ քո վանքը,
 Վայ լէ լէ լէ լէ լէ
 Վայ լէ լէ լէ լէ լէ
 Վայ սիրելի ջան
 Ղազախի նախշուն թամբը.
 Սրտովը սիրել ես,
 Մոլորը թորկել ես,
 Վայ անուշիկ ջան,
 Արգ անեմ թագաւորին,
 Անցել է հայի կեանքը:
 Սև ամպերը պարզում չի,
 Սիպտակ հայլուխ սազում չի,
 Եօթը տարի ալ հագնեմ,
 Սիրտս սև է, սազում չի:
 Ծիրան եմ՝ ծառի ծերին,
 Կերերամ հեա թերերին,
 Եկան քաղեցին տարան,
 Ծախեցին ախմախներին:

Կարաւ եմ քարամիջում,
 Կը կարդամ ձորամիջում,
 Աստուած, իմ մուրազս տուր,
 Էս գալող շաբթու միջում:
 Դու մի հատ թառլան զուշ ես,
 Մեր բաղում բուսած նուշ ես,
 Աստուած վկայ, սուտ չկայ
 Ինձ համար շատ անուշ ես:
 Անունդ կարդացող ա,
 Աղբէրդ գիր բացող ա,
 Մի գիրը բաց անել տուր,
 Տեսնենք հնց իմացող ա:
 Բուսել ես բաղի միջին,
 Շամամի թաղի միջին,
 Գիշեր ցերեկ միալար,
 Դու ես իմ խաղի միջին:

212

ՏԱՐԱՆ ՏԱՐԱՆ ԶԻՄ ԵԱՐՆ

Խնուս գեղի մէջ տեղը,
 Հրամայեց մեծ ղեխը
 Թորկեց ի լաց ու շիւան,
 Եարսի տարաւ մեծ պեխը:
 Տարան տարան զիմ եարն,
 Տարան զիմ մէկ ու ճարն,
 Հաւար արէք Մարօին,
 Տարան խօրտ Վառօին:
 Իմ եարն անմեղ ճնճղուկ է,
 Եարա սիրտս դեղուկ է,

Մեծ պեխի սուր խանջալից,
 Իմ սիրտ ճեղուկ, ճեղուկ է:
 Եարիս ծամերն էր օսկի,
 Դագմա չըր յիգէ խօսքի,
 Զօն, հն, զօն քաշեց տարաւ,
 Էն մեծ պեխը անհողի:
 Վառօ էր եարիս անուն,
 Խող քաշեցի իմ գլխուն,
 Էն ծուռ թուրը մեծ պեխի,
 Կտրեց թեւեր իմ մէջքի:
 Մացի ողբալով լալով,
 Գլխիս մաղեր փետելով,
 Մեռայ էն օրից դէսը,
 Քարեր քոլերն ընկնելով:

213

ԱՌ ԿՌՈՒՆԿ

Ճանապարհս ընկաւ Տըփխիս,
 Կրակ լցուաւ մէջ իմ սրտիս,
 Բարև արն սիրականիս,
 Երկրորդ խումբ, երրորդ խումբ չորրորդ խումբ
 Կռունկ, որսորդի ձեռքից վիրաւոր կռունկ,
 Որսորդից փախած դու սիրուն կռունկ:
 Լալով գնում եմ ճանապարհ,
 Նա իւր տանն է ես եմ օտար
 Ասն չընտրէ նոր սիրահար: Երկրորդ...
 Մատաղ լինիմ քու երամիդ,
 Անուշ կռուան բերանիդ,
 Ասն տեսայ սիրականիդ: Երկրորդ...

ԱՇԽԷՆԻ ԵՐԳԸ

Թալիշու ճամբէն դուզ ա,
 Եար աման, աման, աման, աման էյ,
 Ո՛ւյ աման, աման էյ, ույ աման.

Անտօն կայներ՝ Աշխէն կուզա.

Խորոտ է Աշխէնը,
 Կոլոտ է Աշխէնը:

Ինձ պէս տըղէն քեզի հետ

Եար աման, աման, աման, աման էյ,
 Ո՛ւյ աման, աման էյ, ույ աման.

Աստուած վըկայ, լաւ կը սազայ:

Խորոտ է Աշխէնը,
 Կոլոտ է Աշխէնը:

Մարգարի դուռը դուզ ա,

Աշխէն կայներ՝ Անտօն կուզայ.

Երկու հարիւրն ի՞նչ անէ,

Իմ հէրը շատ բաշըղ կուզայ:

Գազերի սուր փըշերը.

Հերիք պատուեն իմ փէշերը.

Քանի մընամ ես գերի,

Արի, ինձի տանը էս գիշերը:

ՋԱՆ ՄԱՐԱԼ ՋԱՆ

էս սարէն մէկ քօշ անցաւ,

Քօշը տուաւ մէջ անցաւ,

Սիրտս մէկ կրակ ընկաւ,

Ոչ վառաւ ու ոչ հանգաւ:

Սև փուշին ճիտս եմ քցել,
 Կրակը սիրտս եմ լցել,
 Էսօր հինգ օր է չեմ տեսել,
 Իմ հարը միտս եմ քցել:

Արևն առաւ գերանին,
 Ես մեռնեմ աւետարանին,
 Ջուխտ աղունեկ դուրս ելան,
 Կանանչ խոտը բերանին:

Լ Ո Ր Ի Կ

Գացի արտեր, բըռն'ի լոր,
 Աղջիկ տեսայ հայլի ձոր,
 Նըման էր կարմիր խընձոր:

Լորիկ, գարնան քարեր
 Դու վարդ արիւր, լորիկ:
 Նըման էր կարմիր խընձոր.
 Լորիկ, լորիկ, լորիկ, լորիկ.
 Լորիկ, գարնան քարեր
 Դու վարդ արիւր, լորիկ:

Արև դիպաւ սարերուն,
 Կաքաւ թըռաւ քարերուն,
 Լորիկ կայնե վեր դարուն:

Ջուր կուզայ գոչգոչալէն,
 Գըլխուդ ես գըցե վալէն,
 Լոր, չես հարցնե իմ հալէն:
 Քար մի թալի մեր զըշին,
 Թող գայ նըստի քու թըշին,
 Կըրակ տու դարիւր փըշին:

ՏՈՒՆ ԱՐԻ ՏՈՒՆ ԱՐԻ

Ամպել ա, ձիւն չի գալի,
Մըթնել ա, տուն չի գալի.
Հեռու ճանապարհի ես,
Աչքերիս քուն չի գալի:

Կանչում եմ, կանչում եմ, եմք, արի, եմք,
Մութն ընկաւ, տուն արի, անջիգամ եար:

Էս գիշեր կանցնի դըժուար,
Կերթայ բարակ ու երկար.
Իմըս որ ան ու վախով,
Քոնըդ ինչպէս կանցնի, եմք:
Ձորերս ի վեր հանդեր ա,
Ձուրը տունըս քանդեր ա.
Շուտ արա, յետ դարձիր, եկ.—
Սիրածը տանն անտէր ա:

Գացէք, տեսէք ձրն ա կերել զէծ,
Գացին տեսան զէլն ա կերել զէծ,
Գէլն ըղիծուն, էծն ըղտիուն, տիկ դարևուն,
Հալալ է կրմօ, հալալ է, հալալ է ջամօ, հալալ է,
Էս ի՞նչ քեաֆուր դարու հասանք, հալալ է,
Էս ի՞նչ խըտար կրմօ ստացանք հալալ է,
Իէ գնս կիգամ, զէ գնս կիգամ, շուտ կիգամ,
Կարմիր սուրս հագնիմ իգամ, շուտ կիգամ,

Գացէք տեսէք ձրն ա կերել զգէլ.
Գացին տեսան արջն ա կերել զգէլ,
Արջն զգիլուն, գէլն ըղիծուն, էծն զտկուն,
տիկ դարևուն

Հալալ է կրմօ, հալալ է, հալալ է ջամօ հալալ է,
Էս ի՞նչ քեաֆուր դարու հասանք հալալ է,
Էս ի՞նչ խըտար կրմօ ստացանք հալալ է:
Նազ մի աներ, նազ մի աներ, նազ աղջիկ,
Մինթանովդ թոզ մի հաներ, շան աղջիկ:
—Նազ կու էնեմ կու, նազ կու էնեմ կու,
Նազ կու էնեմ, նազ կու էնեմ, նազ տղայ,
Մինթանովս թոզ կու էնեմ, շան տղայ,
Խօրօտիկ, խօրօտիկ, խօրօտիկ,—մօրօտիկ իմ
եարն է:

Գացէք տեսէք, ձրն ա կերել զարջ,
Գացին տեսան առիւծն ա կերել զարջ.
Առիւծն զարջուն, արջն զգիլուն, գէլն ըղիծուն,
էծն զտկուն, տիկ դարևուն,
Հալալ է կրմօ, հալալ է, հալալ է ջամօ, հալալ է,
Էս ի՞նչ քեաֆուր դարու հասանք, հալալ է,
Էս ի՞նչ խըտար կրմօ ստացանք, հալալ է:
Ծառը ես եմ, բարը դու ես, Աննա ջան.
Մտտով սիրած եարս դու ես, Աննա ջան:
—Ծառը դու չես, դու, ծառը դու չես, դու,
Ծառը դու չես, ծառը դու չես, չար տղայ,
Մտտով սիրած եարս դու չես, շան տղայ:
Խօրօտիկ, խօրօտիկ, խօրօտիկ—մօրօտիկ իմ
եարն է,
Գրիգորն եմ, Գրիգորն եմ, ձեր մայրեցի Գիլ-
գորն եմ:

ԵՕԹՆ ՕՐ ԵՕԹ ԳԻՇԵՐ

Եօթն օր, եօթ գիշեր
Շամամն ի գօախս թոռմըշեր,
Եար մեզիկ դըռնէն չ'եկներ,
Փըշուր մի սիրտ մեզիկ հոփէր:

Վա՛յ, լօ, վա՛յ, լօ, վա՛յ, լօ, վա՛յ, լօ:

Եարսի խոովաւ,
Շամամ թոռոմաւ,
Հովիւ խրոովաւ,
Ոչխար մոլորաւ,
Բերուոր շիւարաւ,
Կըթոց գըլորաւ:

Արի, եւր, արի, խըռով մի կենա,
Աստըւորիս բան ձի, քե չի մընա:

Առնեմ ըզգամբուրէս,
Եկնեմ քու մամու երգիս,
Ձիմ կաքու ձէն լըսես,
Անուշ քընէղի զարթիս:

Բոստան եմ գըրե
Վերե էն դարին.
Աստուած շէն պահէ
էս տարուան տարին.
Շամամ մի չեղաւ,
Ուղարկեմ եարին:

Արի, եւր, արի, խըռով մի կենա,
Աստըւորիս բան ձի, քե չի մընա:

Աղջի էրեցայ քու դարդէն,
Դամ նըստիմ քու հէրանց բաղչէն,

էնքան զարնեմ, էնքան ասեմ,
Չուր հալի միս, թափի իմ ջանէն:

Արթուն, թէ քընած.
Ընկել եմ քու փէշ.
Սոցերըս շատ են,
Մի անիր ինձ գէշ.
Կը մեռնիմ սիրովդ,
Կը տեսնես իմ լէշ:

Կանչեմ եւր, արի,—եարիկ ձէն չի տայ,
Ընկեր քաղցըր քուն. անունս էլ չի տայ:

էսօր քեղ ապով ինձ էնքան են զարկած,
Ձիմ արիւն գըղած բամբկով են բըռնած,
Հում աբըրշումով վէրքերս են կարած,
Նաբաթ շաքարով խոցերս են քաղած:

Վա՛յ, լօ, վա՛յ, լօ, վա՛յ, լօ, վա՛յ, լօ:

Երթամ պըզտի գեղ,
Առնեմ նուկիմ եղ.
Իմ եարի համար
Անեմ ձուածեղ.
Տանեմ հովըւուն,
Ձի չը դընի մեղ:

Արի, եւր, արի, խըռով մի կենա,
Աստըւորիս բան ձի, քե չի մընա:

Ինչ իմ աչք ընկաւ քու կարմիր երեսաց,
էնպէս ինչ վարդ ունան վեր ձի չեն շարժած
Դու արի մէկ պագ առ կարմիր երեսաց,
Թող զարկած եղնին ինձի թամամած:

էրին, էրերին
Ոչխար վեր բերին.

Կըթենք թուխ մաքին,
Լըցենք սուրահին.
Խորոված գինով
Ուղարկենք հարին:

Արի, հար, արի, խըռով մի կենա,
Աստըւորի բան ձի, քե չի մընա:

Տըղայ, դու, մի վախի,
Վաղ ես կերթամ իմ հէրանց բաղչէն,
Դու արի, ես մէկ պագ տամ քեզի,
Ես քո սըղայ սիրտ ինձնէ չեմ թորկի:

Իմ հէրանց իգին
Վարդ հազար թաւուր.
Մէջ էն վարդերուն
Իմ վարդն է քաֆուր.
Շահ բըլբուն իջաւ
Վեր իմ վարդին հիւր:

Արի, հար, արի, խըռով մի կենա,
Սուտ, փուչ սասըւոր ձի, քե չի մընա:

220

ԱՐԻ ՍԻՐՈՒՆ ԳՆԱ ՍԻՐՈՒՆ

Մեր տան հտե քառասուն կարաս,
Քառասուն կարսի գինին էր խաս,
Օսկէ գիւզիւմ արծըթէ թաս,
Ամեն թասին պագիկ մի տաս:

Արի սիրուն, գնա սիրուն,
Հաղար էրանեկ քո տիրուն:

Մեր տուն ձեր տուն մօտիկ—մօտիկ,
Դու կապել ես կարմիր գօտիկ,

էրթանք քաղենք կանանչ խոտիկ,
Տենանք վիբ հարն է խօրօտիկ:
Քամին էկաւ էրան—էրան,
Գնաց հասաւ Մշու բերան,
Մշու հաւեր թեւաւորան,
Քեալաշի տուն սևաւորան,

221

ԾԻՐԱՆԻ ԾԱՍԻ

Ծիրանի ծառ, բար մի տայ,
Վայ.

Ճըղները իրար մի տայ,
Վայ.

Ամեն մէջըդ ման գալիս
Ցաւերըս իրար մի տայ:

Հն, տըէք, յետ տըէք, սնրեր, հոփն ընկաւ,
Սըրտիս խընդում ծոփն ընկաւ.
Գընայ, էլ յետ չըգայ էս տարուայ տարին,—
Սև դարդն իմ վըզոփն ընկաւ:

Հոփ, հոփ, հոփն ընկաւ,—
Սըրտիս խընդում ծոփն ընկաւ:

Մեռայ բաղում բանելէն,
Մի կողմէն ջուր անելէն.
Ծառերին թուփ չը մընաց,
Դարդիս դարման տանելէն:
Սև ամպը զըցել ա հով,
Մութը տըւել ա իմ բով.
Տեսնում էք՝ ինձ պատել ա
էս անիրաւ արիւն ծով:

Նըստած տեղիս քար չունիմ,
 էրուած սըրտիս ճար չունիմ.
 Այ անօրէն, փուչ աշխարհ,—
 Բաղ ունիմ ու բար չունիմ:

222

ԹՈՒԽ ՓՈՒՇՈՎ ԱՂՋԻԿ

Շարաֆով, թուխ փուշով աղջիկ, բոլոր յերես,
 Չեմ գինայ յՊԼատի գիգաս, դուն մոլորել ես:

Ախչի, քու գլուխն է դրած կամիր ջըղայ,
 Հէրիք է, հետ վզնոցիդ մալու մը խանդայ,
 Ես ու դու արի եար էզնինք խօրօտ Սավգուլ,
 Բալալու աղջիկ իս դու, ես էլ խեղճ տղայ:
 Իմ ու քու նանի մէջ թող Աստուած դատէ,
 Սավգուլ ջան, մէ իրիշկելդ ձիկ շատ ու շատ է,
 Մօտկցի, մի վախենայ, քու անուշ եարն իմ,
 Փաթաթուի, իմ վիզ գրկէ, մի սսի եատ է:
 Քու խերանց դուռ ու յերդիս մենձ պար ու խաղ է,
 Էդ սիվտակ դոշիդ խամար, իմ սիրտն ի դաղ է,
 Ձիմ սէֆիլ—բալալու բաշ խօրօտիկ Սավգուլ,
 Չեմ գինայ յօրթ ըդման սիրտդ վրէս պաղ է:
 Պատվական ու խօրօտիկ բձեր ես խաքե,
 Լուսվընէ չուր իրիկուն ձըր դուռն իմ չոքե,
 Քու սէրսուփ խաթեր խամար յըմէն լուս ու մութ
 Վըր ծնկան ես չօքէչօք խօրդ ձեռն իմ պաքե:
 Աշխըրի դարդ—խասաւաթ քըզի է տուած,
 Օրթէ զիս գետին կու տփիս, սիս անաստուած,
 Քու սէրն էփեց ու վառեց, շիվար մացի,
 Չենք գինէ թը յիսնէ յէր իր խուոված:

Քու ձեռնէն բրորաւ սիրտս, էղայ դարբէդար,
 Քանդեցիր զիմ տուն ու տեղ, քցեցիր չոր քար,
 Հարի եր ֆնամ բրինդար, չէ քո Խլղաթն իմ,
 Մեղք արի, խանչէ քու քով, իմ բէֆալու եար:

Կող ու կուշտս կպաւ գեանէն ճամբախըդ իշելով,
 Մեռայ, ես շատ տլըպայ քու փէշ քաշելով,
 Ձիս մոռացար աղքըտի պէս դունէ դուռ քըցիր,
 Թորկեցիր շիվար ու խեղճ, սիս—վախ քաշելով:

Մընիմ քու սըռսուռ ծամին ու բարակ բաժին,
 Քու ծամերն ու թուխ աչքեր աշխարք կու աժին,
 Իլլահի քու թելու բօյն ու կեռ-կեռ ունքեր...
 Ի՞նչ կեղնի էդ քու մասներ հեղմ գլօխս մաժին:

223

ՀՕԴԱԼԼՕ ՋԱՆ

Հօ՛դալլօ, ջան, հօ՛դալլօ, ջան, հօդալլօ,
 Աղջիկ սիրուն, աղջիկ անուշ, դալալլօ:

Կայնել ես աղբերակին,

Հօդալլօ, ջան, հօդալլօ.

Շող կը տաս արեգակին.

Դալալլօ, ջան, դալալլօ.

Քո շող երեսին մեռնեմ,

Հօդալլօ, ջան, հօդալլօ.

Ունքերիդ աղեղնակին:

Դալալլօ, ջան, դալալլօ:

Մաղբըրդ ոլորել ա,

Աչքիբըրդ բոլորել ա.

Երկ՛ օր ա, չեմ տեսել,

Իմ սիրտը մոլորել ա:

Փող ես ուզում, քեզ փող տամ,
 Ոսկի տամ. ո՛չ թէ հող տամ.
 Թէ դըրան էլ հաւան չես,
 Հողիս հանեմ, քեզ փոխ տամ.

224

ԽՂՃՈՒԿԻ ԼԱՅԸ

Ի՛մալ պըտի էնինք, ես լէ չեմ գինայ,
 Որ չը թորկինք քոչինք մըր տուն ու վաթան,
 Չունինք խաց ու խալաւ, խեղճ ինք չուր մըկայ,
 Հիմկուց յետև տեսնանք, փոխինք, զմեր բան:

Իդա խարիպութեն աւիրեց զմըր տուն,
 Կը թորկինք հեռենանք ճըժերսի սիրուն,
 Լալով մընք հաց կուտինք չուրի յիրիկուն,
 Էլ էք միտք կու բերինք մըր խեղճ Մայաստան:

Սէֆիլցեր՝ կը դողանք քրտերու առաջ,
 Տաճկին գանգատ կէնինք. չի էնէ սկանջ,
 Ծանտրցուցեր է մըր վրէն խարջ-խարաջ,
 Խղճեցրեր պարտքնուէր, քեաֆիր խարկախան:

Թորկած խորօտ հանգիրս, թորկած սիրելիս,
 Թորկած Ձամալ եզս, թորկած Մարալիս,
 Եա Ստամբուլ կերթանք, եա թէ չէ Թիֆլիս,
 Էնտեսխ աչքներս առած ինք սև գերեզման:

225

ՈՒՂՈՐ ՄՈՒՂՈՐ ՄՆԱՅԻ

Մի գեղեցիկ պատահեցաւ ինձ յանկարծ,
 Չը հասկացայ ի՛նչ ցեղից էր նա ծնուած.

Անտուր մորթեց, առանց կրակ խորովեց,
 Խաղաղ սիրտս ու հոգիս արաւ խոցալից:

Ուր—մուր ֆնացի,
 Արիւն արցունք թափեցի,
 Այնպէս հրեշտակ տեսայ,
 Բայց, աւանդ, շուտ գրկուեցի:

Սուր սուր նետեր սիրտս խփեց ու թռաւ,
 Հէնց այն օրից արեգակս խաւարեց,
 Էլ ուր փնտռեմ, թրտեղ գանեմ ես նորան,
 Որ իւր ձեռքով նա ինձ դնէ գերեզման:

Ուր մուր...

Չը գիտեմ թէ նա օդի մէջ սլացաւ,
 Թէ մի հրեշտակ էր երկինք վերացաւ,
 Գուցէ երազիս մէջ ես տեսայ նորան,
 Որ խոստացաւ լինել ինձ սուրբ սիրական:

Ուր մուր...

226

ԵԼԷՔ ՄԱՆՉԵՐ

Ելէք մանչեր, ելէք քօչերը բառնանք,
 Էրթանք վակղալ ու Դիլիջան ետ դառնանք:

Թաւէն ծակ է, եղ չկայ,
 Փէսէն եկաւ տեղ չկայ,
 Փէսին շատ երես միք տայ,
 Փէսին էյթիպար չկայ:

Ցնծան արաղի թասին,
 Բոքլիկ կուգայ հաւասին,
 Գլխին զարկէք քօռանայ,
 Ձեռքից առէք արասին:

Սիրտդ պինդ ա քարիցը,
 Հարցրել եմ սարիցը,
 Հոգիս էկել կպել ա
 Էդ բու սև ջիգեարիցը:
 Ետ ես գալիս կալիցը,
 Պաչեմ ճակատիդ խալիցը,
 Ի՞նչ կըլինի, որ մի տեսնես,—
 Հասկանաս իմ հալիցը:
 Կայնել ես կանաչ տափին,
 Առուի դրաղին—ափին,
 Իշալլա մեր չարկամի
 Թևերը պըտի թափին:

227

ԻՄ ՉԻՆՍԻ ԵԱՐԸ

Արև թըռվըռով ելաւ,
 Իմ չինարի եարը,
 Մեր բանը կըռուով ելաւ.
 Դարդիման եարը.
 Թըշնամու որդին մեռնի,
 Իմ չինարի եարը,
 Իրա չար սըրտով ելաւ:
 Դարդիման եարը:
 Իմ չինարի եարը,
 Իմ չինարի եարը.
 Իմ չինարի եարը:

Ճըրագը վառայ, վառայ,
 Հօր հետ վատամարդ դառայ,
 Մէր ու աղպէր թող տըլի,
 Ես իմ սիրածին առայ:

Քարափի ծէրին կանչի,
 Թո՛ղ թըշնամին ամանչի,
 Արևիդ մեռնեմ, ետր ջան,
 Չինարի պէս կանանչի:

228

ՎԱՐԴ ԿՈՇԻԿՍ

Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
 Վարդից գեղեցիկ մաշիկս:

—Մեր տանը մէջը քնող տղայ,
 Կարմիր խնձոր ծախող տղայ,
 Վարդ կոշիկս գտնող տղայ,
 Տղայ, դրկէ վարդ կոշիկս:

—Չեր տան մէջը քնել չեմ ես,
 Կարմիր խնձոր ծախել չեմ ես,
 Վարդ կոշիկդ գտել չեմ ես,
 Իմ մօտս չէ վարդ կոշիկդ:

—Լաւ օրս եղաւ ան ու վախ,
 Կորցուցի կոշիկս, աւանդ,
 Հայի տղայ, հոգուդ մատանդ,
 Տղայ, դրկէ վարդ կոշիկս:

—Որ մօտս չէ սըրտից ճարեմ,
 Ագնիւ աղջիկ, հոգիդ սիրեմ,
 Եթէ գտնեմ յետ կուլարկեմ,
 Իմ մօտս չէ վարդ կոշիկդ:

—Մի մնար ինձի պարտական,
 Աղջիկ եմ, տաս-չորս տարեկան,
 Ես կը լինիմ քեզ սիրական,
 Տղայ, դրկէ վարդ կոշիկս:

—Ինչո՞ւ մնամ քեզ պարտական,
Կամիս՝ տամ հազար դահեկան,
Եթէ կըլնես ինձ սիրական՝
Ես կ'ճարեմ վարդ կօշիկդ:

ԻՆՉԻՆՍՐ ԵԱՐ ԶԱՆ

Ինչինար եար ջան,	էս եանը փուշտա,
Փունջինար եար ջան,	էն եանը փուշտա,
Ո՞վ էր բան ասե,	Ախպէրս եկաւ
Սիրական եար ջան:	Ոտներին չուստա:
էս եանը քամի	Ինչինար եար ջան
էն եանը քամի	Փունջինար եար ջան
Արագի վրէն	Թէ կառնես մարջան,
Բանըմա գեամի:	Քե կասեմ եար ջան:
էս եանը նուշ ա	էս եանը պատ ա,
էն եանը նուշ ա	էն եանը պատ ա,
Կողքեցին էկաւ	Քաղքցուն կառնեմ,
Կարմրաթուշ ա:	Որ փողը շատ ա:
էս եանը մուխ ա,	էս եանը բուլքի,
էն եանը մուխ ա,	էն եանը բուլքի,
Աղպէրս էկաւ,	Քաղքցին էկաւ
Հագինը չուխա:	Հագինը չուլքի:
Արագի վրէն	էս եանը պոպոք,
Բանըմա լողկա,	էն եանը պոպոք,
Սիրածս եկաւ	Քաղքցին էկաւ,
Գլխին շլապկա:	Հագինը սապօք:

ԶԱՆ-ԳԻՐԻԼՈՒՄՆԵՐ

Ծառիս տակը մանիշակ Ինձ պէս նազանի աղջիկ
 Զան գիւլում, ջան, ջան, Քեզ պէս տղին ճնց սազայ:
 Իմ եարը քանց քեզ շիշակ, Այ տղայ եախէդ մովա
 Զան ծաղիկ, ջան, ջան, Սուրբ Կարապետ քեզ գովա
 Ութ թումանից անցկենամ Ես քեզ խիստ շատեմ սիրում
 Զան գիւլում, ջան, ջան, Քո սիրտ ինձ անէն հով ա:
 Քեզ կանեմ եարիս մշակ, Նախրատափին խնկի ծառ
 Զան ծաղիկ, ջան ջան: Խնձոր քցեմ՝ արի տանր,
 Անձրե եկաւ շաղալէն Ուրբաթ շաբաթ քեզ օձ լաթ
 Ուռի տերեւ դողալէն Լոյս կիրակի արի տանր:
 Հրէս եկաւ իմ աղբէր Մեր տան առաջին դարան
 Այ ձին տակին խաղալէն: Աղջկերք եկան ետ դառան
 Կանգնել ես ախա բախա Կուռս տարայ որ բունեմ
 Կաշակիդ տուտը կախա, Շարած մարգրիտ դառան:
 Սե աղայ, սպիտակ աղջիկ, Աղջիկ աղջիկ ալ աղջիկ,
 Բունել են իրար եախա: Աչքերդ չալ չալ աղջիկ,
 Արեն ընկաւ մեր պատին Դու մեր տան հարս պտես,
 Արքայութիւն իմ տատին, Իմ քիրը քեզ տալ աղջիկ:
 Հոգիդ գատուի, այ տատի, Ի՜մ աղբէր սարուճն ա
 Ինձ խի՞ տիր կոնատին: Եւին գօտկայ ծալուճն ա
 Սարէն կը գայ ձիաւոր, Աղբէր ջան, շիտ ածն
 Մեր տունը չարգախաւոր, Քիրդ լուսայ քարուճն ա:
 Հրէս եկաւ իմ աղբէր Կաթի սերը քաշել եմ,
 Երեք օրւան թազաւոր: Դրել եմ հովին սառի,
 Սարի թրթնջուկ թազա, Ալ գոգնոցս փուեր եմ,
 Զաւղ ու միխակ քեզ մազա Արի՛ թառւան թըռ արի:

Աղբէր, հանաքիդմեռնիմ
Ոսկէ դանակիդ մեռնիմ,
Ճամբայ էրթող շէկ աղբէր
Դուքանբազարիդմեռնիմ:

Ա՛յ տղայ, բաղի միջին
Ոսաներդ շաղի միջին,
Կանչի կանչելուդ մեռնեմ
Ես եմ քո խաղի միջին:

Մեր տան ետեը մառան
Տղերքն եկան յետ դառան,
Զեռս տարայ թէ բռնեմ,
Դիփ լալ մարջան դառան:

Ես աղջիկ եմ ալ կուգեմ,
Բոխչէս ծալէծալ կուգեմ,
Երբոր եարի տուն երթամ
Գօսիկս քիրմաշակուգեմ:

Ամպել ա ձիւն չի գալի,
Մթնեւ ա տուն չի գալի,
Ես մի հեռու եար ունիմ,
Մի մատ գիրը չի գալի:

Ամպել ա ձուն չի գալի,
Մթնեւ ա տուն չի գալի,
Էս անտէր բարձի վրայ
Առանց եար քուն չի գալի:

Ամբխանանց կտերը
Ծլվլուս են ծտերը,
Ազափ տղի դեղն ինչ ա,
Կոկոմ, շամամ ծծերը:

Ա՛յ ախչի ասս, մասս,
Ծամբերիդ ծէրը խաս ա,

Թուշդ դէսն արա պաչեմ,
Վազի գնա մօրդ ասա:

Ա՛յ էս կուռը, էն կուռը,
Քաղել եմ Գեանջայնուռը,
Ես էդ ծուռը չեմ առնի,
Ինձ կզցեմ սև ջուրը:

Ա՛յ տղայ խանի որդի
Հագինդ լիսամի մորթի,
Ինձնէն դայրի եար բռնես,
Լէգդին քեզ տանի մորթի:

Ա՛յ տղայ ուր ես մուրես
Ես ծարաւ եմ՝ դու ջուր ես,
Մահարլամ թաուլամ շորեր
Համբարձման գիրչեր սլրես:

Ա՛յ օրօն, օրօն ծաղիկ,
Կարմիր ու տօրօն ծաղիկ,
Ալվալայ խալիս եմ կիտել,
Ես գամ քեզ, օրօն ծաղիկ:

Անձրև ա եկել նամ ա,
Ծոցիդ արծաթէ ջամ ա,
Գնա քու նանիդ ասա,
Նորա էկել, դեռ խամ ա:

Արև թուաւ հոգն ինգաւ,
Նա մէր մտաւ, ծոցն ինկաւ
Աղջի, մտիկ քու գլխիդ,
Ալ բաղդադիդ մոցն ինկաւ

Արխալուզս կարել եմ,
Ոսկէ կոճակ շարել եմ,
Նանի ջան դարդ մի աներ
Ես իմ սիրածը ճարել եմ:

Արտումս ցանել եմ գարի,
Ասուած տայնանիս բարի
Ինձ տվեց ջահիլ եարի.

Դարչին մեխակ քահրբարի
Բաղի մէջը վարդ կըլի,
Բաղի շունը սարթ կըլի
Շան աղջիկ ուսուլ խօսէ

Տալլա տեղ է մարդ կըլի:
Բաղի միջին վարդ ունիմ
Աղբօրս հետ դարթ ունիմ
Արի, արի, ջան աղպէր,

Տես քանի սև դարդ ունիմ:
Բաղումս կայ բաղւանչի
Շիւ կայ, շիւ նման չի,
Թոփուն դառան դուս թռան

Մինն էլ եարիս նման չի:
Բարդի ծառը բարձր ա,
Սիրած եարը քաղցր ա,
Գնամ մօրս հարցնեմ,

Թէ որ չտայ՝ փախցրա:
Գիւլում կասեմ կշարեմ,
Տուրակ կածեմ կշարեմ:
Երկրէ երկիր ման կգամ,

Քանց քեզի լաւ կճարեմ:
Գութանի էրկէն ծէրը,
Սիրել է սիրնի տէրը,
Սիրունի տէրն ինչ անէ,

Արնատէր են հէր մէրը:
Գութանի թեւ դու ես,
Անմեղ ես, խաբար չունիս,

Եարդդ առան գնացին,
Միթէ դու նամուս չունիս:
Կագնել ես բարձր հովին
Փոփումս դօշիդ մովին,

Էրնէկ ծոցիդ քնողին,
Շամամ ծծերդ բռնողին:
Եարի կշտին եար պտի,
Կանաչ խիար աղ պտի

Աման, նանի, մի անի,
Եարս ինձ բարբար պտի:
Ես գնում եմ լաց չլես,
Արտասունքով թաց չլես,

Մեռնիմխումարունքերուդ
Հէնց քնի որ բաց չլես:
Ես լիսաստղ եմ երկնքին
Շողքս տւած գետինքին,

Դեռ շատ կարօտ մանկզաս
Էս իմ չալ աչք, կեռ ունքին
Ես դուշ եմ թեւ դեղին
Ման կգամ եարիս գեղին:

Իմ ջանս դուրբան կտամ,
Իմ եարիս ցաւող տեղին:
Ես չորան եմ շուն չունեմ
Աշխարհումս տուն չունեմ

Սիրուն աղջիկ, խիղճ արի,
Առանց քեզ ես քուն չունեմ:
Էս գիրչեր երազ տեսայ,
Էս դգերը վարած տեսայ,

Նամուսդ կտրի, այ տղայ,
Սիրածդ տարած տեսայ:

Ամպել ա ամպի նման,
 Շաքար ու դանդի նման,
 Իմ նան ինձ հնց ա պահել,
 Ծալած թիւլբանդի նման:
 Թեղտած թեղիդ մեռնեմ
 Ման էկած տեղիդ մեռնեմ,
 Երեք օր ա տեսել չեմ,
 Նոր ծլած բեղիդ մեռնեմ:
 Քաքուլիդ կալին մեռնեմ
 Երեսիդ խալին մեռնեմ
 Լսել եմ կարդացուր ես,
 Սաղմոսիդ ծալին մեռնեմ:
 Լիսնեակը կեռու կամար
 Քիր մեռնիխալօրհամար,
 Յիսուս օր պաս եմ պահել,
 Իմ եարի ճամպի համար:
 Ծաղիկ եմ քաղել դիդին
 Ձիւան եարս ձեր գեղին
 Հել ու մեխակ շատ ունեմ,
 Հրէն տես եարիս ձեռին:
 Ծաղիկ քաղել եմ էս ա
 Մօրդ մատաղ, ջան փէսայ,
 Տղէքը շատ բան կ'աջան,
 Աղջկների ծէն էս ա:
 Ծաղիկ քաղեմ նարընջի.
 Այ տղայ, արի փնջի,
 Մէրըս քեզ աղջիկ չի տալ,
 Քանի ման գաս եաւընջի:
 Ծառի տակը հով քամի,
 Քանքուլդ քամին տանի,

Բա դու սարում, ձորում,
 Իմ քունը հնց կտանի:
 Մի ծառ ունիմ ծիրանի,
 Քամին թել թել կտանի,
 Արի գնանք դիւանի,
 Ում դամթն ա նա տանի:
 Ծիրան եմ քաղել նուշը,
 Պաղնցիս վարդի փուշը,
 Փունջկապեմ խալօրստամ
 Պաչ անեմ կարմիր թուշը:
 Ծիրանի ծառ, բարմիտար
 Ճղկներդ իրար մի տար,
 Ամէն մէջդ մանեւով,
 Դարդերս իրար մի տար:
 Կապոյտ մանիշակ թերի,
 Կարօտ եմ քաղցր սէրի,
 Սիրածը սիրծից հանողի
 Ազիդ որդին թող էրի:
 Ծմակին որս եմ արել,
 Աչքերս չորս եմ արել,
 Վատ խաբարդ լսել եմ,
 Արիւնը փորս եմ արել:
 Կանաչ տէփուր մէյտանա
 Տեսէք իմ եարս տանա,
 Ութ օր որ չեմ տեսել
 Սիրտս հնց կ'դիմանայ:
 Կարմիր վարդը ջամովէ,
 Սիրած եարը համով է,
 Էստի գօռի բան չկայ,
 Սավդէն իրա կամով է:

Կտիր կազնողին մեռնեմ
 Աղուխ բռնողին մեռնեմ,
 Էսօր իմ եարը տեսել չեմ
 Եարիս տեսնողին մեռնեմ:
 Կարովս քոչ ա գնում,
 Քօչ քօչի մէջ ա գնում,
 Էրնէկ էն քուր աչքին,
 Օխտն աղբօր մէջա գնում:
 Հա դէզը գնն, դէզը գնն
 Միջբիդ քիրմէն ետ գնայ,
 Դէնն արի թուշդ պաչեմ
 Ունքամէջդ ետ գնայ:
 Ուռի հս կռանալ մի
 Մեր դռնից հեռանալ մի,
 Թէ Աստուածդ կսիրես՝
 Սիրել ես մոռանալ մի:
 Հաց եմ թխել դարի ա
 Իմ եարը սաֆարի ա,
 Եար ջան սաֆրիդ մեռնեմ
 Խօսքերդ շաքարի ա:
 Հաց եմ թխել մշակին,
 Ետ եմ նստել դօշակին,
 Եարիս հէնց կարօտել եմ
 Ոնց որ վարդ մանիշակին:
 Չեռներդ ծափ ես տալի
 Քեանքուլդ թափ ես տալի
 Էսօր էգուց գցելով,
 Ամեն օր խափ ես տալի:
 Ձին ա եկել գերանին,
 Մեռնեմ Աւետարանին,

Ով իմ վատս կխօսի,
 Սև օձը խփի բերանին:
 Ձին ա եկել հալել ա,
 Փոսն ա դառել՝ սառել ա,
 Էդ քու բռնած բաները
 Ինձ մոմի պէս հալել ա:
 Չորովս ջուր է գնում,
 Հարցրէք սէր է գնում,
 Քէնին մ'անա արել,
 Սիրածին տես է գնում:
 Մանուշակ երկու թերի,
 Սիրողի սիրող կէրի,
 Ով իմ սիրածը ինձ չի տայ,
 Հոգին դժոխքում էրի:
 Մատուս կայ մատանի,
 Ակները վարդ ծիրանի,
 Ով ինձ սիրածէս հանի,
 Հոգին սատանէն տանի:
 Մերբաղումը նուանձառ,
 Չուխտ նունեքը վրէն թառ
 Քո ջուխտ նուանես մեռնեմ,
 Մինը քաղէր ու ինձ տար:
 Մի հար ունեմ անուշ ա,
 Հալած արծաթի շուշայ,
 Ժամի կողմից դուս էկաւ,
 Ես ասի թառլան դուշ ա:
 Մտիկ արէք էն դաղին,
 Պապտորիկ բողաղին,
 Իմ հօրն ու մօրը ինչ ասեմ,
 Ինձ տուին էս օլմաղին:

Հանդէն գաս տուն մտնես
 Իմ քցած տեղը մտնես,
 Ինձնից կէյրի եար բոնես
 Բէմուրագ հողը մտնես:
 Նանիջան, եսմարթկանեմ
 Գեշմարդիննամարդկանեմ
 Թէ փէսէդ հետս գայ ոչ,
 Կնստեմ ու դարդ կանեմ:
 Ոչխարս արեւ եմ բակը,
 Դէմ տուել սէլի աղը,
 Ով իմ սիրածս առնի,
 Չվէլի գլխի թաղը:
 Ուռի ծառին բար չի ըլի,
 Առանց քեարու կարչիըլի
 Սիրտը որ կայ շուշայ ա,
 Կոտրած սրտին ճարչիըլի:
 Սիրել եմ սերն երեսին
 Ռեհան թերն երեսին,
 Ով իմ սիրածս ինձ չի տայ
 Աստծու կերն երեսին:
 Չափարի տակ չափ կտամ
 Քիտով ոսկի թափ կտամ,
 Ես իմ պզտիկ տեղովս,
 Քեզպէս շատին խաբկտամ:
 Չիթ եմ հագել սազով ա,
 Գլխիս մազը գազով ա,
 Հալբաթ ես էլ նազ կանեմ,
 Երբոր եարս նազով ա:
 Չիթմին թանէդ հինմաշա
 Ունքերդ դալամբաշ ա,

Աղջիկ ի՞նչ ես միտք անում,
 Իմ ջանս քեզ փէշքաշ ա:
 Պուճուր աղջիկ լաւ աղջիկ
 Դու ինձ համար ցաւ աղջիկ
 Ես քեզ թաքուն սիրեցի,
 Էս ով արաւ չաւ, աղջիկ:
 Պուճուր աղջիկայ մէրը,
 Խօսք տւեց մեծ ախպէրը
 Երեք տարի սիրեցիք,
 Չտւեց անսիրտ հէրը:
 Ռեհան ունեմ լէն տերև
 Պաչեմ ունքերիդ վերև,
 Արի ցաւիս դեղ արա,
 Հէնց դու ըլես ումը արև:
 Չաղացիս դուռը փոս ա,
 Քար կգցեմ կխօսայ,
 Խօսն, խօսալուդ մեռնեմ,
 Իմ նանի աղիդ փէսայ:
 Չաղացիս դուռը տաշած
 Աղլխիս գիւրը մաշած,
 Մեռնեմ սիրուն ունքերիդ
 Ոսկէ դալամով քաշած:
 Չաղացս էրկու դոնի,
 Բարձ բերէք եարս կոնի,
 Ես դու մի բաղում լինենք
 Ես չինարի, դու նոնի:
 Չաղացս ման եմ տւել,
 Սիրել եմ, ջան եմ տւել
 Օխտ տարի սէրութենը,
 Մէկ օր պայման եմ տւել:

Քանաքըռ բանձր տեղ է
 Չուրը հրեանդի դեղ է,
 Սիրածը սիրածին չեն տալ
 Էս ինչ անօրէն գեղ ա:
 Ծառերի հովին դուրբան
 Եկ տղի բոյին դուրբան,
 Երկու օր է չեմ տեսել,
 Տեսնողի աչքին դուրբան:
 Ջրի էն կուռը, էս կուռը
 Քաղել եմ դաստայ նուռը,
 Սիրել եմ տանել պտեմ,
 Թող տանեն շահի դուռը:
 Ջրի վրայ սազ պտի,
 Իմ օրդակը դազ պտի,
 Ես որ կամ թառլան դուշեմ
 Իմ եար Շահարաս պտի:
 Սարերի սինձ ի՞նչ կանեմ
 Կաթնով բրինձ ի՞նչ կանեմ
 Թող իմ սիրած ինձի տան,
 Ոսկի արծաթ ի՞նչ կանեմ:
 Սարերուժը տուն ունեմ
 Միջին ոսկի սին ունեմ,
 Ա՛յ շան տղայ քիչ խօսայ,
 Քեզ պէս հազար շուն ունեմ:
 Սև եմ, սևաւոր դուշ եմ,
 Դեղին թևաւոր դուշ եմ,

Աղջիկ Աստուածն էլ գիտէ,
 Շաքարից քաղցր նուշ եմ:
 Մի բաղ ունիմ դրախտա
 Ծաղիկ ծաղկունքիվախտա
 Գէշ աղջիկ սիրուն տղայ
 Էս էլ մի ուրիշ բախտ ա:
 Սարերին գարուն կգայ
 Սև սրտիցս արուն կգայ,
 Ինչ կանեմ էնպէս եարը,
 Պըտուի տարուն կըգայ:
 Նշի ծառին նուշ կըլի
 Վարդի ծառին վուշ կըլի,
 Երանէկ էն աղջկան
 Սիրած եարին թուշ կըլի:
 Աղջիկ դու հուր ես մուրես
 Էս ծարաւ եմ դու ջուր ես
 Էս համբարձման գիշերը,
 Քեզ ման կըզամ դու սերես:
 Վարդի վրէն փուշ կլի,
 Վարդի հոտ անուշ կլի,
 Քօրփայ օրից սիրածս,
 Եարաբ ինձ Խրթ թուշ կլի:
 Տեղ եմ գցել փոթ կգայ,
 Բարձ եմ դրել սօթ կտայ,
 Մեռնեմ միջի քնողին,
 Անուշ խնկան հոտ կգայ:



Յ Ա Ն Կ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ

Ազատն Աստուած այն օրից	60
Աղօթարանը բացուեցաւ	91
Ազնիւ ընկեր մեռանում եմ	25
Առ Հայաստան. Ողջոյն ընդ քեզ	34
Ալագեազին. Մե սուրբ սուրբ	20
Առաւօտեան երգը. Ա՛յ մարդ այսօր	63
Անի քաղաք նստեր կուլայ	51
Առ ազգս. Ազգ իմ որքան նկուն ֆասս	127
Անթիւ դարեր թափառեցի	155
Ահա մայրիկ ես գնում եմ	107
Ա՛յ սև ամպեր վայ սև ամպեր	131
Անխղճօրէն մեզ դատում են	156
Ազգային օրհներգը. Տէր կեցո՞ղու զՀայս	168
Բամփօրոտան բարձունս	56
Բարով ես եկել ծիծեռնակ սիրուն	158
Բարի գեղեցիկ առաքինի ընկեր	128
Գարուն է եկել նախշուն թեւերով	67
Գարուն. է՛յ, կանաչ ախպեր	120
Դու զձՎ խնդրես մայր իմ անուշ	64
Երբոր բացւին դռներն յուսոյ	14
Երազ. Ես լսեցի մի անուշ ձայն	19
Եղբայր եմք մենք. Ի բիւր ձայնից	43
Ես հանեցի սուր պատեանից	88
Երբ ալէկոծ ծովի վրայ	130
Ես մէկ ծառ եմ ծիրանի	176
Զինուած պատրաստուած Զէյթունի քաջեր	83
Զէյթուն անկախ դու աշխարհիկ	92
Զարթիր սիրտ իմ վշտահար	93
Զինուորի երգը. Թո՛ւր իմ նժոյց	119
Զարթիր լաճ, մեռնեմ քեզի	141

էր հեռանաս ըս հայրենի աշխարհից	66
Ընկերներին. Լուռ գիշերին	78
Ընկերներըս վաղ են մեռել	169
Թիկունքդ լայն թեւերդ ոյժգին	61
Թէ հայրենեաց պսակադիր	68
Թաղումս քաջ որդոյն. Ոչ փող զարկինք	79
Թէ իմ հայրենեաց քնար սգաւոր	95
Թէպէտ վտար քաղքէ քաղաք	118
Թող երգէ բլբուլ	127
Թող փչէ քամին պաղ-պաղ երեսիս	151
Թէ իմ ալևոր հերքս սենային	164
Ինձ համար չէ գարնան գալը	28
Իմ սէրը. Միրում եմ այնպէս որպէս	62
Իմ երգը. Հեռացել եմ իմ հայրենի աշխարհից	71
Իմ մահը. Եթէ դժգոյն մահու հրեշտակ	77
Իմ իրձս. Միրտս ուրախ կեանքս անվրդով	102
Ի՞նչ անենք. Ամօթ այսպէս ասողին	145
Իսլամների գոռ վաշտերը կատաղի	162
Լուեց. Ամպեր եկան ծածկեցին	88
Խաղաղ դաշտի որդիք լեռները ելնենք	90
Խաւարել եմ ինչպէս գիշեր	161
Ծիծեռնակ, Ծիծեռնակ դու գարնան	45
Կռունկ ուստի՞ կուզաս ծառայ եմ ձայնիդ	12
Կարկուտ տեղաց Խանասորի դաշտումը	33
Կռունկին. Բարով եկար սիրուն կռունկ	59
Հայրիկ. ասաց դուստր հօրը	21
Հայրիկ, հայրիկ քո հայրենիք	55
Հիմի՞ էլ լսենք եղբայրք հիմի՞ էլ	73
Հիմի՞ էլ խօսենք, եղբայրք հիմի՞ էլ	75
Հայդուկի նշանածի երգը	81
Հայրենիք սրբազան իմ սիրուն աշխարհ	94
Հազար երանի քեզ, մանուկ անբիծ	104
Հայդուկի երգերից. Ես ընկած եմ	116
Հայաստանի աւետարեր	130
Հայդուկներ Վանայ ծովի վրայ	170
Զայն տուր ո՞վ ծովակ ի՞նչու լուռ ես	8

Չախորդ օրերը ձման նման.	50
Չայնը հնչեց էրզրումէն.	97
Մեր հայրենիք թշառ անտէր.	9
Մայր Արաքսի ափերով.	16
Մի գեղեցիկ պարզ գիշեր էր.	76
Մայրիկիս. Հայրենիքէս հեռացել եմ	98
Մանկութեան օրեր երազի նման	119
Մշեցու հեկեկանքը. Վզներս ճկած.	138
Մասիսի ճակտին ամպրոպ պատուեցաւ.	147
Նպատակիս գէթ մի մասը կատարւէր.	71
Նոր-տարի. Երնէկ թէ այս նոր-տարին.	135
Նպատակիս հասնեմ միայն.	152
Շարքի. Այսքան տարի դու ննջեցիր	32
Շարքի. Դեռ գիշեր է առաւօտ չէ.	36
Ո՛հ ինչ անուշ և ինչպէս զով.	8
Ո՛վ դու բարեկամ այրուած սրտերու	33
Որսկան ախպէր սարէն կուգաս	35
Ողջոյն տէք իմ հայրենեաց	112
Պարզիր աղբիւր պարզիր.	24
Սիրեցէք միմեանց: Ես տաճար մտայ	136
Տարոնացի պանդխտի երգը. Մայիս ամսւայ.	129
Սուրբ հայրենիքս երգել կուզէի	40
Յուրտը փչեց ձմեռ սաստիկ.	99
Քոյրերիս մէջ ես սգազգեաց.	57
Օտար երկիր օտար պանդուխտ	105

ՌԱԶՄԻ ԵՐԳԵՐ

Ազատութեան այն վառ սէրը.	87
Արիք եղբայրք միանանք	153
Բաւ է եղբայր վիզը ճկել	144
Ես կուզեմ կուել. Հերիք է մայրիկ.	153
Ի զէն հայեր ի սուր և ի հրացան.	135
Կուեցէք աղբրք կուեցէք քաջքաջ.	80
Հայդուկի երգերից. Կովկասի քաջեր	84
Հերիք որդեանք այսքան տարւայ	89
Հայդուկի վերջին ուխտը	109

Հայդուկի երգերից. Դաշնակցական խումբ	146
Հայրենեաց սիրոյ համար	148
Հայդուկի երգերից. Ես գնում եմ.	155
Հայդուկի երգերից. Մութ գիշերին	166
Մենք պէտք է կուենք և ոչ լաց լինենք	93
Մենք անկեղծ զինուոր ենք	142
Մշեցի մօր աղաչանքը.	148
Նւէր հայդուկին	154
Սերոբ Փաշի կոչը. Ով որ քաջ է.	149
Տուր ձեռքդ եղբայր ժամ է շարժելու	24
Տալուորիկցի կարիճ եմ խորթ.	41
Քայլենք. Յուսահատուել մեղք է ընկեր.	80

Չ Օ Ն Ե Ր

Խաղաղութիւն ձեզ սուրբ մարտիրոսներ	7
Անդրանիկին. Իբրև արծիւ սաւառնում ես	37
Պետոյի յիշատակին. Գարահիսար լերան	39
Արաբօի երգը. Հնարագէտ լինենք.	53
Կորկոտեանի երգը. Ձէնքերս տուր մայրիկս.	98
Քամառ-Քաթիպայի յիշատակին.	101
Սազօի երգը. Այնօր որ քեզ տեսայ	115
Գէորգ Չառուշի երգը.	123
Համազասպի երգը. Ծագեց արև	124
Ա. Մալոյեանի յիշատակին. Էն արծիւ էր	125
Լևոնի երգը. Մասնայ գաւառում	126
Արամի երգը. Բանտիս դռներն էին	126
Գուրգէնի յիշատակին. Գլխալէն ջուր է	128
Քրիստափորին. Դու անցար հերոս	133
Խանի երգը. Լուսին չկար մութ գիշեր էր	134
Մուշեղի երգը.	140
Բաֆֆու մահը.	150
Տուրբախի երգը. Ուրեմն մնաք բարով.	157
Գարեգնի երգը. Հայաստանի փառք	159
Սերեմջեանի յիշատակին	163
Աշոտ թաթուլի երգը	165

Օ Ր Օ Ր Ն Ե Ր

Բլբուլն զարթնել է	26
Արի իմ սոխակ թող պարտէզ	49
Պզտիկ սղայ չեմ օրօրեր	143
Նազէի օրօրը. Քնիր իմ բալիկ	160
Ննջեա որդիս անուշ քնով	169

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

Արազն եկաւ լափին տալով	13
Ա՛խ իմ սիրական ինձմէն հեռացար	48
Աղլուխս կորաւ ձեր դուռը	48
Բոյդ բարձր սալքի չինար	161
Գիշեր ցերեկ կը հառաչեմ անի օրիորդ	69
Գիշեր ցերեկ մորձոքում եմ	104
Գնաց, գնաց սիրելիս գնաց	111
Դարդս լացէք սարի սմբել	15
Դու չես հաւատում թէ քեզ եմ սիրում	54
Կապոյտ երկնքում աստղեր են փայլում	106
Հայոց աղջիկներ ձեր հոգուն մատաղ	30
Հանգիստ իմ անուշ անցար գնացիր	39
Համեստ աղջիկ ինձ մի տանջիր չարաչար	109
Ղարսեցոց երգը. Ես վերէն կուզայի	52
Մէկը չեղաւ որ իմանար դարդերս	27
Շուշան ջան քի համա	38
Պաղ աղբիւրի մօտ կանգնած մի աղջիկ	58
Սիրականի գանգատ, Ես քեզ սիրի	29
Սև աչերէն շատ վախեցիր	38
Սիրում էի երբեմն քեզ	53
Սիրեցի եարս տարան	107
Սևիկ աչերը, Վրդովեցիր խաղաղ կեանքս	121
Սիրոյ տաղերից. Առաւօտուն ելամ	177
Սիրուններ միք նեղանայ	178
Քո փափազով	173
Օթթը սարով հեռու քեզնէն	108

ԽԱՌՆ ԵՐԳԵՐ

Ախ մեր սիրտը լիք դարդ ու ցաւ	44
Կենաց բաժակ. Եղբայրք մի շուրջ	45
Քրդական մարշ. Լօ, լօ, լօ, սէգ սիփանայ	46
Մանուշակին. Ո՛հ մի ողբալ	58
Հայոց գինի. Բաժակներ անուննք եղբարք	65
Արբեցողի կտակը	66
Շխալու մահը	82
Տրտունջք. Է՛հ քնք բարով	85
Հեռաւոր երկիր նստած դու նժդեհ	86
Սև ամպերէն ամպի սրտէն	102
Մաճկալ ես բեզարած ես	103
Հովերն առան սմբ ու դմբեր	105
Չմեռն անցաւ եկաւ գարուն	110
Արև իջաւ սարի գլխուն	111
Մութ գրկած գետ ու զետիսն	113
Թողէք ողբամ իմ դառն ցաւերը	114
Թաթուլի քրոջ երգը	114
Փախիր այժեամ փախիր	117
Ալ ու ալան ես հագել	122
Աղասու երգը. Սար ու ձոր ընկած	132
Բայաթի: Արագ տակզ մի փորե	137
Մանկական թոթովանք	139
Դարդոս եմ դարդաբաշ եմ	140
Խնուսից գալով հայ զինւորները բաջ	142
Կալանաւոր. Ա՛խ բաց արէք	166
Նւէր հնչակեան զինւորներին	167
Բողոք բաղդից. Կարդացէք իմ բաղդի	173
Կէս գիշերին գետի ափին	174
Ծաղիկ էի նորբարոյքով	175
Շղարշ ամպերն երկինքն առան	176

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ

Իմ գլխու ֆութէն կիտամ	179
Հօյ նազան իմ նազան իմ	180

Հով արէք սարեր ջան, հով արէք	181
Լուսնակն անուշ հոգն անուշ	182
Ծամերդ ծամերդ	182
Էս գիշեր լուսնակ գիշեր	183
Հաւար Զուլօ մաղաթ Զուլօ	184
Սոնա եար Սոնա եար	185
Շողեր ջան	186
Խնկի ծառը	187
Խանուժ Եւա ջան	188
Սիրոյ երգերից. Պարտիզում վարդեր բացւած	189
Մանանի երգը. Արի էյ, Մանան	189
Աբարան գնացող եղբայր	190
Հաբիրբան	191
Դուրում բաշնայ դուրբան	192
Սուրբ Կարապետ քո վանքը	193
Տարան տարան գիմ եարը	194
Ճանապարհս ընկաւ Տփլիս	195
Թալիշու ճամբէն դուզ ա	156
Ջան մարալ ջան	196
Գացի արտեր բոնի լոր	197
Տուն արի տուն արի	198
Գացէք տեսէք որն է կերել զէծ	198
Եօթն օր եօթ գիշեր	200
Արի սիրուն, գնա սիրուն	202
Ծիրանի ծառ բար մի տայ	203
Շարաֆով թուխ փոշով աղջիկ	204
Հողալլօ ջան հողալլօ	205
Խղճուկի լացը. Իմնլ պըտի էններ	206
Ոլոր մոլոր մնացի	206
Ելէք մանչեր կէք քոչերը բառնանք	207
Իմ չինարի եար	209
Վարդ կօշիկ	210
Ինչինար եար ջան	210
Ջան գիւլումներ (100 տուն)	211



6~

ՀՀ Ազգային գրադարան



NL0389504

72.915